

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
2010

ՀՏԴ 941(479.25):323
ԳՄԴ 63.3 (2Հ)+66.3
Հ 391

Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները
Հ 391 Հարավային Ռուսաստանում. -Եր.: Նորավանք, 2010. - 220 էջ:

Գրքում ուսումնասիրվել են Հարավային Ռուսաստանի (ՀՌ) հայության բազմաշերտ խմբերը և նրանց ինքնակազմակերպման հարցերը: Հետազոտությունն ամփոփում է տեղեկատվություն ՀՌ հայության ինքնակազմակերպման պատմական, ներկա խնդիրների, ընդհանուր տեղեկատվական դաշտի, ինչպես նաև վիրտուալ ցանցերում, պետական կառավարման, ֆինանսական, մտավոր և կրթական ոլորտներում հայերի մասնակցության մասին:

Գիրքն ուղղված է ինչպես Հայության հարցերով զբաղվող փորձագիտական հանրությանը, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակներին:

ՀՏԴ 941(479.25):323
ԳՄԴ 63.3 (2Հ)+66.3

Գիրքը հրատարակվում է

ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի
փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

Հեղինակային խմբի ղեկավար

Աննա Ժամակոչյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական
հետազոտությունների կենտրոնի ղեկավարի
տեղակալ, ավագ փորձագետ

Հեղինակային խումբ

Դիանա Գալստյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

Միխայիլ Սավվա

Քաղաքագիտության դոկտոր, Կուբանի պետական
համալսարանի պրոֆեսոր, «Հարավային
տարածաշրջանային ռեսուրսային կենտրոնի»
դրամաշնորհային ծրագրերի տնօրեն, Կրասնոդարի
երկրամասի Ներքին գործերի գլխավոր վարչությանը
կից Հանրային խորհրդի նախագահ

Սամվել Մարտիրոսյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

Վարուժան Գեղամյան

«Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական
հետազոտությունների կենտրոնի փորձագետ

Տիգրան Թավադյան

«Երկրամաս» թերթի գլխավոր խմբագիր,
Կրասնոդար, Ռուսաստան

Տիգրան Ղանալանյան

«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	6
1. ՎԵՐԱԲՆԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.....	10
2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԵՐՆ ԸՍՏ ՎԵՐԱԲՆԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ.....	19
3. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ.....	24
4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՑՈՒՌՔՅԱՆ ԶԼՄ-Ն ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....	42
5. ՀՌ ՀԱՅԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ.....	55
6. ՀԱՅԵՐԸ ՀՌ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԶ. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ.....	63
7. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՌ-ՈՒՄ.....	67
8. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՆԵՐՈՒԺԸ ՀՌ-ՈՒՄ.....	81
9. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ.....	110
10. ՀՌ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ.....	121
11. ԿՐԱՆՈՂԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ. ԸՍՏ ՌԴ ՓՈՐՁԱԳԵՏ Մ. ՍԱՎՎԱՅԻ.....	124
12. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.....	171

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ Ա1. Ռուսաստանի հարավի (Հարավային դաշնային օկրուգ (ՀԴՕ) և Հյուսիսկովկասյան դաշնային օկրուգ (ՀԿԴՕ) հայկական կառույցները.....175

Աղյուսակ Ա2. «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) կառույցի մասնաճյուղերը.....178

Աղյուսակ Բ1. Հայության մտավոր ներուժը Հարավային դաշնային օկրուգում. տարածքային ցանկ.....180

Աղյուսակ Բ2. Հայության մտավոր ներուժը Հյուսիսկովկասյան դաշնային օկրուգում.....206

Աղյուսակ Գ1. Տեղեկություններ Կուբանի մարզի եկեղեցական-ծխական ուսումնարանների մասին 1894թ. համար.....212

Աղյուսակ Գ2. Տեղեկություններ Կուբանի գորային գիմնազիայի (ք. Եկատերինոդար) սովորողների ազգային կազմի մասին 1886թ.....212

Աղյուսակ Գ3. Տեղեկություններ Կուբանի մարզի Բատալյաչայի և Եյսկի գավառների ռուսական ուսումնական հաստատություններում սովորող հայ գրիգորյանականների մասին 1895-1896թթ. տվյալներով.....213

Աղյուսակ Գ4. Արմավիրի «Երեխաների հոգաբարձության միություն» իգական գիմնազիայի վարժուհիների թիվը 1901-1912 ուստարիներին.....214

Աղյուսակ Գ5. Կուբանի-Սևծովյան մարզի բնակչության (ըստ ազգության) գրագիտությունը՝ 1920թ. մարդահամարի համաձայն.....214

Աղյուսակ Գ6. Ժողկրթբաժնին ենթակա ազգային դպրոցների թիվը Կուբանի-Սևծովյան մարզում 1921թ.....215

Աղյուսակ Գ7. Արմավիր քաղաքի հայկական դպրոցները 1921թ.....216

Աղյուսակ Գ8. Կրասնոդար քաղաքի հայկական դպրոցները 1921թ.....216

Աղյուսակ Գ9. Հայկական դպրոցների ցանցը Կրասնոդարի երկրամասում 1967/1968 ուստարում.....217

ՆԱԽԱԲԱՆ

Հայության հարցերով մտահոգ յուրաքանչյուր մարդու, առավել նաև փորձագետների համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ռուսաստանի հարավային շրջաններում արդեն շուրջ 300 տարի հաստատված հայության խնդիրները: Այս հայկական համայնքներին հաջողվել է վերաբնակիչներից դառնալ որոշ բնակավայրերի հիմնադիրներ, բարենպաստ ժամանակներում՝ տնտեսական շարժիչ ուժ և մշտապես՝ մշակութային փոխներթափանցման պարարտ հող: Այս համայնքներն անցել են բարենպաստ և ոչ այնքան նպաստավոր ժամանակների միջով, հաջողել են իրենց գործում, երբեմն դարձել ինովատոր, ձեռք բերել հարուստ կապիտալ և ներդրել երկրի ու հայ համայնքի հանրային կյանքի զարգացման համար, երբեմն էլ կորցրել են դիրքերը՝ ապրելով ժամանակին օրինաչափ վերելքներ ու անկումներ:

Ռուսաստանի հարավում հայերի հաստատման ընթացքը բազմափուլ է եղել: Այստեղ տարբեր ժամանակներում հայեր են վերաբնակվել Հայաստանի և՛ Արևմտյան, և՛ Արևելյան շրջաններից՝ ինչպես հալածանքներից, այնպես էլ սոցիալ-տնտեսական խնդիրներից դրդված: Այս հայկական համայնքների մի մասը մշակութային և կրոնական փոխակերպումների է ենթարկվել, որոշ մասը կորցրել է հայկական ինքնությունը, սակայն մեծ մասի համար ՌԴ քաղաքացու կարգավիճակը խոչընդոտ չի հանդիսացել հայկական ինքնագիտակցության պահպանման համար: Հարավային Ռուսաստանի (ՀՌ) համայնքն առանձնահատուկ է նաև նրանով, որ ներքին միգրացիայի

շնորհիվ հաճախ այստեղից է սնվել ՌԴ մեծ քաղաքների մտավորական հայությունը:

Հայերը Ռուսաստանի Հարավային դաշնային օկրուգում երկրորդն են թվաքանակով՝ ռուսներից հետո, իսկ ընդհանուր հարավային տարածաշրջանում գրավում են չորրորդ տեղը՝ ռուսներից, չեչեններից և ավարներից հետո: Սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում հայերի ավանդաբար նշանակալի ներգրավվածությունը, այնուամենայնիվ, դեռ հեռու է կազմակերպված գործոն լինելուց: Ինքնակազմակերպման համար խիստ անհրաժեշտ ընդհանուր տեղեկատվական դաշտը ևս ձևավորված չէ: Սակայն, մյուս կողմից, այս ուղղությամբ դրական գործընթացներ են տեղի ունենում, որոնք պայմանավորված են ՌԴ հայության զարգացման նոր փուլի տրամաբանությամբ և համահունչ են հայաստանյան կողմի ակնկալիքներին:

Ռուսաստանի հարավի հայության առանձնահատկություններն ու տեղի ունեցող գործընթացներն այս տարածաշրջանի հայկական խմբերի ուսումնասիրությունը դարձնում են ուշագրավ, ինչպես նաև ուսանելի, քանի որ տեղի հայությունը, իր երկարատև կեցությամբ և խիստ բազմազանությամբ հանդերձ, կարողացել է պահպանել հայկական դիմագիծը:

Այս նկատառումով է, որ ՀՀ Միությունքի նախարարության նախաձեռնությամբ և հովանավորությամբ «Նորավանք» ԳԿՀ-ն ձեռնարկեց Հարավային Ռուսաստանի հայության պատմական և արդի կյանքի առանձնահատկությունների շուրջ սույն ուսումնասիրությունը: Գիրքը ներառում է Ռուսաստանի հարավը կազմող Հարավային դաշնային օկրուգի և Հյուսիսային Կովկասի

դաշնային օկրուգի¹ հայության վերաբնական պատմությունը, առկա խմբերի առանձնահատկությունները, ինքնակազմակերպման, հայկական լրատվամիջոցների զարգացման, վիրտուալ ցանցերում հայերի մասնակցության, ինչպես նաև պետական կառավարման, ֆինանսական և կրթական ոլորտներում հայկական ներկայության հարցերը:

Պատկեր 1. Ռուսաստանի հարավային տարածաշրջանը (ՀԴՕ և ՀԿԴՕ)



¹ 2010թ. հունվարի 19-ին ՌԴ նախագահ Դ.Մեդվեդևի հրամանագրով Հարավային դաշնային օկրուգից (ՀԴՕ) առանձնացվեց Հյուսիսային Կովկասի դաշնային օկրուգը (ՀԿԴՕ), որոնք միավորված կերպով գրքի շրջանակներում անվանում ենք Հարավային Ռուսաստան կամ Ռուսաստանի հարավային տարածաշրջան (տե՛ս *Պատկեր 1*):

Հետազոտության շրջանակներում «Նորավանք» ԳԿՀ փորձագետները մեծապես օգտվել են «*Hoeb Kовчег*» (խմբ.՝ Գ.Անիսոնյան), «*miasin.ru*» (ղեկավար՝ Գ.Ղասաբով), «*Еркрамас*» (խմբ.՝ Տ.Թավադյան), «*Хачкар*» (խմբ.՝ Ք.Մխիթարյան) և Ռուսաստանում գործող հայկական այլ ռեսուրսների կայքերից: Այս ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել «Հայազգ» հիմնադրամի (ղեկավար Ս.Սայադով) «*ru.hayazg.info*» կայքի հանրագիտարանային տեղեկությունները: Միաժամանակ «Նորավանք» ԳԿՀ-ն համագործակցել է ՌԴ գործող փորձագետներ Տ.Թավադյանի և Մ.Սավվայի հետ՝ տեղում կատարվող հետազոտությունների միջոցով հայ համայնքների խոր և արդիական պատկերը բացահայտելու նպատակով: Հետազոտության հեղինակների աշխատանքներին խորհուրդներով մեծապես աջակցել և ուղղորդել է «Նորավանք» ԳԿՀ տնօրեն Գագիկ Հարությունյանը: Հեղինակային խումբը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց պատրաստակամությամբ, ներդրած ջանքերով օժանդակել են գրքի ստեղծման աշխատանքներին:

Աննա Ժամակոչյան

1. ՎԵՐԱԲՆԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի հարավի հայկական համայնքը հիմնականում ձևավորվել է 18-20-րդ դդ.՝ գլխավորապես Իրանից և Թուրքիայից (Արևմտահայաստանից) գաղթածների հաշվին: Բայց հայտնի են նաև հայերի ավելի վաղ գաղթի փաստեր, որոնք վավերագրված են արդեն 11-12-րդ դդ. Հարավային Դաղստանում և Հյուսիսարևմտյան Կովկասում: 14-16-րդ դդ. հայերը հոծ բնակություն ունեին Դերբենտում և Շեմախում, որտեղից Աստրախանի միջոցով առևտուր էին անում Ռուսաստանի հետ: 1728թ. Դերբենտում է հաստատվում Լեհաստանից Ռուսաստան տեղափոխված հայերի մի մասը, և 18-րդ դարի վերջին քաղաքում 100 հայ տուն էր հաշվվում:

Մինչև 19-րդ դ. սկիզբն իրանահայերը հիմնականում տեղափոխվում էին Թերեքի ավազան (որտեղ 1735թ. հայ վաճառական Սաֆար Վասիլը հիմնում է մետաքսի գործարան, որի շուրջ էլ ձևավորվում է հետագայում Շելկոզավոդսկոյե անվանումն ստացած ավանը), ինչպես նաև Կիզլյար. մինչ քաղաքի ի հայտ գալը հայերին դեռ 1724թ. Պետրոս I-ի հրամանով թույլ էր տրվել հաստատվել այդտեղ, և 18-րդ դ. 30-ական թթ. այնտեղ է հաստատվում Դերբենտի հայերի մի մասը:

Հայերի մի ավելի մեծ խումբ՝ մոտ 3,5 հազար մարդ, 1797թ. անցնում է Կովկասյան գիծը Բաքվի, Դերբենտի և Ղուբայի խանություններից՝ հաստատվելով Կիզլյարում, Մոզդոկում և դրանց շրջակայքում: Արհեստավորներին և վաճառականներին թույլատրվում է նաև Ստարի Մաջարի տեղում հիմնել Սուրբ խաչ քաղաքը (ներկայիս Բուդյոնովսկը): 1799թ. Պավել I-ի հրամանով

Կիզյար և Մոզոզի քաղաքներում է հաստատվում Ղարաբաղի հայերի մի մասը: 1806թ. Կիզյարում ապրում էր ավելի քան 5,4 հազար, Մոզոզկում՝ ավելի քան 0,7 հազար հայ (1820թ.՝ 1,3 հազար մարդ): Հայերի մի մասն ապրում էր Թերեք և Կումա գետերի ավազանների բնակատեղիներում: Կիզյարում, որը մեծ դեր է խաղացել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների տնտեսական կյանքում, հայերը, որոնք 19-րդ դարակեսին կազմում էին նրա 11 հազարանոց բնակչության ավելի քան կեսը, գլխավորապես զբաղվում էին առևտրափոխանակությամբ, գործում էր հայկական շուկան, կար հայկական ավան: Մոզոզկի հայերի մեջ շատ էին վաճառականները, որոնք առևտուր էին անում Աստրախանի, Նիժնի Նովգորոդի և այլ քաղաքների հետ: Հայերը զբաղվում էին նաև հողագործությամբ և անասնապահությամբ: 19-րդ դարակեսին Մոզոզկից ոչ հեռու, Եդեսիայում հայերի մեծ (ավելի քան 1,5 հազար մարդ) ավան է հիմնվում, որի բնակիչները զբաղվում էին հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ (ցորեն, կորեկ), այգեգործությամբ, խաղողագործությամբ, մետաքսագործությամբ:

Արևմտյան ադիգների մեջ էր ապրում ժամանակի առումով Ռուսաստանի հարավում հայտնված հայերի ամենահին՝ այսպես կոչված չերքեզահայերի խումբը: Ըստ ավանդության, առաջին վերաբնակները եղել են հայ ռազմիկները, որոնք Չերքեզիայի լեռներում հայտնվել են 11-12-րդ դդ. և պատվով են ընդունվել տեղի բնակչության կողմից: Նրանք շուտով բարձր դիրք են զբաղեցրել նրանց դասային հիերարխիայում: Ամուսնանալով չերքեզուհիների հետ՝ հայերը ցրվել են Հյուսիսարևմտյան Կովկասի բավական մեծ տարածքով մեկ:

Նրանց հիմնական զբաղմունքն առևտուրն էր, ինչի շնորհիվ էլ մշտական կապ էին պահպանում Ղրիմի հայկական գաղութի հետ: Խումբը համալրվում էր ի հաշիվ Հայաստանից և հիմնականում Ղրիմից ու Փոքր Ասիայից եկածների: Չերքեզների հետ ինտենսիվ շփումները կյանքի տարբեր ոլորտներում, որոնք հաճախ ուղեկցվում էին կունակական և ատալիկական հարաբերությունների հաստատմամբ, մեծ տարածության վրա ցրիվ ապրելու և միջերիկական ամուսնությունների պայմաններում հանգեցրին այն բանին, որ չերքեզական մշակույթի տարրերը ոչ միայն ներթափանցեցին նրանց կյանքի բոլոր ոլորտները, այլև գերակշռող դարձան անգամ լեզվի հարցում: Լիակատար ուծացմանը խոչընդոտում էին հավատարմությունը Հայ Առաքելական եկեղեցուն և սոցիալական բարձր կարգավիճակը: Գիտակցելով իրենց տարբերությունը մնացած հայերից՝ չերքեզահայերը, այնուամենայնիվ, իրենց անվանում էին «երմելի» (հայեր), իրենց շրջապատող մյուս ժողովուրդները՝ նույնպես:

18-րդ դ. երկրորդ կեսին Հյուսիսարևմտյան Կովկասի սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխության հետ կապված, որը Ռուսաստանի և Թուրքիայի միջև ազդեցության համար պայքարի ասպարեզ էր դարձել, Ղրիմի խաները, ջանալով ամրապնդել այստեղ իրենց դիրքերը, սկսեցին լեռնցիների մեջ իսլամ տարածել, ինչի հետևանքով չերքեզահայերին սկսեցին հետապնդել իրենց հավատի համար: Դժգոհություն էին առաջացնում նաև չերքեզահայերի լայն առևտրային կապերը ռուսների և Կուբանի ռուսական կողմում ապրող հայերի հետ: Ինքնապաշտպանության նպատակով չերքեզահայերը

միավորվեցին առանձին աուլներում, որոնցից առավել հայտնիներն են Գյաուր Խաբլը, Եղերուխայր, Ադիգոյր, Խատուկայր և այլն: 18-րդ դ. վերջին և հիմնականում 19-րդ դ. առաջին կեսին նրանք միաժամանակ վերաբնակվել են ռուսական տարածքներում՝ Նոր Նախիջևանում, Լիսոգորսկում, Գրիվենսկայա, Պերեյասլավսկայա ստանիցաներում, Նովոռոսիյսկում, Եկատերինոդարում, Սոգորսկում, Կիզլյարում: Վերաբնակների հիմնական մասը 1839թ. հիմնում է առանձին Հայկական աուլ, որը 1841-ից սկսեց կոչվել Արմավիր՝ պատմական Հայաստանի մայրաքաղաքներից մեկի անունով: 1840թ. այստեղ չերքեզահայերի 400 ընտանիք էր հաշվվում: Հայկական խոշոր ավան էր նաև Կարոբետ Տալդուստինի աուլը (47 տուն, 325 բնակիչ), որը գտնվում էր Լաբի գետի ձախ ափին: Չերքեզահայերը բնակություն էին հաստատում նաև կազակական ստանիցաներում՝ Պաշկովի, Պրոչնի օկոպի, Բրյուխովեցկի և այլն: Չերքեզահայերի թիվն Արմավիրում մի քանի տարի անց հասնում է 3,5 հազարի: 19-րդ դարավերջին Արմավիրը դարձավ Հյուսիսային Կովկասի գլխավոր արդյունաբերական և առևտրային կենտրոններից մեկը: 1847թ. Արմավիրում բացվեց հայկական առաջին արական դպրոցը, 1871թ.՝ ևս երկու դպրոց՝ արական և իգական:

Բնակություն հաստատելով Արմավիրում՝ չերքեզահայերն առաջին տասնամյակներին պահպանեցին լեռնցիներից փոխառած մշակույթի հիմնական տարրերը: Բայց չերքեզահայերի վրա չերքեզական ֆոլկլորի թողած ուժեղ ազդեցության պայմաններում, Արմավիր տեղափոխվելուն զուգընթաց, սկսում են նկատվել նաև հայկական ֆոլկլորի որոշ երանգներ: Հետագայում, Արմավիրում

ռուս բնակչության թվաքանակի զգալի ավելացմանը (1859թ. 16 մարդուց մինչև 32.983 մարդ 1911-ին) զուգընթաց չերքեզահայերի էթնոմշակութային զարգացումն ընթանում է նրանց հետ սերտ շփման մեջ: Նրանց միջավայրում նկատելի են դառնում ռուսների նյութական և հոգևոր մշակույթի տարրերը, մասնավորապես մեծ տարածում են ստանում ռուսական երգերը, պարերը, ինչպես նաև ռուսերենը: Ավելի հաճախակի են դառնում ամուսնությունները ռուսների հետ: Այս շրջանում տարածում են ստանում նրանց ազգանունների ռուսացված տարբերակները, օրինակ՝ Պոպովներ, Բարոնովներ, Դավիդովներ և այլն: Ներկայումս չերքեզահայերի հետնորդների մեծ մասն ապրում է Արմավիր, Մայկոպ, Կրասնոդար քաղաքներում: Չերքեզահայերից են սերել նշանավոր այնպիսի հայտնի արդյունաբերողներ, ինչպիսիք են Տարասովները, Բոգոբսուկովները (նրանց էին պատկանում մի շարք շենքեր խոշոր քաղաքներում, այդ թվում և Մոսկվայում), գրողներ Ս.Դանգուլովը, Բ.Կասպարովը և այլք:

19-րդ դարի 70-ականներին է վերագրվում գերազանցապես համշենահայերի (Համշենը ներկայումս գտնվում է Թուրքիայի սահմաններում) վերաբնակեցումը Կովկասի Սևծովյան ափին, որտեղ 19-րդ դ. 80-ական թթ. վերջին նրանց թվաքանակը մոտ 10 հազարի էր հասնում: 1894-95թթ. Թուրքիայում հայերի հալածանքների սաստկացման հետ կապված՝ արտագաղթողների թիվն ավելանում է՝ հիմնականում Տուապսեի, Սոչիի, Ադլերի, Անապայի, Նովոռոսիյսկի, Մայկոպի ուղղությամբ: 1894թ. ձևավորվում է Եկատերինոդարի հայկական գաղութը:

1915-16թթ., Յեդասպանության ժամանակ, Թուրքիայից հայ շատ փախստականներ վերաբնակվում են Սև ծովի ափով մեկ և

Հյուսիսային Կովկասի շրջաններում: 1918թ. նրանց հոսքը մեծանում է Անդրկովկասից: 1920թ. Կուբանի և սևծովյան շրջանների հայ բնակչության թիվը կազմում էր համապատասխանաբար 45,3 և 13 հազար մարդ, որոնցից 65,1 և 41,8%-ը քաղաքաբնակներ էին և զբաղվում էին առևտրով ու արհեստներով: Հայերն առավել հոծ բնակվում էին Մայկոպում և Եկատերինոդարում (16,7 հազար մարդ), ինչպես նաև Սոչիում և Տուապսեում (8,5 հազար մարդ):

1926թ. Մայկոպի օկրուգում ձևավորվեց Հայկական ազգային շրջանը, որի կենտրոնը Ելիսավետպոլ գյուղն էր, որը հետագայում վերանվանվեց Շահումյան: Շրջանն ուներ յոթ գյուղխորհուրդ (Չեռնիգոլյան, Կուբանա-հայկական, Ռեժետյան, Գոյտիսյան, Ելիսավետպոլի, Գունայի, Ապշերոն-Խաղիժենի՝ Մայկոպի օկրուգում և Սադովին՝ Կուբանի օկրուգի Տաքադբյուրի շրջանում)՝ 68 գյուղով և խուտորներով, որտեղ ապրում էր 6026 հայ, ինչը կազմում էր նրա ամբողջ բնակչության 74%-ը: Շրջանում գործում էին ազգային դպրոցներ, հայերեն ռադիոհաղորդումներ էին հեռարձակվում, լույս էր տեսնում հայկական թերթ:

1953թ. Կրասնոդարի երկրամասում 24 շրջանների լուծարմամբ վերացավ նաև Հայկական շրջանը: Նրա տարածքը վերաբաշխվեց Տուապսեի և Ապշերոնի շրջանների միջև: 1920-ական թթ. հայկական դպրոցներ էին գործում ոչ միայն ազգային շրջանում, այլև ողջ Կրասնոդարի երկրամասում: Օրինակ, Սոչիի շրջանում բացվել է նման 29 (ավելի վաղ այստեղ արդեն 12 դպրոց և ուսումնարան է եղել), Մայկոպի օկրուգում՝ 15, Նովոռոսիսկում՝ 26 դպրոց: Սակայն հետագայում երկրամասում դպրոցների թիվը

զգալիորեն կրճատվեց. 1951թ. 140-ի փոխարեն՝ 12 1967-ին և 3 1992-ին¹:

ՌԴ Ռուստովի մարզում ներկայումս հոծ բնակվող Դոնի հայերը պատմականորեն արդեն երկու անգամ են սփյուռք դարձել: Մինչև 11-րդ դարի կեսը նրանց նախնիները եղել են միջնադարյան Հայկական թագավորության և գերազանցապես նրա մայրաքաղաք Անիի բնակիչներ: Բայց սկզբում Բյուզանդիայի, այնուհետև՝ 1064թ. թուրք-սելջուկների կողմից նվաճվելուց հետո, որոնք հիմնովին ավերեցին ու թալանեցին այն, հայկական փախստականների մեծ հոսք սկսվեց: Նրանց մեծամասնությունն անմիջապես ուղղվեց դեպի Ղրիմ, որին հայերը ծանոթ էին վաղ ժամանակներից, մյուս մասը սկզբում հաստատվեց Աստրախանից ոչ հեռու, բայց 1330թ. նույնպես տեղափոխվեց Ղրիմ:

Կես դար անց, 1080թ. Միջերկրական ծովի ափին կազմավորված Կիլիկյան հայկական պետությունում ապրող շատ հայեր՝ Անիի փախստականների հետնորդներ, 1375թ. այդ պետության անկումից հետո համարեցին Ղրիմի հայկական սփյուռքը: Հայ ժողովրդի այս խումբը Դոնում սփյուռք դարձավ 1779թ., երբ Եկատերինա II-ի հրամանով կազմակերպվեց 18.407 հույների և 12.598 հայերի վերաբնակեցումը Ղրիմի խանությունից: Նպատակը ոչ միայն խանության տնտեսական թուլացումն էր (1783թ. խանությունն ընդգրկվել էր Ռուսական կայսրության կազմի մեջ),

¹ Ներկայում գործող դպրոցների և այլ մանրամասների մասին տե՛ս «Հայկական կրթական հաստատությունները Ռուսաստանի հարավում» բաժնում:

այլև որպեսզի հարավժուսական տափաստանները բնակեցվեն մարդկանցով, որոնք հողագործության, առևտրի և արհեստագործության մեծ փորձ ունեին: Գրեթե մեկուկեսամյա տառապալից անցումից հետո, որի պատճառով մարդկանց համարյա մեկ երրորդը (հիմնականում ծերեր և երեխաներ) մահացավ, 1779թ. վերջին հայ տեղահանվածները հասան Դոնի ստորին հոսանքներ, որտեղ նրանց հատկացվեց 86 հազար դեսյատին հող Մբ. Դմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտ և թույլատրվեց հիմնել մեկ քաղաք և հինգ գյուղ: Կառավարությունը համաձայնեց վերաբնակների առաջ քաշած՝ իրենց արտոնություններ տալու պայմաններին, մասնավորապես՝ 10 տարով պետական տուրքերից և ծառայություններից, 100 տարով զինապարտությունից ազատելու վերաբերյալ, թույլատրվում էր նաև եկեղեցիներ կառուցել և եկեղեցական ծեսեր կատարել իրենց սեփական օրենքներին և ավանդույթներին համապատասխան, ազատ առևտուր անել պետության ներսում և դրսում: Հայերն իրենց ուժերով ֆաբրիկաներ, գործարաններ, առևտրանավեր կառուցելու իրավունք ստացան:

Ղրիմից տեղահանված 12,6 հազար հայերի գերակշիռ մասը՝ 11,4 հազար, Ղրիմի Կաֆա (5511 մարդ), Կարասուրազար (2809), Բախչիսարայ (1375), Գեզլևա (1304), Աքմեչեթի (259) և այլ քաղաքներից էին: Նրանք Դոնի ափին հիմնեցին Նոր Նախիջևանը, ավելի ուշ՝ Դոնի Նախիջևանը: Գյուղաբնակ տեղահանվածները (նրանց թիվը 1,2 հազար էր) քաղաքի մերձակայքում հիմնեցին հինգ գյուղ՝ Չալտիր, Ղրիմ, Մեծ Սալեր, Սուլթան Սապի և Նեավետայ՝ պահպանելով Ղրիմում թողած գյուղերի անվանումները:

Հայերի վերջին հոսքը Ռուսաստանի հարավ սկսվեց ԽՍՀՄ փլուզմամբ. մի կողմից՝ Ադրբեջանում հակահայկական տրամադրությունների ակտիվացումը, որը հանգեցրեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Խանլարի հայ բնակչության ջարդերին, մյուս կողմից՝ Անդրկովկասում ծագած միջէթնիկական հակամարտությունները (ադրբեջանա-ղարաբադյան, աբխազա-վրացական, վրաց-օսական և այլն), բնական աղետները (երկրաշարժը Հյուսիսային Հայաստանում) և, վերջապես, արտադրական-տնտեսական կապերի վերացումը հանգեցրին աշխատանքային միզրացիայի:

2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԵՐՆ ԸՍՏ ՎԵՐԱ- ԲՆԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆԵԼ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԱՅՄԱՆԱԿԱՆ ԽԱՐԻ:

Այսօր Ռուսաստանի հարավում ապրող հայերին ըստ վերաբնակման ժամանակի կարելի է բաժանել մի քանի պայմանական խմբի:

ա) Հնարնակներ

1	Համշենահայեր	Պատմական Հայաստանի Համշեն բնակավայրից եկածներ, որոնք Ռուսաստանի սևծովյան ափի տարածքներում սկսել են բնակություն հաստատել 19-րդ դարի երկրորդ կեսից: Հոծ բնակություն ունեն Աբխազիայում, Կրասնոդարի երկրամասի Սոչիի, Տուապսեի, Ապշերոնի շրջաններում և Ադիգեայի Հանրապետությունում: Խոսում են հայերենի Համշենի բարբառով:
2	Չերքեզահայեր (չերքեզալեզու հայեր)	Չերքեզալեզու հայեր, որպես այդպիսին, այսօր գոյություն չունեն, քանի որ ձուլվել են: Վերջին համառոտական մարդահամարով՝ իրեն չերքեզահայ է անվանել երեք մարդ: Ներկայումս չերքեզահայերի սերունդների մեծ մասն ապրում է Արմավիր, Մայկոպ, Կրասնոդար քաղաքներում:
3	Սուրբխաչեցի հայեր	Ղարաբաղից վերաբնակվածների սերունդներ, որոնք հիմնել են Սուրբ խաչ (ներկայումս՝ Բուդյոնովսկ, Ստավրոպոլի երկրամաս) քաղաքը:
4	Արևմտահայեր	1896 և 1915թթ. ցեղասպանություններից տուժած արևմտահայ փախստականների սերունդներ:
5	Դոնի հայեր	Անիի հայերի սերունդներ, որոնք 1779թ. տեղահանվելով Դրիմից՝ բնակություն են հաստատել Դոնի ափին (ներկայիս Ռոստովի մարզում): Հոծ բնակություն ունեն Դոնի Ռոստովում (որի շրջաններից մեկը ժամանակին վերաբնակների հիմնած Նոր Նախիջևան քաղաքն էր) և մարզի մի քանի գյուղերում:

բ) Խորհրդային ժամանակների վերաբնակներ

- Հայեր Անդրկովկասի հանրապետություններից, որոնք Ռուսաստան են տեղափոխվել ԽՍՀՄ տարիներին: Հիմնականում վրացահայեր են (թիֆլիսահայեր և ջավախահայեր) և Ադրբեջանի հայեր (բաքվեցիներ, կիրովաբաղցիներ և դարաբաղցիներ):

գ) ԽՍՀՄ փլուզման և հետխորհրդային շրջանի վերաբնակներ

1	Փախստականներ Ադրբեջանից	Բաքվից, Մումգայիթից, Կիրովաբաղից և Ադրբեջանի այլ բնակավայրերից փախած հայեր՝ այնտեղ իրականացված հայ բնակչության ջարդերի հետևանքով:
2	Փախստականներ Ղարաբաղից	Ղարաբաղը մարտական գործողությունների ժամանակ լքած հայեր:
3	Փախստականներ Աբխազիայից	Աբխազիան մարտական գործողությունների ժամանակ լքած հայեր:
4	Երկրաշարժից տուժածներ	1988թ. կործանարար երկրաշարժից հետո աղետի գոտին թողած հայեր:
5	Տնտեսական վերաբնակներ	Հայաստանը անկախության առաջին տարիներին լքած հայեր: Վերաբնակներ Վրաստանից (Թբիլիսի, Ջավախք) և միջինասիական հանրապետություններից:
6	Աշխատանքային միգրացիա	Հիմնականում Հայաստանից, Ղարաբաղից և Ջավախքից եկած հայեր, որոնք ժամանակավորապես գտնվում են Ռուսաստանի հարավում:

Ռուսաստանի հարավի հայերը հիմնականում պատկանում են հետևյալ դավանանքներին.

1	Հայ Առաքելական եկեղեցի	Հավատացյալ հայերի գերակշիռ մեծամասնությունը ՀԱԵ հետևորդ է:
2	Ռուս Ուղղափառ եկեղեցի	Գործող հայկական եկեղեցիների բացակայության պայմաններում Ռուսաստանի հարավի հնաբնակ շատ հայեր մկրտվել են ՌՈՒԵ-ում և հետագայում մնացել այս եկեղեցու ծխականներ: ՌՈՒԵ հետևորդ է նաև այն հայերի մի մասը, որոնք եկեղեցին ընտրում են՝ ելնելով նրանից, թե որ եկեղեցին է տարածքով իրենց մոտ:
3	Հայ կաթոլիկներ (ֆրանսուզներ)	Հայ կաթոլիկները հոծ բնակություն են ունեցել Արևմտահայաստանի որոշ մարզերում, օրինակ՝ Տայքում (Արդվին), Ջավախքում (ներկայումս՝ Կրաստանի տարածք. Ախալցխա, Ախալքալաք, Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջան): Ներկայումս արդվինցի շատ հայ կաթոլիկներ ապրում են Դոնի Ռոստովում, Տագանրոգում, Կրասնոդարում, Մոչիում, Նովոռոսիյսկում, Անպայում, Բայազետցի կաթոլիկների ժառանգներն ապրում են Կրասնոդարի երկրամասի Կալինինի շրջանում, ջավախցի շատ կաթոլիկներ ապրում են Կուրգանինսկում, Աբինսկում և Գելենջիկում: Կրասնոդարում և Դոնի Ռոստովում գործում են կաթոլիկական եկեղեցիներ, որոնցում սպասավորում են հայ հոգևորականներ, հոտի մեծ մասը նույնպես հայեր են:
4	Հեմշիկներ (հեմշիններ)	Հեմշիկները (Համշեն, Արևմտահայաստան) բռնի իսլամացված հայերի հետնորդներն են: Հեմշիկները երկակի ինքնության կրողներ են հանդիսանում. թուրքական (կրոնական հիմքի վրա) և իրենց սեփական՝ հեմշիկ ինքնության (լեզվական հիմքի վրա): Խոսում են երկու լեզվով՝ թուրքերեն և հեմշիկի (հայերենի Համշենի բարբառ): Մունիադավան են: Հոծ բնակություն ունեն Կրասնոդարի երկրամասի Ապշերոնի և Բելորեչենսկի շրջանների մի շարք գյուղերում, ինչպես նաև Ռոստովի մարզի Կամենսկի շրջանում:
5	Աղանդներ	Վերջին տարիներին հայ բնակչության շրջանում ակտիվացել է զանազան աղանդների (Եհովայի վկաներ, կրիշնայականներ, Վիֆանիայի եկեղեցի և այլն) գործունեությունը: Հայերի մեջ ևս կան այս աղանդների հետևորդներ, որոնց մեծ մասն Ադրբեջանից և Հայաստանից եկածներ են:

Հարկ է նշել, որ այս կամ այն դավանանքին պատկանելությունը ենթադրում է կրոնականության տարբեր աստիճան: Ցավոք, չհաջողվեց տվյալներ ստանալ Ռուսաստանի հարավի Հայ Առաքելական եկեղեցու թեմի ծխականների թվի մասին, և մենք կարող ենք վկայակոչել միայն այն տվյալները, որ ստացվել են 2009թ. Կրասնոդարի երկրամասում Էթնոքաղաքագիտական հետազոտությունների կենտրոնի անցկացրած ուսումնասիրության ընթացքում՝ Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի բաժանորդների հարցախույզի հիման վրա: Այսպես, «Երկրամաս» թերթի բաժանորդներին ուղարկվել է 1000 հարցաթերթիկ Կրասնոդար, Տուապսե, Սոչի, Արմավիր, Ապշերոնսկ, Գոռյաչի կյուչ, Կորենովսկ, Եյսկ, Անապա, Նովոռոսիյսկ, Կուբանի Սլավյանսկ, Գելենջիկ, Կուրգանինսկ քաղաքներում: Ստացվել է 264 լրացված հարցաթերթիկ: Նշենք, որ մեր բերած տվյալները ստացվել են հայ բնակչության այսպես կոչված «ազգային առումով ակտիվ» մասից, որոնք բաժանորդագրվել են հայկական թերթին: Կրասնոդարի երկրամասի հայ բնակչության մեծ մասն այդ կարգին չի պատկանում, և հարցախույզի արդյունքները, հաշվի առնելով այս մարդկանց, կարող են խիստ տարբերվել մեր ստացած տվյալներից:

Հարցման ենթարկվածները պայմանականորեն բաժանվել են երեք խմբի.

1. Արևմտահայաստանից եկածների սերունդներ, որոնք Հայրենիքը լքել են Ցեղասպանությունից հետո, 19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին:
2. 20-րդ դարավերջին հարկադրյալ տեղահանված հայեր (ջարդերն Ադրբեջանում, երկրաշարժը Հայաստանում, պատերազմը Ղարաբաղում և Աբխազիայում):
3. Տնտեսական առումներով տեղափոխված հայեր:

Հարցախույզը ցույց տվեց, որ հարցաթերթիկի հարցերին պատասխանածների գրեթե կեսը եկեղեցի է հաճախում միայն տոներին, ամիսը մեկ անգամ եկեղեցի է հաճախում հարցման ենթարկվածների ընդամենը 7%-ը:

ԿՐՈՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

1. Արևմտահայաստանից գաղթածների սերունդները, որոնք Հայրենիքը թողել են 1896 և 1915-22թթ. ցեղասպանություններից հետո (112 մարդ).

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ - 4% (4 մարդ)

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ - 32% (36 մարդ)

Եկեղեցի են հաճախում միայն տոներին - 64% (72 մարդ)

2. 20-րդ դարավերջին հարկադրյալ տեղափոխված հայեր (ջարդերն Ադրբեջանում, երկրաշարժը Հայաստանում, Ղարաբաղի և Աբխազիայի պատերազմները) (92 մարդ).

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ – 7% (6 մարդ)

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ – 41% (38 մարդ)

Եկեղեցի են հաճախում միայն տոներին - 52% (48 մարդ)

3. Տնտեսական առումներով տեղափոխված հայեր (60 մարդ).

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ – 13% (8 մարդ)

Եկեղեցի են հաճախում ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ – 70% (42 մարդ)

Եկեղեցի են հաճախում միայն տոներին - 17% (10 մարդ)

3. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Ռուսաստանի հարավի (ՀԴՕ և ՀԿԴՕ) հայությունը, որը թվաքանակով չորրորդ ազգային խումբն է Ռուսաստանի Դաշնության այս տարածաշրջանում (ռուսներից, չեչեններից և ավարներից հետո), էական դեր է խաղում սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքում, սակայն դեռ վաղ է խոսել այստեղ կազմակերպված հայության դերի մասին: 2002թ. մարդահամարի տվյալներով՝ կազմելով տարածաշրջանի ընդհանուր բնակչության մոտ 3%-ը, ավելի ճիշտ՝ 615.123 մարդ, իսկ ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ գերազանցելով մեկ միլիոնը, հայկական սփյուռքի կազմակերպված ակտիվությունն այս կամ այն ոլորտում դրսևորվում է հատուկենտ, հիմնականում՝ հոծ բնակչության վայրերում:

**ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ (ՀԴՕ և ՀԿԴՕ)**

№	Դաշնության սուբյեկտը	Հայ բնակչության թվաքանակը	Ողջ բնակչության թվաքանակը	%
1	Կրասնոդարի երկրամաս	5 125 221	274 566	5,4
2	Ստավրոպոլի երկրամաս	2 735 139	149 249	5,5
3	Ռոստովի մարզ	4 404 013	109 994	2,5
4	Վոլգոգրադի մարզ	2 699 223	26 974	1,0
5	Հյուսիսային Օսիայի Հանրապետություն-Սլյանիա	710 275	17 147	2,4
6	Ադիգեայի Հանրապետություն	447 109	15 268	3,4
7	Աստրախանի մարզ	1 005 276	6 309	0,6
8	Դադստանի Հանրապետություն	2 576 531	5 702	0,2
9	Կարաբոլինո-բալկարական Հանրապետություն	901 494	5 342	0,6
10	Կարաչանո-չերկեսական Հանրապետություն	439 470	3 197	0,7
11	Կալմիկիայի Հանրապետություն	292 410	887	0,3
12	Չեչնիայի Հանրապետություն	1 103 686	424	0,03
13	Ինգուշիայի Հանրապետություն	467 294	64	0,01
	ԸՆԴԱՄԵՆԸ	22 907 141	615 123	2,7

Հայկական կազմակերպությունները, այսպես կոչված համայնքները տարածաշրջանում սկսեցին իրավաբանորեն ձևակերպվել 20-րդ դ. 90-ական թթ. սկզբներից: Դրանք ներկայումս, համաձայն գրանցող մարմինների տվյալների, գոյություն ունեն Ռուսաստանի հարավի գրեթե բոլոր սուբյեկտներում: Սակայն իսկապես գործող կարելի է համարել դրանցից շատ քչերը: Սկզբում այս կամ այն

շրջանում ստեղծվելով որպես միակ և համընդգրկուն կազմակերպություններ՝ նրանք զարգացման մի քանի փուլ են անցել: Որպես կանոն, դրանց ստեղծման նախաձեռնողներն ու առաջին ղեկավարները եղել են հայության պահպանման և ձուլումից փրկելու ջատագով մտավորականության ներկայացուցիչները, որոնք, սակայն, ֆինանսական հնարավորություններ չեն ունեցել այդ նպատակներն իրագործելու համար: Հետագայում համայնքի ղեկավար մտավորականներն աստիճանաբար փոխարինվում են բիզնեսի ներկայացուցիչներով, որոնք ունեին ֆինանսական հնարավորություններ, բայց հստակ չէին պատկերացնում այդ հնարավորությունների կիրառման ոլորտները: Այսպես, օրինակ, վերջին 10-12 տարիների ընթացքում Կրասնոդարի երկրամասի տարբեր շրջաններում համայնքների կողմից ստեղծվեցին մի քանի ֆուտբոլային թիմեր հայկական անուններով, որոնք մասնակցում էին համաքաղաքային կամ շրջանային առաջնություններին և որոնց վրա լուրջ միջոցներ էին ծախսվում, որոնք հավաքվում էին փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներից: Ընդ որում, այդ նույն համայնքներում միջոցներ և հնարավորություններ չգտնվեցին հայերենի ուսուցման խմբեր կազմակերպելու համար, թեև դա անհամեմատ ավելի քիչ միջոցներ էր պահանջում: Համայնքների ղեկավարների համար ավելի հեշտ էր ֆինանսավորել մի ինչ-որ մեկանգամյա միջոցառում, որը ոչ մի կապ չուներ հայկական սփյուռքի հետ (օրինակ՝ Ռուսաստանի բողիբիդինգի առաջնությունը, որի մասին հետո կարելի էր երկար հիշել), քան երկարաժամկետ մի նախագիծ սկսել, որը ոչ միայն և ոչ այնքան ֆինանսական ծախսեր կպահանջեր, որքան ինտելեկտուալ ջանքեր:

Հայկական կազմակերպությունների առավել մեծ ակտիվության շրջանը համընկավ Ղարաբաղի ազատագրական պատերազմի ժամանակի հետ, երբ համայնքների մեծամասնությունն աշխատում էր «ամեն ինչ՝ ճակատի, ամեն ինչ՝ հաղթանակի համար» սկզբունքով՝ կազմակերպելով հումանիտար և այլ օգնության առաքումը Հայաստան, ապահովելով պատերազմում տուժածների ընդունումը, բուժումը և այլն: Բայց երբ նման աշխատանքի անհրաժեշտությունը վերացավ, հայկական շատ կազմակերպություններ իրենց գործունեությունը հասցրին նվազագույնի կամ ընդհանրապես դադարեցրին այն:

Այդ նույն ժամանակ, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և մի շարք այլ տարածաշրջանների հայերի՝ դեպի Ռուսաստանի հարավի հիմնականում սլավոնական շրջաններ սաստկացած միգրացիայի ֆոնին ավելի ու ավելի հաճախակի դարձան հակահայկական ակցիաները: Դա առանձնապես ակնհայտ դրսևորումներ ստացավ Կուրանում: 1992թ. Անապայում, Կրասնոդարում և Կրասնոդարի երկրամասի այլ շրջաններում հարձակումներ կատարվեցին հայերի վրա: 1993թ. ամռանն Անապայում միջադեպեր տեղի ունեցան ռուսների և հայերի միջև, 1997թ. Կորենովսկում, հանրահավաքի ժամանակ, հնչեցին հայերին արտաքսելու պահանջներ: Զուգահեռաբար մամուլում ավելի հաճախ սկսեցին տպագրվել հակահայկական բնույթի հրապարակումներ, ավելի հաճախ էին հակահայկական արտահայտություններ հնչում Կրասնոդարի երկրամասի ղեկավարների կողմից: Հայկական համայնքները ոչնչով չկարողացան հակադարձել այս ամենին, նույնիսկ չկարողացան համապատասխան իրավաբանական ապահովում կազմակերպել Կրասնոդարի և Կուրանի

Մլավյանսկի ջարդարարների նկատմամբ հարուցված դատավարությունների ընթացքում, երբ երիտասարդ ջարդարարները, որ Կրասնոդարի հայկական գերեզմաններն էին պղծել ու Կուբանի Մլավյանսկի հայկական խանութները, ազատ արձակվեցին դատարանի դահլիճից՝ աննշան պայմանական ժամկետներ ստանալով:

Այս և շատ այլ գործոններ, որոնք թեև քիչ, բայց տեղի ունեցան Ռուսաստանի հարավի այլ շրջաններում նույնպես, հանգեցրին այն բանին, որ տարածաշրջանի հայ բնակչությունը հիմնականում հիասթափվեց իրեն համայնքներ անվանող հայկական կազմակերպությունների գործունեությունից և կտրվեց կազմակերպված հայությունից: Միննույն ժամանակ, հայկական կազմակերպությունները, որոնց մեծամասնությունը գրանցված է որպես «հայկական մշակույթի ընկերություններ», հավակնում էին լինել միակ հայկական կազմակերպությունն այս կամ այն շրջանում և խանդով ու անգամ թշնամաբար էին վերաբերվում հայկական սփյուռքի առանձին ներկայացուցիչների՝ էլի ինչ-որ կազմակերպություն ստեղծելու փորձերին: Կարծիք կար, թե այս կամ այն բնակատեղիի բոլոր հայերն ավտոմատ կերպով այդ բնակատեղիի հայկական կազմակերպության անդամներ են հանդիսանում, ուստի և պարտավոր են այդ կազմակերպության հանդեպ որոշակի պարտականություններ ունենալ, հիմնականում անդամավճարներ մուծել: Կազմակերպություններից մեկի կանոնադրությունում անգամ կետ կար այն մասին, որ այդ կազմակերպության անդամ չհանդիսացող, բայց կազմակերպության գործունեության տարածքում բնակվող հայը պետք է դիմում գրի ազգային պատկանելությունից հրաժարվելու մասին:

Հայկական համայնքներից մեկը պաշտոնական նամակ էր հղել արդարադատության երկրամասային վարչություն՝ պահանջելով, որ վերջինը, առանց համայնքի թույլտվության, չգրանցի հայկական այլ կազմակերպություններ: Նման իրավիճակը միանգամայն ձեռնտու էր նաև իշխանության ներկայացուցիչներին, որոնց հարմար էր իրենց շրջանում մեկ հայկական կազմակերպություն ունենալ մի ղեկավարով, որը «կորցնելու քան ուներ» (նկատի է առնվում բիզնեսը) և որին, դրա հետ կապված, կարելի էր կառավարել:

Երկրամասի հայկական հասարակական կյանքում տիրող այս իրավիճակը ձեռնտու չէր ակտիվ շատ հայերի, որոնք դուրս էին մնացել հայկական համայնքների գործունեությունից, դրա համար էլ, երբ 1996թ. Կրասնոդարում սկսեց լույս տեսնել հետխորհրդային Ռուսաստանի տարածքում առաջին հայկական անկախ «Երկրամաս» թերթը, շատերը նրանցից, ովքեր ցանկանում էին փոփոխություններ կատարել, համախմբվեցին թերթի շուրջ և այն պաշտպանեցին հայկական մի շարք համայնքների ճնշումներից, որոնք կարծում էին, թե թերթ հրատարակելու իրավունք միայն իրենք ունեն:

«Երկրամաս» թերթի անկախ գործունեության փորձն արդյունքներ տվեց, և երկրամասում աստիճանաբար, չնայած հայկական շատ համայնքների ղեկավարների դիմակայությանը, սկսեցին ստեղծվել նոր, համայնքներից անկախ, հասարակական կազմակերպություններ՝ հայրենակցական, երիտասարդական, գիտական, գրական, մարզական և այլն: Դրանք սակավաթիվ էին և ֆինանսապես էլ կայուն չէին, ինչի հետ կապված դրանցից շատերը գոյատևեցին ընդամենը 2-3 տարի, սակայն այդ

կազմակերպությունների շնորհիվ շատ հայեր հասարակական ակտիվություն սկսեցին ցուցաբերել, իսկ հայկական շատ համայնքներ, նոր կազմակերպություններն ընդունելով որպես մրցակիցներ, փորձեցին ավելի ակտիվացնել իրենց աշխատանքը:

Նոր կազմակերպությունների մեջ կային այնպիսիները, որոնք կարող էին վստահաբար ոտքի կանգնել և իրենց տեղն ունենալ Կուրանի հայկական հասարակական շարժման մեջ: Այդպիսի կազմակերպություններից են Հայկական գիտական տեղեկատվական-մշակութային «Համշեն» կենտրոնը, որն ստեղծվել է 2000թ., 2005թ. ստեղծված «Նարեկ» մշակութային և կրթական կենտրոնը, «Երկրամաս» թերթի հասարակական կառույցները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունեն երկրամասի շատ շրջաններում:

Հայկական կազմակերպությունների գործունեությունը պարբերաբար ակտիվանում էր, ինչը կապված էր Ռուսաստանի հայկական սփյուռքում, այսինքն՝ Մոսկվայում տեղի ունեցող գործընթացներով: Այսպես, համայնքների զարգացման հերթական փուլը սկսվեց Մոսկվայում Համառուսական հասարակական «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) կազմակերպության հիմնմամբ, ինչը Կուրանում մեծ խանդավառությամբ ընդունեցին: Բայց տեղի ղեկավարները յուրովի մոտեցան ՌՀՄ տեղական բաժանմունքների ստեղծման հարցին: Եթե Ռուսաստանի այլ շրջաններում հայկական համայնքները դառնում էին ՌՀՄ կոլեկտիվ անդամներ, ապա Կուրանում զանգվածաբար սկսեցին իրավաբանորեն փակվել հայկական համայնքները և բացվել ՌՀՄ տեղի բաժանմունքներ: Մի շարք համայնքներ, օրինակ՝ Նովոռոսիյսկում, Կուրանի Սլավյանսկում, Անապայում և էլի մի շարք շրջաններում, ընդդիմացան համայնքների փակմանը: Որոշ

դեպքերում ՌՀՄ երկրամասային ղեկավարությունն օգտագործեց վարչական ռեսուրսը՝ «անհնազանդ» համայնքները փակելու համար, և շատ դեպքերում դա հաջողվեց: Բայց Նովոռոսիյսկում համայնքը (հայկական մշակութային «Լույս» ընկերություն) ոչ միայն հրաժարվեց փակվել, այլև մտնել ՌՀՄ, ինչի արդյունքում ՌՀՄ-ն այստեղ ստիպված էր սկզբում զուգահեռ կառույց ստեղծել, միայն հետագայում փոխզիջում գտնվեց, և երկու կազմակերպությունները միաձուլվեցին: Կուբանի շատ շրջաններում ՌՀՄ-ն և համայնքներն իրավաբանորեն գոյություն ունեն գուգահեռ, բայց կառավարվում են միևնույն մարդկանց կողմից:

Ռուսաստանի հարավի մյուս շրջաններում Ռուսաստանի հայերի միության տարածման գործընթացն այնքան էլ հիվանդագին չէր: Տեղի շատ հայկական կազմակերպություններ պարզապես հայտարարեցին, որ մտնում են ՌՀՄ կազմի մեջ՝ իրավաբանորեն չփակելով արդեն գոյություն ունեցող հասարակական միավորումները և տեղերում իրենց գործունեության մեջ անգամ չհիշատակելով այն մասին, որ ՌՀՄ անդամ են հանդիսանում: Այսպես, Ռուսաստանի հայերի միության պաշտոնական կայքում կարդում ենք, որ գոյություն ունի ՌՀՄ Ռոստովի տարածքային բաժանմունք (<http://sarinfo.org/regional/?r=rostov>), որը ղեկավարում է Ա.Ա. Սուրմալյանը, իսկ Դոնի Ռոստովի հայկական համայնքի պաշտոնական կայքից (nao.ru) տեղեկանում ենք, որ Ռոստովի հայկական կազմակերպությունը, որը ղեկավարում է Ա.Ա. Սուրմալյանը, կոչվում է «Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնք», և ոչ մի հիշատակություն ՌՀՄ-ի մասին այս կայքում չկա:

Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքի ներհամայնքային կապերն ընդհանուր առմամբ թույլ են: Բացառություն կարող են

կազմել ոչ մեծ բնակավայրերի համայնքները, որոնք ընդհանուր արմատներ ունեն, օրինակ՝ Կրասնոդարի երկրամասի Մեծ Մոչիի կամ Տուապսեի շրջանի մեծ գյուղերում, Ռոստովի մարզի Մյասնիկյան շրջանում և Ռուսաստանի հարավի մի շարք այլ բնակավայրերում: Ավելի իրական կլինի խոսել որոշակի ներխուժային կապերի մասին՝ կապված ծագման ընդհանրության (օրինակ՝ նույն համշենահայերը), գործունեության ոլորտի և մակարդակի հետ (բիզնես): Ներհամայնքային կապերի մակարդակից է ուղղակիորեն կախված նաև համայնքների ինքնակազմակերպման մակարդակը: Այս առնչությամբ շրջաններում, որտեղ հայ բնակչությունն ավելի միատարր է ընդհանուր արմատների առումով, ինչպես նաև այն շրջաններում, որտեղ ամուր են բիզնեսի ներկայացուցիչների ներհամայնքային կապերը, ինքնակազմակերպման մակարդակը բարձր է:

Ռուսաստանի հարավի հայերի մեծամասնությունն այսօր էլ պահպանում է այն հոգեբանական ընկալումը, որ իրենք առայսօր Հայաստանի հետ միասին նույն պետականության արեալում են գտնվում: ԽՍՀՄ գոյության տարիներին մշակված ինքնագիտակցությունը թույլ չի տվել տեղի հայերին ինքնուրույն մշակել ներէթնիկ ինքնակազմակերպման մեխանիզմներ, քանի որ շատերի համար հետխորհրդային տարածքում գլխավոր դերը կատարում է պետությունը, և «ներքևից» եկող նախաձեռնությունները չեն խրախուսվում:

Մինչ Ռուսաստանի հարավի հայաբնակ շրջաններում գործում են ավանդական ազգային կառույցներ (եկեղեցի, կրթական հաստատություններ, ոչ կառավարական կազմակերպություններ և այլն), իրականում հայ ինքնության պահպանմանն ուղղված գործունեությունն իրականացվում է շնորհիվ առանձին մարդկանց

անձնուրաց ու հետևողական ջանքերի, որոնցից էլ կախված է կազմակերպությունների գործունեությունը:

Հարկ է նշել, որ հայերի ինքնակազմակերպման որոշակի խոչընդոտ են հանդիսանում արդի Ռուսաստանում առկա հակակոմկապյան տրամադրությունները: Հայերը, տնտեսական առումով մրցունակ լինելով, տիտղոսակիր ազգի ընկալմամբ՝ մրցակից են դառնում ռեսուրսների բաշխման ոլորտում և աշխատանքի ներքին շուկայում: Հայության շուրջ պարբերաբար ծագող անհանդուրժողության մթնոլորտը երկյուղներ է ծնում և ստիպում հայերին մի կողմ քաշվել հայկական կազմակերպությունների գործունեությունից: Ինքնակազմակերպումը բարդացնող լուրջ հիմնախնդիր է հայկական սփյուռքի բազմասեռությունը, որի ձևավորումը տեղի է ունեցել փուլ առ փուլ: Հայության տարբեր խմբերի միջև գոյություն ունեն գործոններ, որոնք նպաստում են այն բանին, որ նրանք հեռանան միմյանցից. լեզվի իմացության, Արևելահայաստանում կամ Արևմտահայաստանում նախկին բնակության վայրի և այլ գործոնները:

Հայկական սփյուռքի՝ ձուլմանը նպաստող հիմնախնդիրներից մեկն այսօր հայերենի չիմացությունն է բավական զգալի թվով հայերի կողմից և այն սովորելու հնարավորության բացակայությունը: Լեզվի պահպանումն այն դժվարություններից մեկն է, որին բախվում են հայկական ազգային կազմակերպությունները: Հատկանշական է, որ հայկական կազմակերպությունների ղեկավարների մեծամասնությունը հայերենին բավականաչափ չի տիրապետում, իսկ եթե տիրապետում էլ է, ապա այն չի կիրառում խորհուրդների նիստերի, ժողովների, հանրահավաքների, հանրային այլ միջոցառումների ժամանակ:

Ռուսաստանի հարավային շրջաններում այսօր գոյություն ունի

միայն մեկ հայկական միջնակարգ դպրոց՝ Ադլերում (Սոչիի շրջան), բայց այստեղ էլ աշակերտների թիվը տարեցտարի նվազում է, կրթության որակն այն չէ, ավելին՝ ըստ վերջին տեղեկատվության, դպրոցում համապատասխան դասավանդող չլինելու պատճառով չի ուսուցանվում այնպիսի կարևոր առարկա, ինչպիսին հայ ժողովրդի պատմությունն է, իսկ հայ գրականությունը դասավանդվում է ֆակուլտատիվ հիմունքներով: Մեծ Սոչիի մի քանի գյուղերի միջնակարգ դպրոցներում գործող այսպես կոչված «հայկական սեկտորներն» այսօր փակ են, և հայերենը դրանցում դասավանդվում է ոչ պարտադիր կերպով, այլ սովորողների ցանկությամբ: 2002թ. մարդահամարի համաձայն՝ Սոչի քաղաքում ապրում էր 7-17 տարեկան ավելի քան 15 հազար հայ երեխա, այնինչ հայկական դպրոցներում և հայկական սեկտորներում այդ նույն շրջանում ուսանում էին ընդամենը 1380 աշակերտ, այսինքն՝ 9%-ից մի փոքր ավելի:

Հայկական համայնքներից շատերում գործող և սկզբում որոշակի դեր խաղացած կիրակնօրյա դպրոցներն այսօր կորցնում են իրենց նշանակությունը, քանի որ այդ խմբակներում պարապում են խիստ սակավաթիվ երեխաներ, որոնք, դասընթացն ավարտելով, անգամ հայերեն գրել-կարդալ սովորելուց հետո, մայրենի լեզվով խոսել չեն կարողանում: Նշենք, որ հայ ժողովրդի պատմությունն առարկան կիրակնօրյա շատ դպրոցներում չի դասավանդվում: Ավելին՝ այս կրթօջախներից շատերը ստեղծվել են ուսուցիչների մասնավոր նախաձեռնությամբ և համայնքներից աջակցություն չեն ստանում, ինչի հետ կապված էլ դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների լուրջ պակաս են զգում:

Հայկական եկեղեցին այն կառույցն է, որի շուրջ ամենահեշտն

Է տեղի ունենում հայ բնակչության համախմբումը կրոնական մեծ տոների կամ եկեղեցամերձ տարածքներում կազմակերպվող զանգվածային միջոցառումների ժամանակ: Սակայն եկեղեցին ևս կորցնում է իր դերը ազգի պահպանման գործում, քանի որ շատ համայնքներում տարածայնություններ կան մի կողմից՝ հայկական կառույցների (ՀԿ-ներ, մեդիա) և եկեղեցու, մյուս կողմից՝ եկեղեցու (ավելի ճիշտ՝ առանձին հոգևորականների) և հոտի միջև: Մեր շատ հայրենակիցներ վերը նշված պատճառներով (այդ թվում և մայրենիի չիմացության, ինչպես և այս կամ այն հոգևորականի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի պատճառով) հաճախում են Ռուս Ուղղափառ եկեղեցի: Վերջին տարիներին Ռուսաստանի հարավում բացվում են Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ծխական համայնքներ, որոնց հիմնական ծխականները հայ ֆրանզներն են, դրա համար էլ որոշ ծխական համայնքներում (Կրասնոդար, Դոնի Ռոստով) քահանաներ են նշանակվում հայերը: Լուրջ հիմնախնդիր է դառնում նաև Ռուսաստանի հարավի հայերի միջավայրում տարբեր աղանդների (Եհովայի վկաներ, կրիշնայականներ, Վիփանիայի եկեղեցի և այլն) գործունեությունը: Որոշ աղանդներ նույնիսկ պարբերաբար հայերեն են քարոզում:

Ազգային թերթերն ու ամսագրերը մեկ հիմնական հիմնախնդրի առջև են կանգնած, այն է՝ կայուն ֆինանսավորման բացակայության: Դրանք հրատարակվում են տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական այլ աղբյուրների կողմից ֆինանսավորման լիակատար բացակայության պայմաններում: Որպես կանոն, այդ հրատարակությունները հազվադեպ են ապահովում ինքնաձախսաձածկումը վաճառքի կամ բաժանորդագրության

միջոցով: Այդպիսով, ֆինանսավորման հիմնական աղբյուր են շարունակում մնալ առանձին հայրենասերների ֆինանսական ներդրումները, կամ էլ հրատարակչական կոլեկտիվի անհատույց ջանքերը և չվճարվող ժամանակը, որը զոհաբերվում է հանուն ազգային գործի:

Հայ մշակույթի բնագավառում Ռուսաստանի հարավում առաջատարը Սոչին է, ավելի ճիշտ՝ քաղաքի Լազարևյան շրջանը, որտեղ 1992թ., Լազարևյան շրջանի վարչակազմի մշակույթի վարչության պետ Կիրկոր Մազումյանի նախաձեռնությամբ, ստեղծվեց Ազգային մշակույթների կենտրոն մունիցիպալ հաստատությունը, որի շրջանակներում գործում է Հայկական մշակույթի կենտրոնը: Հայկական մշակույթի կենտրոնին կից գործում են մի քանի վոկալ և պարային պրոֆեսիոնալ կոլեկտիվներ, որոնք հայտնի են ոչ միայն ողջ Կուրսնում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Բացի այդ, քաղաքային բյուջեից են ֆինանսավորվում նաև Հայկական մշակույթի կենտրոնի 18 գյուղական մասնաճյուղերը, որոնց մեծ մասն ունեն պարի և երգի կոլեկտիվներ: Ընդ որում, Հայկական մշակույթի կենտրոնը կառուցվածքային ոչ մի հարաբերություն չունի Սոչի քաղաքի հայկական համայնքի հետ (մտնում է ՌՀՄ-ի մեջ), որի բաժանմունք է գործում նաև Լազարևսկ գյուղում: Ավելին, մինչև վերջերս կենտրոնի և համայնքի հարաբերությունները խիստ լարված էին: Եվ միայն ՌՀՄ տեղի բաժանմունքի նախագահի վերընտրությունից հետո, որն ուղեկցվում էր մամուլում սկանդալային հրապարակումներով, հաջողվեց շտկել իրավիճակը:

Վերջին տարիներին մշակույթի ոլորտում դրական փոփոխություններ են նկատվել նաև Կրասնոդարում, որտեղ

Կրասնոդար քաղաքի Պաշկովսկի գյուղի Հայկական մշակույթի կենտրոնին կից ստեղծվեց «Արին բերդ» ժողովրդական պարերի համույթը: Օգտվելով մեկենասների աջակցությունից՝ այս համույթը գոյության չորս տարվա ընթացքում կատարողական բարձր մակարդակ ապահովեց և նույնիսկ ժողգործիքների սեփական նվագախումբ ունեցավ:

Մշակույթի ոլորտն առկա է Ռուսաստանի հարավի հայկական շատ համայնքների գործունեության մեջ, բայց անբավարար և անկայուն ֆինանսավորման, իսկ որոշ դեպքերում՝ մշակութային ղեկավարների թույլ պատրաստվածության պատճառով այս համայնքների պարային և այլ համույթներին չի հաջողվում դուրս գալ համապատասխան պրոֆեսիոնալ մակարդակ:

Հայ բնակչության մասնակցությունն ազգային համայնքային կառույցների աշխատանքին գործուն չէ: Կարող ենք վկայակոչել տվյալներ, որոնք ստացել ենք 2009թ. Կրասնոդարի երկրամասում Էթնոքաղաքագիտական հետազոտությունների կենտրոնի անցկացրած ուսումնասիրություններից՝ Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի բաժանորդների հարցախույզի հիման վրա: Այսպես, «Երկրամաս» թերթի բաժանորդներին ուղարկվել է 1000 հարցաթերթիկ Կրասնոդար, Տուապսե, Սոչի, Արմավիր, Ապշերոնսկ, Գորյաչի Կլուչ, Կորենովսկ, Եյսկ, Անապա, Նովոռոսիյսկ, Կուբանի Սլավյանսկ, Գելենջիկ, Կուրգանինսկ քաղաքներում: Ստացվել է 264 լրացված հարցաթերթիկ: Նշենք, որ մեր բերած տվյալները ստացվել են հայ բնակչության, այսպես կոչված «ազգային առումով ակտիվ» մասից, ովքեր բաժանորդագրվել են թերթին: Կրասնոդարի երկրամասի հայ բնակչության մեծ մասն այս կարգին չի պատկանում, և հարցման արդյունքները, այդ մարդկանց

հաշվի առնելով, կարող են խիստ տարբերվել մեր նշածներից:

Հարցման ենթարկվածները պայմանականորեն բաժանվել են երեք խմբի.

1. 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի ցեղասպանություններից հետո Հայրենիքը լքած արևմտահայ վերաբնակների սերունդներ:

2. 20-րդ դարավերջին հարկադրված տեղահանված հայեր (ջարդեր Ադրբեջանում, երկրաշարժ Հայաստանում, պատերազմ Ղարաբաղում և Աբխազիայում):

3. Հայեր, որոնք տեղափոխվել են տնտեսական նկատառումներով:

Եվ այսպես, հարցաթերթիկները նախ և առաջ ցույց տվեցին, որ պատասխանաձևերի կեսից ավելին չի մասնակցում հայկական հասարակական գործունեությանը, ակտիվ մասնակցություն ցուցաբերում է միայն հարցվածների 10%-ը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

**1. 1896 և 1915-22թթ. ցեղասպանություններից հետո Հայրենիքը
լքած արևմտահայերի սերունդներ (112 մարդ)**

Ակտիվ մասնակցություն ունեն - 11% (12 մարդ)

Պասիվ մասնակցություն ունեն - 37% (41 մարդ)

Չեն մասնակցում - 52% (59 մարդ)

**2. 20-րդ դարավերջին հարկադրված տեղահանված և
փախստական հայեր (ջարդեր Ադրբեջանում, երկրաշարժ
Հայաստանում, պատերազմներ Ղարաբաղում և Աբխազիայում)
(92 մարդ)**

Ակտիվ մասնակցություն ունեն - 8% (7 մարդ)

Պասիվ մասնակցություն ունեն - 38% (35 մարդ)

Չեն մասնակցում - 54% (50 մարդ)

**3. Տնտեսական նկատառումներով վերաբնակված հայեր (60
մարդ)**

Ակտիվ մասնակցություն ունեն - 8% (5 մարդ)

Պասիվ մասնակցություն ունեն - 37% (22 մարդ)

Չեն մասնակցում - 55% (33 մարդ)

Հատկանշական է, որ հայկական հարսանիքները կամ հոգե-
հացերն ավելի շատ մարդ են հավաքում, քան այն միջոցա-
ռումները, որոնք կազմակերպում են հայկական հասարակական
կազմակերպությունները: Այս փաստի բացատրությունն այն է, որ
մի կողմից՝ հայ բնակչությունը մտածում է, թե համայնքների որոշ
գործիչներ ավելի շուտ սեփական շահերն են հետապնդում, այլ ոչ
թե սփյուռքի, մյուս կողմից՝ չկա անհրաժեշտ կազմակերպ-
վածություն միավորումների գործունեության մեջ:

Այս առումով հետաքրքիր են 2010թ. փետրվարին Կրասնոդարի
մի շարք շուկաներում (Կենտրոնական կոլտնտշուկա, Կոոպերա-
տիվ շուկա, «Միշուտկա», «Գարանտ» և այլն) առևտուր անող
հայերի շրջանում անցկացված հարցախույզի արդյունքները:
Հարցախույզն անցկացնում էին «Երկրամաս» թերթի բաժանորդ
կամավորականները: 300 հարցվածներից միայն 16-ն (հարցված-
ների ընդհանուր թվի 5%-ից մի փոքր ավելի) էր ծանոթ հայկական
հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Ուսումնասիրելով ազգային հասարակական գործունեությանը
հայ բնակչության մասնակցության ակտիվության աստիճանը՝ հեշտ
է նկատել, որ այդ ցուցանիշներն ավելի բարձր են այն շրջաններում,
որտեղ գործում են մի քանի հայկական կազմակերպություններ, ի
տարբերություն այն շրջանների, որոնցում միայն մեկ
կազմակերպություն է գործում (որպես կանոն, դա տեղի ՌՀՄ
բաժանմունքն է լինում): Այսպես, վերջին տարիներին կտրուկ
ակտիվացել է հայ ազգային կառույցների գործունեությունը
Կրասնոդարում, որտեղ այսօր գործում են հետևյալ հասարակական
կազմակերպությունները և մեղիա-կառույցները. Կրասնոդարի

երկրամասի ՌՀՄ շրջանային բաժանմունքը, Կրասնոդար քաղաքի ՌՀՄ տեղի բաժանմունքը, Կրասնոդար քաղաքի Պաշկովսկի գյուղի Հայկական մշակութային կենտրոնը, Կրասնոդարի քաղաքային «Խաչքար» մշակութային-կրթական կենտրոնը, Կրասնոդարի երկրամասային «Խաչքար» մշակութային-կրթական կենտրոնը, Կրասնոդարի երկրամասային գիտական տեղեկատվական-կրթական «Համշեն» կենտրոնը, Կրասնոդարի երկրամասային «Գործակցություն» կազմակերպությունը, Հայկական եկեղեցին (մեկը գործող և մյուսը՝ կբացվի մինչև տարեվերջ), երկրամասային «ՌՀՄ» թերթը, «Խաչքար» հանդեսը և Արդարադատության նախարարությունում գրանցված ու չգրանցված այլ հասարակական կառույցներ (Հարավային և Հյուսիսկովկասյան դաշնային օկրուգների հայկական կառույցների ցանկը տե՛ս *Աղյուսակներ Ա1 և Ա2-ում*):

4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՁԼՄ-Ն ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հայկական կառույցների գործունեության մասին տեղեկատվության տարածման հիմնական միջոցը տարածաշրջանում հրատարակվող հայկական տպագիր լրատվամիջոցներն են (թերթեր, ամսագրեր) և ինտերնետ-կայքերը: Գոյություն ունեցող տեղեկատվական ռեսուրսների մեծ մասը վերահսկվում է այս կամ այն հայկական հասարակական կազմակերպության կողմից, որոնք այդ ՁԼՄ-ի օգնությամբ փորձում են բնակչությանը հասցնել տեղեկատվություն իրենց գործունեության մասին, ինչպես նաև այլ տեղեկատվություն՝ կապված հայերի և Հայաստանի հետ:

Մակայն հայկական լրատվամիջոցների համար էական հիմնախնդիր է, ինչպես արդեն նշեցինք, անբավարար ֆինանսավորումը, ինչը թույլ չի տալիս այդ ՁԼՄ-ին անգամ նվազագույն անհրաժեշտ գովազդային քարոզչություն կազմակերպել տեղի հայ բնակչության շրջանում դրանց բաժանորդագրվելու համար: Լուրջ դժվարություններ կան նաև ՁԼՄ տարածման սեփական ցանցերի բացակայության հետ կապված. «Ռուսամուլի» ցանցի օգտագործումն այդ նպատակով գրեթե անհնար է՝ հենց «Ռուսամուլի» առաջադրած խիստ անձեռնտու պայմանների պատճառով:

Հասարակական կազմակերպությունների կամ եկեղեցու միջոցով ՁԼՄ տարածման համակարգը չի արդարացնում իրեն, քանի որ, նախ և առաջ, բոլոր ՁԼՄ-ի համար չէ, որ այդ հնարավորությունը կա: Այսպես, ՌՀՄ տեղի բաժանմունքների մեծամասնությունը «Երկրամաս» թերթը չի տարածում, քանի որ

ՌՀՄ շրջանային բաժանմունքն ինքն է հրատարակում իր թերթը՝ «ՌՀՄ» անունով, որն էլ տարածում են տեղի բաժանմունքները: Սակայն վարչական կարգով պարտադրվող թերթը տեղի բաժանմունքները միայն գնում են, բայց տարածումը շատ թույլ հիմքերի վրա է՝ ՌՀՄ տեղի բաժանմունքների մեծամասնության պասիվության պատճառով:

Հայ բնակչության հետ տեղեկատվական աշխատանքին լուրջ հարված էր նաև ՌՀՄ շրջանային բաժանմունքի 2003թ. ընդունած որոշումը Կրասնոդարի երկրամասում հայկական բոլոր թերթերը փակելու անհրաժեշտության մասին, ինչն արվում էր միասնական թերթի՝ «ՌՀՄ»-ի հրատարակման համար համայնքների ջանքերը միավորելու նպատակով: Դրանից հետո Կուբանում համայնքների կողմից հրատարակվող մի քանի հայկական թերթեր՝ «Մաշտոց» (Կրասնոդար), «Կռունկ» (Արմավիր), «Հայկական լուրեր» (Սոչի), փակվեցին: ՌՀՄ ֆունկցիոներներին չհաջողվեց փակել միայն «Երկրամաս» անկախ և Նովոռոսիյսկի հայկական համայնքի «Լույս» թերթերը: Սակայն եթե համայնքների հրատարակած թերթերի («Մաշտոց» Կրասնոդարում, «Կռունկը» Արմավիրում, «Հայկական լուրերը» Սոչիում) ընդհանուր տպաքանակը կազմում էր մոտ 10.000 օրինակ, ապա այժմ տպագրվող «ՌՀՄ»-ի տպաքանակը չի գերազանցում 4-5 հազար օրինակը: Տեղի բնակչությանն իր գործունեության մասին տեղեկացնելու հարցում առկա հիմնախնդիրը հանգեցրեց այն բանին, որ ՌՀՄ Սոչիի բաժանմունքը որոշեց 2010թ. վերսկսել սեփական թերթի թողարկումը:

Այս առումով հետաքրքիր են 2010թ. փետրվարին Կրասնոդարի մի շարք շուկաներում (Կենտրոնական կոլտնտշուկա, Կոռ-

պերատիվ շուկա, «Միշուտկա», «Գարանտ») առևտուր անող հայերի շրջանում անցկացված հարցման արդյունքները: Հարցումն անցկացրել էին «Երկրամաս» թերթի բաժանորդ կամավորականները: 300 հարցվածներից միայն 21-ն (հարցվածների ընդհանուր թվի 7%-ը) է իրեն համարել հայ սփյուռքյան մամուլի մշտական ընթերցող, իսկ 177 մարդ (հարցվածների 59%-ը) ընդհանրապես չգիտեր, որ Կրասնոդարում հայկական մամուլ կա:

Ներկայացնում ենք Ռուսաստանի հարավում (ՀԴՕ և ՀԿԴՕ) հրատարակված և այսօր հրատարակվող հայկական պարբերականների ցանկը: Տվյալների ձեռքբերման հարցում մեզ օժանդակել է Ռուսաստանի հայկական սփյուռքի մամուլի հավաքորդ Վ.Հարությունյանը (Մոսկվա):

Ռուսաստանի հարթակի (Հարթակային դաշնային օկրուգ (ՀԴՌՕ) և Հյուսիսային դաշնային օկրուգ (ՀԴՌՕ) հայկական քառասյան կազմակերպությունները

Քաղաքը	Մեկնետունը (կայքը)	Դեկավայրը	Գտնատեղամասային տվյալները	Այլ տեղեկություններ
1. Կրասնոդար	Ռուսաստանի հայկերի «Երկրագառ» թերթը <i>yerkramas.org</i>	Գլխ. խմբագիր՝ Տիգրան Թավադյան	Հասցե՝ ք. Կրասնոդար, 350063, Սուփոլորովի փող. 49 Հեռ./ֆաքս՝ (+861) 2671798, (+ 8918) 0262446, (+ 8918) 3234256 Էլ. փոստ՝ info@yerkramas.org	Լույս է տեսնում 1996-ից, Կրասնոդարում: Հիմնադրվել է Էդնոբարապետական հետազոտությունների կենտրոնի կողմից: Տպագրվում է 17,000 տպագրության: Թերթը լուսնորեն է հայերեն ներդրվում: Հիմնականում գետնորդած են ՀՀ, ԼՂՀ, Ջավախքի, Սփյուռքի նորություններ, վերլուծություններ, հարցազրույցներ և այլն:
2. Կրասնոդար	Ռուսաստանի հայկերի սփյուռքյան հասարակական-քաղաքական երկրամասային թերթը <i>mashrafs.ru</i>	Գլխ. խմբագիր՝ Միհեր Մխրնջյան	Հասցե՝ ք. Կրասնոդար, 350020, Օրլենսկայա փող. 48/1 2, գրասենյակ 21 Հեռ./ֆաքս՝ (+861) 2559314 Էլ. փոստ՝ kubansar@rambler.ru	Լույս է տեսնում 2002թ. մայիսից, ռուսերեն լեզվով:
3. Կրասնոդար	«Խաչքար» ամսագիրը <i>khachkar.ru</i>	Գլխ. խմբագիր՝ Քրիստոսափոր Մխիթարյան	Հասցե՝ ք. Կրասնոդար, 350000, Գիմնազիկյան-կայա փող 87/1 2. Հեռ./ֆաքս՝ 2627815, 2627850 Էլ. փոստ՝ khachkar@yandex.ru admin@khachkar.ru editor@khachkar.ru	Կրասնոդարի հայկական սնշակութային «Խաչքար» կենտրոնի ամսագիրն է: 2007-ից լույս է տեսնում հայերեն, ռուսերեն, անգլերեն:

	Քաղաքը	Տնվանումը (կայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
4.	Մոսկի	«Армянский вестник» («Հայկական բանբեր») թերթ	Գլխ. խմբագիր՝ Մնասիստ Մնտուկյան		Հայկական «Մյան» միության թերթն է: Լույս է տեսնում 2010թ. մարտից:
5.	Վոլգոգրադ	«Լուսավորիչ» թերթ <i>sbgevozg.ru/lusavorich.php</i>	Գլխավոր խմբագիր՝ Գայանե Քոչարյան	Հասցե՝ ք. Վոլգոգրադ, 400119, Տուլսկի փող. 14 շենք Հեռ. (+8442) 473527 Էլ. փոստ՝ kochar@telekom.ru	Հոգևոր-մշակութային ամսաթերթը լույս է տեսնում 2003թ. օգոստոսից Վոլգոգրադի հայերի հոգևոր հովիվ, հայր Մալխիայի նախաձեռնությամբ և Հայ Առաքելական եկեղեցու՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս Ներսիսյանի օրհնությամբ: Թերթը տպագրվում է հայերեն և ռուսերեն: Ձևտեղվում են կոթեր Հայաստանի պատմության, ավանդույթների և ներկա վիճակի մասին, աշխարհիկ և հոգևոր միությունների, կրթական կենտրոնների գործունեության, ինչպես նաև տեղի հայերի խնդիրների և հաջողությունների, տեղի հայ եկեղեցու իես կապված իրադարձությունների մասին:
6.	Վոլգոգրադ	«Չվարթնոց» թերթ	Գլխավոր խմբագիր՝ Գայանե Քոչարյան	Էլ. փոստ՝ kochar77@mail.ru	Վոլգոգրադի քաղաքային «Հայ Միություն» ՀԿ-ի տպագիր օրգանն է: Լույս է տեսնում հայերեն, ռուսերեն: Լուսաբանում է տեղի հայ համայնքի կյանքը, միջազգային իրադարձությունները: Թերթում տեղ են գտնում ՀՀ, ԼՂՀ և Հայությանն առնչվող վերլուծական կոտրեր:

Քաղաքը	Անվանումը (կայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
7.	Վրդցոբքրայ «XXI век. Новое поколение» («XXI դար. նոր սերունդ») անվագիր			Լույս է տեսնում 2008- ից:
8.	Անապա «Բարև, Կուրախ» թերթ «Арменистика» («Հայագիտություն») անվագիր			Լույս է տեսնում 2009- ից:
9.	Պլատիբոքրակ «Բեքենի՛ ղոմ» («Բեկլակն սուն») անվագիր			Լույս է տեսնում 1994- ից:
10.	Պլատիբոքրակ «Բեկլակն սուն») անվագիր	Գլխ. խմբագիր՝ Միխայլ Մանվելով	Էլ. փոստ՝ manvelov.76@mail.ru	Ստավրոպոլի և Թեղեթի հայերի թերթն է: Լույս է տեսնում 2004թ. մայիսի 15-ից, ռուերեն, 4500 տպաքանակով: Թերթը տարածվում է Ստավրոպոլի երկրամասում և Հյուսիսկովկասյան հանրապետություններում: «Армянская Ланорамա» թերթը մրցանակի է արժանացել «Տարվա ղեկներ» մրցանակաբաշխության «Տարվա թերթ» անվանակարգում («Երկրամաս» թերթի կողմից):
11.	Զեկեռուրանի «Армянская Ланорамա» («Հայկական Լանայնապատիեր») թերթ	Գլխ. խմբագիր՝ Մանվելով	Էլ. փոստ՝ info@miasin.ru geo@miasin.ru	Կայքում կարելի է ծանոթանալ ՀՀ, ԼՂՀ և Հայտության նորություններին: Կան նաև հրատարակություններ և տեղեկատու բաժիններ (Հայկական եկեղեցիներ, ՀԿ-ներ, ուսումնական, հայկական ՋԼՄ, հայկական կայքեր հաստատություններ ենթաբաժիններով):
12.	Գոնի Օոստով Miasin.ru հայկական պորտալ	Կայքի խմբագիր՝ Գեորգի Ղասաբով	Էլ. փոստ՝ info@miasin.ru geo@miasin.ru	

	Քաղաքը	Անվանումը (կայքը)	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Մյլ տեղեկություններ
13.	Դոնի Ռոստով	<i>hayazg.info</i>	Մերգեյ Սայաբով	Հասցե՝ Դոնի Ռոստով, 344029, Պլուժնայա փող. 16 Հեռ.՝ (+863) 2831870, (+7 918) 5580127 Էլ. փոստ mailbox@hayazg.info	«Հայ ազգ» մշակութային-լուսավորչական հիմնադրամի հանրագիտարանն է:
14.		«Դոնի Նախիջևան» թերթ	Գլխ. խմբագիր՝ Վ.Աբրահամյան	Էլ. փոստ mnao@mail.ru	Լույս է տեսնում 2000-ից:
15.	Նովորոսիյսկ	«Լույս» թերթ			Լույս է տեսնում 1992-ից:
16.	Պլատիգորսկ	« <i>Пятигорский армянский вестник</i> » («Պլատիգորսկի հայկական թերթ») թերթ			Լույս է տեսնում 1997-ից:
17.		« <i>Заря</i> » (Արշալույս) թերթ			Չպատիր գյուղի թերթն է: Լույս է տեսնում 1931-ից:
18.	ՀՕՀ-Ալանիա ք. Վլադիկավկազ	«Էրեբունի» թերթ <i>eribyni.ru</i>	Գլխ. խմբագիր՝ Վրիտոր Լիտվինով	Հասցե՝ ՀՕՀ-Ալանիա ք. Վլադիկավկազ, Գ.Բակի 16 փող. Հեռ.՝ (+8672) 537899 Էլ. փոստ՝ mail@eribyni.ru	Չյատիր գյուղի թերթն է: Լույս է տեսնում 1931-ից: Հյուսիսային Օսիայի «Էրեբունի» ազգային-մշակութային միավորման տպագիր օրգանն է: Լույս է տեսնում 2009թ. մայիսից: Թերթում գետնոված են Հայաստանի մշակույթի, ավանդույթների, տեղի հայ համայնքի մասին նյութերը:

№	Մտվանունը	Երջանը	Հրատարակման տարեթվերը
Թեղթեր			
1	«Համայնք»	ք. Պլատիեզով, Ստավրոպոլի երկրամաս	1992-[?] 1991-1992
2	«Մին»	գ. Չալսոլի, Ռոստովի մարզ	2000-[?] 1993-[?]
3	«Արագիր»	ք. Արմավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	2004
4	«Արցախ»	ք. Արմավիր, Կրասնոդարի երկրամաս	2001
5	«Արցախ» - Հյուսիսային Կովկաս»	ք. Ստավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	1999-[?]
6	«Армвизь наш дом = Արմավիրը մեր տունն է» («Կրունկ» թերթի հավելված)	ք. Պլատիեզով, Ստավրոպոլի երկրամաս	2000
7	«Арменистика» («Հայագիտություն»)	ք. Վոլգոգրադ, Վոլգոգրադի մարզ	?
8	«Армения — Волга» («Հայաստան - Վոլգա»)	ք. Նոչի, Ռոստով, Ռոստովի մարզ	2000-2003
9	«Արմինի»	ք. Ստավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	2005
10	«Армянские вести» («Հայկական լուրեր»)	ք. Մատրախան, Աստրախանի մարզ	2001-2004
11	«Возрождение» («Վերածնունդ»)	ք. Արմավիր, Կրասնոդարի երկրամաս	1995-[?]
12	«Восток» («Վոստոկ»)	ք. Ստավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	1996-1998
13	«Կրունկ»	ք. Վոլգոգրադ, Վոլգոգրադի մարզ	2008
14	«Կրունկ»	ք. Արմավիր, Կրասնոդարի երկրամաս	1993-2003
15	«Սալսոլ»	ք. Կրասնոդար, Կրասնոդարի երկրամաս	1999-[?]
16	«Սիստին»	ք. Տուսպան, Կրասնոդարի երկրամաս	1996-1997
17	«Սիստին»	ք. Արմավիր, Կրասնոդարի երկրամաս	2008-2009
18	«Նաիր»	ք. Մաշհեռուսի, Կրասնոդարի երկրամաս	2001
19	«Նաիր»	ք. Կրասնոդար, Կրասնոդարի երկրամաս	1995-2002
20	«Наша жизнь» («Մեր կյանքը»)	ք. Կրասնոդար, Կրասնոդարի երկրամաս	1999-2007
21	«Մեր եկեղեցին»	ք. Կրասնոդար, Կրասնոդարի երկրամաս	1999-2007
22	«Նոր միտ»	ք. Նոչի, Ռոստով, Ռոստովի մարզ	1999-2007

№	Անվանումը	Շրջանը	Հրատարակման տարեթվերը
23	«Նոր Նավիջևան»	ք. Զոնի Ռոստով, Ռոստովի մարզ	1991
24	«Память» («Հիշողություն»)	ք. Մավրոպ, Արիզելայի Հանրապետություն	2006
26	«Լույս Հավշենի»	ք. Սոչի, Կրասնոդարի երկրամաս	1991–1992
27	«Սլան»	ք. Սոչի, Կրասնոդարի երկրամաս	1996–[?]
28	«Ставроградпресс» («Ստավրոդարյան մամուլ»)	ք. Ստավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	2002
29	«Սուրբ Գևորգ»	ք. Գեորգիևսկ, Ստավրոպոլի երկրամաս	[?]
30	«Ուրարտու»	ք. Կոլծակի, Կոլգորայի մարզ	2001
31	«Ուրարտու»	ք. Ջելենկուհուսկ, Ստավրոպոլի երկրամաս	2005–2006
32	«Ուրարտու» («Вместе лучше» («Միասին ավելի լավ է») Թերթի ներդիր	ք. Ջելենկուհուսկ, Ստավրոպոլի երկրամաս	2006–2009
33	«Խաչար»	ք. Պլատիգորսկ, Ստավրոպոլի երկրամաս	1993–?
34	«Էրևուներ»	ք. Ստավրոպոլ, Ստավրոպոլի երկրամաս	1994–[?]
Անագրեր			
1	«Հավանյար»	ք. Պլատիգորսկ, Ստավրոպոլի երկրամաս	1995–[?]
2	«Армянский вестник» (Հայկական բանբեր»)	ք. Պլատիգորսկ, Ստավրոպոլի երկրամաս	2005
3	«Армянский» («Հայկական տարեաներակ»)	ք. Պլատիգորսկ, Ստավրոպոլի երկրամաս	[?]
4	«Вестник армянской истории» («Հայոց պատմության բանբեր»)	ք. Պլատիգորսկ, Ստավրոպոլի երկրամաս	2008
5	«Ջարթներ»	ք. Սոչի, Կրասնոդարի երկրամաս	1991
6	«Խաչար»	ք. Կրասնոդար, Կրասնոդարի երկրամաս	1998

Խոսելով ինտերնետ-լրատվամիջոցների մասին՝ անհրաժեշտ է նշել, որ վերջին ժամանակներս նկատվում է Ռուսաստանի հարավում ստեղծվող հայկական կայքերի թվի ավելացում: Ամենաշատ այցելուներ ունի «Երկրամաս» թերթի կայքը (*yerkramas.org*), որն օրական միջինն այցելում է մինչև 2500 մարդ: Այս թվից մոտ 200 մարդ կամ ընդհանուր թվի 8%-ը Ռուսաստանի հարավից է: Առաջատարներն են Կրասնոդարի երկրամասի, Ռոստովի մարզի և Մտավրոպոլի երկրամասի ընթերցողները:

Ներկայացնենք Ռուսաստանի հարավի հայկական կայքերի ոչ մեծ (ոչ ամբողջական) ցանկը.

Աղյուսակ 4.3

Ռուսաստանի հարավի հայկական կայքեր

	Քաղաքը	Անվանումը	Կայքը
1.	Կրասնոդար	Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթ	yerkramas.org
2.	Կրասնոդար	Ժողովրդական պարի «Արին բերդ» համույթ	arin-berd.am/index.php
3.	Կրասնոդար	Մշակույթի և կրթության «Նարեկ» կենտրոն	center-narek.ru
4.	Կրասնոդար	«Խաչքար» ամսագիր	khachkar.ru
5.	Կրասնոդար	Հայկական մշակութային կենտրոն	armkc.ru
6.	Դոնի Ռոստով	Դոնի Նոր Նախիջևանի հայկական համայնք	nnao.ru
7.	Դոնի Ռոստով	Հայկական ինտերնետ ընկերակցություն	miasin.ru
8.	Դոնի Ռոստով	Տեղեկատվական պորտալ	nahichevan.ru
9.	Կուրսնի Սլավյանսկ	Հայկական ինտերնետ-պորտալ	ararat-online.ru
10.	Վլադիկավկազ	«Էրեբունի» թերթ	eribyni.ru/
11.	Վոլգոգրադ	Սուրբ Գևորգ հայկական եկեղեցի	sbgevorg.ru

Ռուսաստանի հարավում հայկական էլեկտրոնային ՋԼՄ ընդհանրապես չկա: Հայաստանյան արբանյակային հեռուստա-ալիքների հասանելիությունը և սփյուռքյան ռուսալեզու ալիքը Մոսկվայից չեն բավարարում Ռուսաստանի հարավի հայկական կառույցների գործունեության մասին տեղի հայ բնակչությանն իրազեկելու խնդիրները: Հայկական կառույցները փորձեր արել են հիմնելու սեփական էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ: 2002թ. Կրասնոդարում երկու ամիս, *FM* հաճախականությունում շաբաթը մեկ եթեր էր արձակվում «Հայաստանի ձայն» կեսժամյա ռադիոհաղորդումը, որը բացել էր «Երկրամաս» թերթը, սակայն այս նախագիծը չստացավ տեղի բիզնես շրջանակների աջակցությունը, իսկ թերթը սեփական ֆինանսական հնարավորություններ չունեի այն շարունակելու համար: Պյատիգորսկում, «Պրովինցիա» ռադիոկայանում հինգ ամիս (2008-2009թթ.), շաբաթը երկու անգամ 15-ական րոպեով հեռարձակվում էր «ՌՀՄ ձայն» («*Голос САР*») ռադիոհաղորդումը, որը նույնպես փակվեց ֆինանսական պատճառներով:

Ներկայումս ինտերնետ-ռադիոյի և ինտերնետ-հեռուստա-տեսության ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների մասին հայտարարում է Կրասնոդարի Հայկական մշակույթի «Խաչքար» կենտրոնը, որը հովանավորներ ունի:

Եվ, վերջապես, Սոչիի Լազարևսկի շրջանում տեղի ձեռներեցներից մեկը ստեղծել է «*TB3B*» հեռուսարձնկերությունը, որն ամեն օր տեղի հեռուստատեսությամբ եթեր է հեռարձակվում մեկժամյա տեղեկատվական բլոկով, որը հասանելի է Կրասնոդարի երկրամասի Լազարևսկի և մասամբ՝ Տուապսեի շրջանների տարածքում: Հեռուստարձնկերությունն ինքը չի ներկայանում

որպես հայկական, սակայն իր ծրագրերում օգտագործում է տեղի հայկական սփյուռքի կենսագործունեության մասին տեղեկատվությունը և *TBAPM.Py*. արբանյակային հեռուստաալիքի ներկայացուցիչն է:

Իրականացվող գործունեության մասին բնակչությանն իրազեկող միջոցներից կարելի է նշել նաև *SMS*-առաքումները, որն առաջինը նախաձեռնեց «Երկրամաս» թերթը: Հետագայում դրանք սկսեցին օգտագործել նաև Կրասնոդարի մի շարք հասարակական կազմակերպություններ:

Առանձին խնդիր է տեղի հայ սփյուռքի գործունեության մասին ոչ հայ բնակչության իրազեկումը: Հայկական կառույցները պարբերաբար նման փորձեր ձեռնարկում են տեղի կամ տարածաշրջանային ԶԼՄ-ին հրավիրելով հայկական կազմակերպությունների միջոցառումներին, սակայն, եթե սկզբում ոչ հայկական լրատվամիջոցների լրագրողները հաճույքով էին մասնակցում և լուսաբանում հայկական միջոցառումները, ապա հետագայում այդ փոխհարաբերությունները հաճախ սկսեցին առևտրային բնույթ ստանալ, այսինքն՝ հայկական կառույցներին առաջարկվում էր համապատասխան գումար վճարել մի որևէ հրապարակման կամ հեռուստատեսությամբ մի որևէ սյուժե ցուցադրելու համար: Այսպես, անգամ Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սզո արարողությունների մասին տեղեկատվության տպագրման համար հայկական կազմակերպությունները հարկադրված են վճարել:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին հասարակական-քաղաքական կյանքում և տնտեսական գործունեության մեջ տեղեկատվության վերահսկողության նշանակության ընկալումը

Թափանցում է նաև հայկական սփյուռքի շրջանակներ: Հայտնի է, որ հայ ձեռներեցները Ռուսաստանի հարավի մի շարք շրջաններում ներդրումներ են կատարում տեղի (ոչ հայկական) ՋԼՄ-ում և նույնիսկ դրանց մի մասի սեփականատերն են: Սակայն այս փաստերն ամենևին էլ չեն նշանակում, թե այդ լրատվամիջոցները որևէ կերպ և պլանաչափորեն աջակցում են հայկական սփյուռքի նպատակներին և խնդիրներին կամ ոչ հայ բնակչությանն այլ լրատվամիջոցներից ավելի ակտիվ են տեղեկացնում տեղի հայկական սփյուռքի ներկայացուցիչների մասին:

5. ՀՌ ՀԱՅԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Համացանցում Ռուսաստանի հարավային մարզերի հայերը քավական ակտիվ են: Նրանք ոչ միայն ստեղծում և պահպանում են համայնքային ու մշակութային նշանակության կայքեր, այլև ակտիվորեն օգտագործում են ռուսալեզու սոցիալական ցանցերը՝ հայկական խմբեր ձևավորելու և այլազգի համախոհների հետ հաղորդակցվելու նպատակով: Այս բաժնում մենք կդիտարկենք, թե ինչպիսի խմբավորումներ են ստեղծում ՀՌ հայերը, ինչն է նրանց միավորում, և կնկարագրենք նրանց գործունեության հիմնական ուղղությունները:

Ներհամայնքային կապեր

Ռուսաստանի հարավի հայերը մեծ և փոքր համայնքների ներխմբային շփումների նպատակով մեծապես օգտվում են ռուսալեզու սոցիալական ցանցերից, ինչպիսիք են *Vkontakte.Ru-ն* և *Odnoklassniki.Ru-ն*: Այսպես, ստեղծվում են մարզային ցանցեր, որոնք ներգրավում են հայաբնակ տարածքների ներկա և նախկին բնակիչներին: Նման խմբերից են՝ «*АРМЯНЕ КРАСНОДАРСКОГО КРАЯ*», «*Армяне с Юга*», «*СОЧИНСКИЕ АРМЯНЕ*», «*Пятигорские АРМЯНИ*», «*АРМЯНЕ ЮГА РОССИИ!!!*»: Առանձնապես շատ են Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստովի) հայերի խմբերը: Այստեղ գործում են լայն սպեկտրի բազմաթիվ ցանցային խմբեր և կայքեր: Նշենք Նոր Նախիջևանի մի շարք հայկական խմբեր՝ *Vkontakte.Ru* ցանցի «*nahichevan.ru*» ակումբը, որը *www.nahichevan.ru* տեղե-

կատվական համայնքային կայքի ցանցային խումբն է, «НОР-НАХИЧЕВАНСКИЕ АРМЯНЕ», «Молодежная организация “Нор-Нахичеван” - Армянская Диаспора Дона», «АРМЯНСКАЯ ДИАСПОРА РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ г.РОСТОВА-НА-ДОНУ», «Команда КВН “БЕЗ ПРОПИСКИ” Армянская Община» և *Odnoklassniki.ru* ցանցի «Ростовские АРМЯНЕ», «АРМЯНЕ В РОСТОВЕ_НА_ДОНУ» խմբերը: Տարածքային հիմքով միավորվելու և շփվելու հարթակ է հանդիսանում նաև Նոր Նախիջևանի հայկական համայնքի *Чалтырь.ru* (www.chaltyr.ru) կայքը, որտեղ գործում է ֆորում (*խմբերի և ֆորումի մասին տե՛ս Աղյուսակ 5.1-ում*):

Նման տարածքային խմբերը նպաստում են ոչ միայն տարածքային ինքնության պահպանմանը, այլև համայնքների ինքնակազմակերպմանը: Այս համացանցային տիրույթներն օգտակար գործիք են, որոնք թույլ են տալիս նաև կազմակերպել համայնքների առօրյան:

Բացի տարածքային խմբերից, գործում է նաև Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթի ցանցային ակումբը՝ *Газета армян России “ЕРКРАМАС”*, որը միավորում է 1800 մասնակից: Այս խմբում հիմնականում միավորված են անդամներ, որոնց ընդհանուր հետաքրքրությունը քաղաքական և հասարակական հարցերի (այդ թվում՝ Հայաստանի ներքին կյանքը) շուրջ է:

Աղյուսակ 5.1

Տարածքային հիմքով միավորված խմբեր

	Խմբի/կայքի անունը	Խմբի/կայքի հասցեն	Մասնակիցների թվաքանակը
1.	АРМЯНЕ КРАСНОДАРСКОГО КРАЯ	vkontakte.ru/club644704	980
2.	Армяне с Юга	vkontakte.ru/club630128	320
3.	СОЧИНСКИЕ АРМЯНЕ	vkontakte.ru/club184417	340
4.	Пятигорские АРМЯНИ	vkontakte.ru/club273502	1000
5.	АРМЯНЕ ЮГА РОССИИ!!!	Odnoklassniki.ru	50
6.	Форум на Чалтырь.ру	www.chaltyr.ru/forum/	305
7.	Газета армян России "ЕРКРАМАС"	vkontakte.ru/club118661	1800
8.	nahichevan.ru	vkontakte.ru/club1266188	250
9.	НОР-НАХИЧЕВАНСКИЕ АРМЯНЕ	vkontakte.ru/club484874	120
10.	Молодежная организация "Нор-Нахичеван" - Армянская Диаспора Дона	vkontakte.ru/club1212030	620
11.	АРМЯНСКАЯ ДИАСПОРА РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ г.РОСТОВА-НА-ДОНУ	vkontakte.ru/club954146	280
12.	Команда КВН "БЕЗ ПРОПИСКИ" Армянская Община	vkontakte.ru/club1156856	300
13.	Ростовские АРМЯНЕ	Odnoklassniki.ru	675
14.	АРМЯНЕ В РОСТОВЕ_НА_ДОНУ	Odnoklassniki.ru	260

Ձևավորվում և գործում են նաև ուսանողական խմբեր, որոնց հիմնական նպատակը հայ ուսանողների կամ մասնագիտական խմբերի միջև ծանոթություններ հաստատելն է (*խմբերի մասին տե՛ս Աղյուսակ 5.2-ում*): Բացի դրանից, նման խմբերի միջոցով կազմակերպվում են միասնական գործողություններ՝ կապված ինչպես բուհական կյանքի, այնպես էլ՝ համայնքային իրադարձությունների հետ: Այս խմբերը, ելնելով իրենց բնույթից, մեծ չեն լինում, և դրանց կազմն արագ է փոփոխվում, չնայած ավարտած ուսանողները շարունակում են անդամակցել խմբին:

Ուսանողական խմբեր

	Խմբի/կապի անունը	Խմբի/կապի հասցեն	Մասնակիցների թվաքանակը
1.	АРМЯНЕ КубГУ-ВМЕСТЕ МЫ СИЛА!!! группа для общения, знакомства и встреч армян Кубанского Государственного Университета	vkontakte.ru/club530596	80
2.	Армяне КубГАУ Армяне сельхоза, объединимся	vkontakte.ru/club709125	70
3.	Армянская Студенческая Ассоциация "АРАРАТ" (АСА "АРАРАТ") Краснодар, Россия	vkontakte.ru/club539919	470
4.	Юристы КГАУ Краснодар	vkontakte.ru/club393433	270

Կովկասյան եղբայրություն, միավորումներ այլազգիների հետ

Ելնելով ընդհանուր առմամբ ՌԴ հարավային մարզերում քաղաքական ակտիվությունից և էթնիկ բազմազանությունից՝ հայերի մասնակցությունը սոցիալական ցանցերում չի սահմանափակվում լոկալ՝ զուտ հայկական խմբավորումներով: Հայկական խմբերը և անհատները լայնորեն ներգրավված են կովկասյան՝ առավել ընդհանրական բազմաթիվ խմբերում:

ԱՊՀ-ում բնակվող երիտասարդ հայերի մեջ գոյություն ունեն բավական մեծ խմբավորումներ, որոնք տարածում են միացյալ Կովկասի և համակովկասյան համերաշխության գաղափարները: Նման խմբերն ակտիվ են հատկեպես *Vkontakte.Ru* սոցիալական ցանցում, որը գերիշխող դիրք ունի ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ԱՊՀ մի շարք երկրներում:

Այսպիսի միավորումները հանգեցնում են նաև ավելի փոքր կլաստերների ձևավորմանը: Օրինակ, առաջանում են խմբեր,

որտեղ հիմնական դերակատարները մի քանի կոնկրետ ազգությունների ներկայացուցիչներն են: Նման խումբ է, օրինակ, մոտ հազար հայերի, ինգուշների, վրացիների և հույների միավորող «*Армяне, Ингуши, Грузины и Греки друзья навеки*» ակումբը:

Նմանատիպ խմբավորումներն ունենում են նաև ակնհայտ քարոզչական ուղղվածություն և իրենց առջև խնդիր են դնում տեղեկատվական օժանդակություն ցուցաբերել Հայաստանին: Այսպիսի ուղղվածություն ունեն ոչ միայն այն խմբերը, որոնք քննարկում են լայն շրջանակի թեմաներ: Բավական ազդեցիկ են սոցիալական ցանցերում այն խմբերը, ուր հայերը փորձում են միավորվել Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների՝ այդ երկրի բնիկ ժողովուրդների հետ: Այդպես ստեղծվում են հայերի, թալիշների, լեզգիների, ավարների միավորումներ, որոնք փորձում են քարոզչություն վարել Ադրբեջանի իշխանությունների կողմից երկրի բնիկ ազգերի ճնշման քաղաքականության դեմ: Նման խմբերի օրինակ է «*МИР ПРОТИВ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА!*» խումբը: Այս խմբի կանոնադրության մեջ հստակ նշված է, որ այն ստեղծվել է ոչ թե Ադրբեջանի, այլ այդ երկրի իշխանությունների դեմ: Խումբն ունի 8 հազարից ավելի մասնակից:

Ցանցում գործում են նաև մեծ և ակտիվ շատ խմբեր, որոնցում հայերը փորձում են ազդեցիկ քարոզչական քաղաքականություն վարել ոչ միայն Ադրբեջանի, այլև Թուրքիայի դեմ՝ կրկին համագործակցելով բոլոր մյուս ազգային խմբերի հետ, որոնք հետապնդում են համանման շահեր: Այսպես, բացի կովկասյան բնիկ ազգերից, գոյություն ունեն կապեր նաև հունական, ասորական, պարսկական խմբերի հետ: Նմանատիպ խմբերից են՝ «*ИСТИННАЯ*

ИСТОРИЯ КАВКАЗА» և «Ассамблея Коренных Народов Азербайджана»: Օրինակ՝ հակաթուրքական «ПРОТИВ ТУРЕЦКОГО ИМПЕРИАЛИЗМА, ЗА СВОБОДУ КУРДИСТАНА И КИПРА» խմբի ղեկավարներից մեկը հայ է: Ադրբեջանի և Թուրքիայի դեմ լայնածավալ տեղեկատվական պայքար է տանում նաև «Антитуран» խումբը, որը www.antituran.org կայքի համակարգող խումբն է: Այստեղ ևս ներգրավված են ինչպես հայեր, այնպես էլ Կովկասի և Ադրբեջանի բնիկ ազգությունների ներկայացուցիչներ:

Հայերը նաև ակտիվ են զուտ հյուսիսկովկասյան խմբերում, որտեղ հայկական թեման ընդհանրապես բացահայտորեն չի շոշափվում: Օրինակ, 12 հազարանոց «КАВКАЗ, Я ТЕБЯ ЛЮБЛЮ» խմբի 6 ադմինիստրատորներից մեկը հայ է: Եվ տվյալ խումբը համագործակցում է մի շարք մաքուր հայկական խմբերի հետ: Նմանատիպ խմբերից են՝ «КАВКАЗ СИЛА... ~~~~ ~~~~ДРУЗЬЯ С НАМИ... ~~~ ~~~~~ВРАГИ ПОД НАМИ...» և «[союз КАВКАЗских республик] АБХАЗИЯ] АДЫГЕЯ-01] АЗЕРБАЙДЖАН] АРМЕНИЯ] АЛАНИЯ-ОСЕТИЯ] ГРУЗИЯ] ДАГЕСТАН-05] ИНГУШЕТИЯ-06] КАБАРДИНО-БАЛКАРИЯ-07] КАРАЧАЕВО-ЧЕРКЕСИЯ-09] КРАСНОДАРСКИЙ КРАЙ-23] СТАВРОПОЛЬСКИЙ КРАЙ-26] ЧЕЧНЯ-95]»:

Գործում են նաև պոզիտիվ քարոզչության նպատակ հետապնդող խմբեր, ինչպիսին է, օրինակ՝ հայ-իրանական հարաբերությունների բարելավմանն ուղղված «ИРАН-АРМЕНИЯ» ակումբը: Հարկ է առանձին նշել խաղաղարար խմբերի մասին, որոնք փորձ են անում հաշտեցնել Կովկասի և Անդրկովկասի ազգություններին, ներառյալ հայերին և ադրբեջանցիներին: Սակայն նման խմբերը բավական պասիվ են: Օրինակ, «КАВКАЗ, ЗАКАВКАЗЬЕ -

ДРУЖБА НАРОДОВ!!! խումբը, որը մոտ 400 անդամ ունի և ադմինիստրատորներից մեկը հայ է, վերածվել է գովազդային «աղբանոցի» և իր նպատակներին չի համապատասխանում:

Աղյուսակ 5.3

Հայկական մասնակցությամբ բազմազգ խմբեր

	Խմբի/կայքի անունը	Խմբի/կայքի հասցեն	Մասնակիցների թվաքանակը
1.	Армяне,Ингуши,Грузины и Греки друзья навеки	vkontakte.ru/club2180305	920
2.	МИР ПРОТИВ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА!	vkontakte.ru/club2658491	8037
3.	ИСТИННАЯ ИСТОРИЯ КAVKAZA	vkontakte.ru/club7581208	17400
4.	Ассамблея Коренных Народов Азербайджана	vkontakte.ru/club14966793	84
5.	ПРОТИВ ТУРЕЦКОГО ИМПЕРИАЛИЗМА, ЗА СВОБОДУ КУРДИСТАНА И КИПРА	vkontakte.ru/club44682	200
6.	Антитуран	vkontakte.ru/club608742	248
7.	КАВКАЗ, Я ТЕБЯ ЛЮБЛЮ	vkontakte.ru/club1490068	12000
8.	КАВКАЗ СИЛА... ~~~~~ ДРУЗЬЯ С НАМИ.... ~~~~~ ВРАГИ ПОД НАМИ....	vkontakte.ru/club578691	8500
9.	[союз КАВКАЗских республик АБХАЗИЯ] АДЫГЕЯ-01] АЗЕРБАЙДЖАН] АРМЕНИЯ] АЛАНИЯ-ОСЕТИЯ] ГРУЗИЯ] ДАГЕСТАН-05] ИНГУШЕТИЯ-06] КАБАРДИНО-БАЛКАРИЯ-07] КАРАЧАЕВО-ЧЕРКЕСИЯ-09] КРАСНОДАРСКИЙ КРАЙ-23] СТАВРОПОЛЬСКИЙ КРАЙ-26] ЧЕЧНЯ-95]	Odnoklassniki.ru	12500
10.	ИРАН-АРМЕНИЯ	vkontakte.ru/club1344763	100
11.	КАВКАЗ, ЗАКАВКАЗЬЕ - ДРУЖБА НАРОДОВ!!!	vkontakte.ru/club932597	400

Այսպիսով, Ռուսաստանի Դաշնության հարավի հայկական համայնքները մեծապես օգտագործում են սոցիալական ցանցերն ինչպես ներհամայնքային ինքնակազմակերպման, այնպես էլ այլ համայնքների և Հայաստանի հետ կապերը սերտացնելու համար: Այս մեխանիզմով համայնքների ներկայացուցիչներին տեղեկատվություն են տրամադրում ինչպես տվյալ երկրի ու սեփական համայնքի, այնպես էլ Հայաստանի և Հայության մասին: Բացի այդ, ակնհայտ է, որ նման խմբերի մի մասն իր առջև խնդիր է դնում աջակցել Հայաստանին՝ Ադրբեջանի և Թուրքիայի տեղեկատվական հարձակումներից պաշտպանվելու հարցում: Նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս ուժեղացնել Հայաստանից դուրս բնակվող հայերի ներհամայնքային կապերը, ստեղծել համայնքների միջև նոր կապեր և համակարգված տեղեկատվական գործողություններ իրականացնել, որոնք անհնարին կլինեին առանց սոցիալական ցանցերի հարթակների:

6. ՀԱՅԵՐԸ ՀՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԶ.

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հայկական կառույցները (հասարակական կազմակերպությունները և մեդիա-ռեսուրսները) սահմանափակ հնարավորություններ ունեն ազգային լսարանի շրջանակներում, որոնց ուղղված է նրանց գործունեությունը: Ինչպես վերը նշեցինք, այդ լսարանը մեծ չէ:

Հարկավոր է նշել, որ հայկական սփյուռքի ներկայացուցիչները վերջին տարիներին ավելի ակտիվ են դրսևորվում հասարակական կազմակերպությունների և ոչ ազգային մեդիա-ռեսուրսների գործունեության մեջ, և եթե պետական կառավարման մեջ հայերի ներգրավվածությունը նվազագույն է, ապա տնտեսությունում, գիտության մեջ, սպորտում և գործունեության այլ տեսակներում հայերի ներկայությունը զգալի է և որոշակի դեր է խաղում տեղի և տարածաշրջանային իշխանությունների կողմից որոշումների ընդունման պարագայում: Հայեր կան տարբեր տեսակի հասարակական կազմակերպությունների, մարզական ֆեդերացիաների, ստեղծագործական միությունների ղեկավարների շարքում: Սակայն հայերի այս խմբի գործունեությունը, որպես կանոն, ոչ մի կերպ կապված չէ հայկական հասարակական գործունեության հետ և ոչ մի ազդեցություն չունի հայկական սփյուռքի կազմակերպվածության կամ հիմնախնդիրների լուծման վրա:

Հայերի դերը վերջին ժամանակներս զգալի է դառնում նաև մեկ այլ ոլորտում՝ քաղաքականությունում: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում տարեցտարի ավելի մեծ թվով հայեր են ընտրվում, ընդ որում՝ նրանցից շատերն անմիջական կապ

ունեն հայկական համայնքների հետ՝ կամ հայկական համայնքների նախագահներ են, կամ այդ համայնքների վարչությունների անդամներ: Նրանցից ոմանք նույնիսկ տեղի ինքնակառավարման մարմինների ղեկավարներ են ընտրվում (օրինակ, Կրասնոդարի երկրամասի Ապշերոնի շրջանի Խաղիժենակ քաղաքի դումայի նախագահը քաղաքի հայկական համայնքի նախկին նախագահ Արթուր Թաթուլյանն է): Հայեր կան նաև Ռուսաստանի հարավի սուբյեկտների օրենսդիր մարմիններում (Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի մարզում, Ստավրոպոլի երկրամասում, Ադիգեայի Հանրապետությունում): Սակայն նրանց գործունեությունն իշխանության ընտրովի մարմիններում գործնականում ոչ մի կերպ կապված չէ հայ բնակչության շահերի լոբբինգի հետ: Հայկական հարցերով նրանք ստիպված են հիմնականում զբաղվել այն ժամանակ, երբ ինչ-որ կոնֆլիկտային իրավիճակ է ծագում հայերի հետ, որն ազգամիջյան դիմակայության բնույթ է ստանում:

Վերջին ժամանակներս ծագում են նաև այնպիսի իրավիճակներ, երբ հայկական համայնքների ղեկավարությունը տեղական ընտրություններում պաշտպանում է այն հայերի թեկնածությունը, որոնց առաջադրել է տեղի իշխանությունը, այլ ոչ թե ինքը՝ համայնքը: Այդպես պատահեց Սոչիում, 2010թ. ընտրությունների ժամանակ, երբ տեղի վարչակազմը ներկայացրեց ազգությամբ հայ թեկնածուների («Միասնական Ռուսաստան» կուսակցության անդամներ) ցանկը և հայկական համայնքին առաջարկեց պաշտպանել նրանց թեկնածությունը: Հայկական համայնքն այդպես էլ արեց՝ հրաժարվելով պաշտպանել քաղաքական այլ կուսակցություններից առաջադրված հայերին:

Եթե խոսելու լինենք ռուսական քաղաքական կուսակցու-

թյուններում հայերի գործունեության մասին, ապա, որպես կանոն, հայերը մտնում են իշխող կուսակցության շարքերը: Մի ժամանակ դա «Մեր տունը Ռուսաստանն է» կուսակցությունն էր, այնուհետև՝ «Հայրենիք» և «Միասնություն» կուսակցությունները, այսօր այն «Միասնական Ռուսաստանն է»: Հիմնականում կուսակցություն են մտնում բիզնեսի ներկայացուցիչները, երիտասարդությունը, որը ցանկանում է կարիերա անել, հայկական համայնքների ոչ քիչ թվով ներկայացուցիչներ ևս Ռուսաստանի իշխող կուսակցության անդամ են: Նրանց հիմնական դերը կուսակցության գործունեության ֆինանսավորումն է և ազգային լոբբիստական որևէ գործունեություն կուսակցության միջոցով նրանք չեն իրականացնում: «Միասնական Ռուսաստանի» անդամ լինելն, իր հերթին, հայ ձեռներեցներին որոշակի առավելություններ է ապահովում:

Ռուսաստանի հարավում պետական կառավարմանը հայերի մասնակցությունը տարբեր շրջաններում տարբեր է: Այսպես, էթե Կրասնոդարի երկրամասի վարչակազմում ղեկավարների և միջին օղակի պաշտոնյաների շարքում հայեր չկան, ապա Ռոստովի մարզում առնվազն երկու հայ փոխնահանգապետ են: Հայերը վարչակազմերի ղեկավարներ են նշանակվում նաև հայերով հոծ բնակեցված կամ զգալի թվով հայ բնակչություն ունեցող շրջաններում, օրինակ՝ Ռոստովի մարզի Մյասնիկովսկի շրջանում, Սոչիի Լազարևսկի շրջանի Վերին Լոռ գյուղում, Կրասնոդարի երկրամասի Մեծ Սոչիի, Տուապսեի և Ապշերոնի շրջանների տարածքային մարմիններում և այլն:

Նշենք նաև, որ մի շարք շրջաններում կենցաղային և կիսապաշտոնական ազգայնականության միտում կա, որը հանգեցնում է այն բանին, որ աշխատել կամ պետական ծառայողի

կարիերայի սանդուղքով վեր բարձրանալ ցանկացող հայերը ստիպված են փոխել ազգանունները կամ ամուսնական կապի մեջ մտնել տիտղոսակիր ազգի ներկայացուցիչների հետ: Սա բնորոշ է ինչպես Ռուսաստանի հարավի «սլավոնական», այնպես էլ մահմեդական շրջաններին: Վերջին ժամանակներս պատահել են նաև եզակի դեպքեր, երբ պետական կառույցներում կարիերայի մեջ, նույնիսկ բիզնեսում վեր բարձրանալու համար հայերը ստիպված իսլամ են ընդունել (Չեչնիա, Կաբարդինա-Բալկարիա):

Տեղի իշխանության հետ հայկական հասարակական կառույցների և մեդիա-ռեսուրսների փոխհարաբերությունները, որպես կանոն, հանգում են այն բանին, որ հայկական սփյուռքի ներկայացուցիչները մասնակցում են իշխանության ստեղծած միջազգային բնույթի հասարակական կառույցներում, որոնք գրեթե ոչ մի դեր չեն խաղում որոշումների կայացման գործում և ազդեցություն չունեն հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

Իշխանության հետ հայկական կառույցների փոխհարաբերության գործոն են դառնում նաև տարբեր մակարդակի ընտրությունները, որոնց ընթացքում իշխանությունը փորձում է վաստակել հայկական ընտրազանգվածի աջակցությունը, ինչի առնչությամբ էլ հանդիպումներ է անցկացնում հայկական համայնքների ղեկավարության հետ և մասնակցում է զանազան ցուցադրական միջոցառումների:

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՌ-ՈՒՄ

Հայկական Սփյուռքի առաջացման ամենավաղ փուլերում հայերը, ներգաղթելով որևէ երկիր, որոշակի ժամանակահատված հետո կարողանում էին ոչ միայն ինտեգրվել, այլև խթանել տեղի սոցիալական, մշակութային և առաջին հերթին՝ տնտեսական կյանքը: Դա էր պատճառը, որ միջնադարում հաճախ տարբեր քաղաքներում և երկրներում հատուկ արտոնություններ էին շնորհվում հայերին, ներգաղթի կազմակերպման և ինքնության պահպանման հնարավորություն տալիս: Լինելով հմուտ առևտրականներ ու արհեստավորներ՝ նրանք դառնում էին տեղի տնտեսական օղակի կարևոր (որոշ դեպքերում՝ նույնիսկ գլխավոր) բաղկացուցիչները¹: Հայ գործարարներից շատերը և՛ անցյալում, և՛ այժմ հաճախ են ընդգրկվում տարբեր երկրների ամենահարուստ մարդկանց ցուցակներում, իսկ նրանց կապիտալը հասնում է միլիոնների և միլիարդների:

Համաձայն վիճակագրական տվյալների, ամբողջ աշխարհում սփռված Հայության ամենամեծ զանգվածը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում: Հայերը, որոնց թվաքանակը, համաձայն 2002թ. համառուսաստանյան մարդահամարի, հասնում է 1,5 մլն-ի (ոչ պաշտոնական հաշվարկով՝ մինչև 2.5-3 մլն-ի), հաստատվել են ռուսական տարածքներում դեռևս 11-12-րդ դարերից: Հաստատվելով Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններում՝ նրանք

¹ Հիշենք թեկուզ Լիբանանի օրինակը, որտեղ 20-րդ դարի 60-70-ականներին երկրի ամբողջ արդյունաբերության մեջ ներդրված կապիտալի 1/3-ը բաժին էր ընկնում հայ ձեռնարկատերերին:

բավական արագ հարմարվել են նոր պայմաններին, գործուն կերպով ներգրավվել երկրի տնտեսական կյանքի մեջ: Ռուսաստանի հայերի հիմնական զբաղմունքը հնուց ի վեր վաճառականությունն էր¹: Հայերն առաջատար դիրք ունեին Ռուսաստանի հարավում կատարվող առևտրի, ինչպես նաև ռուս-իրանական և Ռուսաստանի միջոցով Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտրի ասպարեզում: Հայ վաճառականության շերտը Ռուսաստանում ձևավորվել և զարգացել է 17-րդ դարում, իսկ 18-րդ դարում հայ վաճառականները սկսել են իրենց միջոցները ներդնել արտադրության մեջ, կազմակերպել են ջուլհակային մանուֆակտուրաներ, արդյունահանության տարբեր ձեռնարկություններ: Հայ արդյունաբերողներ Սաֆարովը, Խաստատովը, Իսախանովները, Լազարյանները և ուրիշներ տարբեր տեսակի մանուֆակտուրաներ հիմնեցին Ռուսաստանի հարավային և կենտրոնական շրջաններում, Ուրալում՝ դրանով իսկ նպաստելով կապիտալիստական արտադրության զարգացմանը Ռուսաստանում:

Ռուսաստանում ներգաղթի ամենավաղ փուլերում հայերի հաստատման հիմնական վայրերից մեկը Հարավային Ռուսաստանն էր: Աստրախանում, Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Ստավրոպոլում հսկայական հայկական գաղութի ներկայությունը ենթադրում էր նաև շատ մեծ ֆինանսական ներկայություն տնտեսության բոլոր ոլորտներում: Հայերի

¹ Դեռևս 10-11-րդ դդ. հայ վաճառականներն առևտուր են արել վոլգյան բուլղարների հետ, իսկ նրանցից ոմանք էլ հաստատվել են պետության մայրաքաղաք Մեծ Բուլղարում (ներկայիս Բուլգար քաղաքը Թաթարստանում, ՌԴ):

առևտրաարդյունաբերական գործունեությունը զգալի էր Հարավային Ռուսաստանի տնտեսական զարգացման գործում: Նրանց ձեռքում էին կենտրոնացած առևտրի մի շարք ճյուղեր, ձեռնարկություններ, ֆաբրիկաներ, նավթահորեր: Հարավային Ռուսաստանում առևտրի զարգացմանը նպաստում էր նաև շատ հարմար աշխարհագրական դիրքը, որից հետոքեն օգտվում էին հայ առևտրականները:

Հայ առևտրաարդյունաբերողները, Ռուսաստանում բարձր գնահատականի արժանանալով, երկիրը ներկայացնում էին տարբեր միջազգային ասպարեզներում: Օրինակ՝ Ռուստովում 1850-ականներին հիմնվել էր Հակոբ Քուշնարյանի ծխախոտի ֆաբրիկան: Այն արժանացել էր 1882թ. Մոսկվայի համառուսաստանյան ցուցահանդեսի, 1883թ. եվրոպական գիտական ընկերության ոսկե մեդալների, Չիկագոյի՝ 1893թ., Անտվերպենի՝ 1894թ. համաշխարհային ցուցահանդեսների բարձրագույն պարգևներին: 1899թ. այս ընկերության հիմնական կապիտալը հասնում էր 1,5 մլն ռուբլու¹: Տարբեր ժամանակներում հայ վաճառականների ներդրումներն օգտագործվում էին Դոն գետի վրա բեռնափոխադրումային նավարկությունը զարգացնելու համար²:

Հայկական համայնքների թվական աճին ու զարգացմանը գուզահեռ մեծանում էին հայերի ներկայությունն ու ազդեցությունը: Երևան էին գալիս հայ մեծահարուստներ ու բարերարներ, որոնք շուտով դառնում էին տվյալ համայնքի ոչ ֆորմալ

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, ՀՀ ԳԱԱ հր., Երևան, 1981:

² <http://valerytishkov.ru/engine/documents/document809.doc>

հովանավորներն ու առաջնորդները: Նրանց օժանդակությամբ էին հիմնվում եկեղեցիներ, դպրոցներ, բարեխնամ հաստատություններ, հիվանդանոցներ և համայնքային այլ կառույցներ: Անհրաժեշտ է նշել, որ հայ մեծահարուստների թվում կային մարդիկ, որոնք ներդրումներ էին կատարում տարբեր հասարակական աշխատանքներում և մեկենասություն անում կարիքավորներին՝ անկախ նրանց կրոնական և ազգային պատկանելությունից: Այս մարդկանց թվին էր պատկանում Կ.Ե. Ավագովը, որը դարձել էր բարեգործության յուրատեսակ լեգենդ: Քաղաքացիական պատերազմի տարիներին Ռոստովի բնակչությունը, ի հիշատակ վերջինիս բարեգործության, թույլ չէր տվել կողոպտիչներին թալանել նրա ունեցվածքը¹: Հայ գործարարները շարունակում են իրենց մեկենասությունը նաև նոր ժամանակներում: Այսպես, Կրասնոդարի երկրամասի Նովոմիխայլովսկ գյուղում 2008թ. հիմնված մզկիթը կառուցվում է բարեգործական միջոցների հաշվին, որի համար առաջինը զգալի գումարներ են տրամադրել հայ գործարարներ Նիկոլայ և Իլյա Քոչինյանները²:

Խորհրդային Միության փլուզումից հետո սկսվեց հայերի գաղթի նոր ալիք, հայերի մի հոծ զանգված հաստատվեց ՌԴ մայրաքաղաքում և արդեն իսկ կայացած հայկական համայնքներ ունեցող Հարավային Ռուսաստանում: Ներգաղթյալները հիմնականում սկսեցին զբաղվել առևտրով, թեթև և սննդի արդյու-

¹ http://www.history.vuzlib.net/book_o064_page_24.html

² <http://forum.hayastan.com/index.php?showtopic=37969;>
<http://www.kubmarket.ru/news/view/13307>

նաբերությամբ, շինարարությամբ: Ոմանց հաջողվեց աշխատանք գտնել պետական կառույցներում:

Նոր ժամանակաշրջանում նույնպես հայ համայնքի ներկայացուցիչներից շատերը կարողացան կարողություն կուտակել և դառնալ խոշոր բիզնեսմեններ: Ազգությամբ հայ ձեռնարկատերերի ձեռքում են գտնվում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տնտեսական ճյուղեր (օրինակ՝ նավթային, էլեկտրականություն մատակարարող ընկերություններ):

Իսկ ընդհանուր գծերով նկարագրելու դեպքում կարելի է ասել, որ Ռուսաստանի հարավում «հայկական արմատներով» ֆինանսական ներկայությունը տեղավորվում է հիմնականում փոքր և միջին բիզնես կատեգորիաներում:

Այժմ համառոտ ներկայացնենք հայ համայնքների ֆինանսական ներկայության պատկերը ՌԴ Հարավային դաշնային օկրուգի¹ առանձին հատվածներում՝ օգտվելով տեղեկատվության հասանելի աղբյուրներից:

¹ Հարավային դաշնային օկրուգի մեջ են մտնում 2 հանրապետություն (Ադիգեա, Կալմիկիա), 3 մարզ (Աստրախանի, Ռոստովի, Վոլգոգրադի) և 1 երկրամաս (Կրասնոդարի): Նշված բոլոր շրջանների հայ գործարարների մասին գտնվել է տեղեկատվություն, բացառությամբ Կալմիկիայի:

Աղիզեայի Հանրապետություն

Հայերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների՝ 15.268 մարդ է (բնակչության 3.4%), ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ 25 հազար

Աղիզեայում հայերը հաստատվել են հնագույն ժամանակներից: Ջրաղվել են անասնապահությամբ, այգեգործությամբ, բանջարանոցային բույսերի մշակությամբ, ծխախոտագործությամբ, արհեստներով և առևտրով, հիմնել են ծխախոտի գործարան, 1899թ. առևտրի տուն (Մայկոպում):

Ներկայումս հանրապետության շատ շրջաններում Հայաստանից ներգաղթածները նշանակալի դեր են խաղում տեղական ինքնակառավարման մարմիններում¹, փոքր և միջին բիզնեսում: Հայերը հիմնականում մեծ տնտեսական ակտիվություն են ցուցաբերում անտառային պաշարների, փայտամշակման, առևտրի, հասարակական սննդի, Մայկոպի քաղաքային հասարակական տրանսպորտի ոլորտներում:

Աղիզեայում հայտնի են Նիկոլայ և Իլյա Քոչինյանները, որոնք Աղիզեայի երկու գյուղերում կառուցել են հայկական եկեղեցիներ:

Աստրախանի մարզ

Հայերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների
6309 մարդ է (բնակչության 0.64%)

¹ Օրինակ՝ Կիրովյան գյուղական բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմնում 2008թ. ընտրված 13 պատգամավորներից 9-ը հայեր են:

Աստրախանը վաղ ժամանակներից Ռուսաստանի, ինչպես նաև ամբողջ կովկասյան տարածաշրջանի կարևորագույն ռազմական և տնտեսական կենտրոնն է՝ շնորհիվ նպաստավոր աշխարհագրական դիրքի (մոտ է Հնդկաստան և Պարսկաստան տանող ճովային ուղիներին, ինչպես նաև Ռուսաստանի դարպասն է դեպի Կասպից ծով): Սա ևս շատ կարևոր պայման էր այստեղ հայ ֆինանսական հզոր ներկայության համար:

Աստրախանում հայերի մասին առաջին հիշատակությունները հասնում են 14-րդ դարի առաջին կես: Պետրոս 1-ինը և նրա հաջորդները, առևտրին և արհեստագործությանը զարկ տալու նպատակով, հայերին արտոնագրերով հրավիրել են Աստրախան: Տեղի հայ վաճառականները կարևոր դեր են խաղացել ռուս-իրանական և հատկապես Ռուսաստանով կատարվող տարանցիկ առևտրում (նրանց առևտրային գործարքների տեսակարար կշիռն այդ առևտրում կազմել է 50%-ից ավելին) և կուտակել հսկայական ֆինանսական միջոցներ:

18-րդ դ. Աստրախանը մետաքսի ու բամբակի՝ համառուսաստանյան նշանակություն ունեցող արդյունաբերական կենտրոնն էր, իսկ ջուլիակային ձեռնարկությունների 90%-ը պատկանում էր հայերին: Աստրախանում հատկապես հայտնի էին Սարգիս Օհանյանի, Պյոտր Վարդանյանի, Առաքել Իսայանի, Ռևազ Զալիկի գործարանները, նավթարդյունաբերությամբ զբաղվող Լիոնոզովները, խոշոր ձկնարդյունաբերողներ Աղաբաբովները (Աղաբաբյաններ), Ազամովները: 1904թ. տվյալներով՝ քաղաքի 1230 ձեռնարկություններից ու խանութներից 197-ը պատկանում էր հայերին:

Ավանդույթները շարունակվում են մինչև այժմ: Աստրախանի մարզի բրնձի 1/3-ն ապահովում է հայ գործարար Վաչագան Խեչոյանը¹:

Կրասնոդարի երկրամաս

Հայերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների՝ 274,6 հազար է (բնակչության 5.4%), ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ 800 հազար²

Կրասնոդարի երկրամասում հայերը սկսել են հիմնավորվել 15-16-րդ դդ.: Հայ վերաբնակները զբաղվել են անասնապահությամբ, հողագործությամբ (ծխախոտագործություն, այգեգործություն, եգիպտացորենի մշակում): Քաղաքներում հայերը հիմնել են սննդարդյունաբերական ձեռնարկություններ՝ բամբակագտիչ, ձեթի գործարաններ, ջրաղացներ, ծխախոտի ֆաբրիկաներ: Հայտնի են խոշոր վաճառական տներ: Օրինակ՝ Եկատերինոդարի ձեթի գործարանների, ջրաղացների, ինչպես նաև խոշոր խանութների մեծ մասը պատկանել է հայ վաճառականներ *Բոգոբսուկովների*, *Տարասովների*, *Ավեդովների* ընկերություններին: Հայ վաճառականներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել «կարմիր» ապրանքների (այսինքն՝ գործվածքի) առևտուրը: Իսկ 20-րդ դարում Արմավիրում գործում էր հայ ձեռնարկատերերի «Աղթամար» ընկերակցությունը, որը կենտրոնացրել էր օձառի ողջ արտադրությունը:

¹ <http://www.volgaru.ru/index.php?oth&article=8360&PHPSESSID=b04773beca966e6be2a9fc7dffee788>

² Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:

Կուրբանի ամենահարուստ հայերն Արմավիրի ձիթհան գործարանի տեր Ավեղովներն էին: «Ավեղով եղբայրներ» ապրանքային ընկերությունները, որոնք արտադրում էին մինչև հեղափոխական Ռուսաստանի էլիտար ձեռք, կառուցել էին Ռուսաստանի ամենամեծ ձիթհան գործարանը: Մինչև այսօր Կուրբանում պահպանվել են Ավեղովների հարստության և փառքի վկայությունները: «Ավեղով» բրենդն այսօր էլ հայտնի է ձեռքարտադրության ոլորտում, իսկ Ավեղով եղբայրների երբեմնի սեփականություն հանդիսացած շենքերից մեկը վերջերս վերանորոգվել է և այժմ Կրասնոդարի պատմական հուշարձանների շարքում է: Իսկ 20-րդ դարի 10-ական թվականներին Տարասովների (Թորոսյանների) առևտրատնտեսական կայսրությունը Կուրբանի ձեռնարկատիրությունը զարգացնող այլ խոշոր ընկերությունների շարքում զբաղեցնում էր առաջին տեղը¹:

Խորհրդային Միության փլուզումից հետո նոր ներգաղթած հայերը ծավալել են աշխույժ ձեռնարկատիրական գործունեություն, հիմնել բազմաթիվ առևտրական ձեռնարկություններ, տարբեր միջնորդական ֆիրմաներ, բանկային հաստատություններ, գյուղական վայրերում՝ ֆերմերային տնտեսություններ, շինարարական կազմակերպություններ: Այժմ հայտնի խոշոր գործարարները ներկայացված են *Աղյուսակ 7.1*-ում:

¹ http://www.mashtots.ru/archive/photo_8.htm

Աղյուսակ 7.1

Կրասնոդարի երկրամասի հայ խոշոր գործարարները

	Անուն, ազգանուն	Կազմակերպությունը, պաշտոնը
1.	Ալիկ Մկրտչյան	«Դոնբասի արդյունաբերական միություն» կորպորացիայի գլխավոր տնօրեն
2.	Սերգեյ Գեորգիի Ղարիբջանյանց	«Պլաստֆորմ» ՓԲԸ տնօրեն, Կոչիկի արդյունաբերության համար պարագաների խոշորագույն հայրենական արտադրող
3.	Սամվել Վարդանի Զաքարյան	«Արմենիա» առևտրի տան տնօրեն (p. Սոչի)
4.	Սերգեյ Նիկոլայի Գալիցկի (Հարությունյան)	Ռուսական խոշոր գործարարներից, «Մագնիտ» մանրածախ առևտրի ցանցի համասեփականատեր, «Կրասնոդար» ֆուտբոլային ակումբի նախագահ
5.	Գեորգի Խաչատուրի Պողոսյան	«Մենատեպ» բանկի տնօրեն, Նովոռոսիսկ, հայրուսական գործարար ասոցիացիայի անդամ
6.	Արտեմ (Արտաշես) Գրիգորի Հովանեսով	Բժիշկ, գործարար, ՌԴ մշակույթի վաստակավոր գործիչ
7.	Գեորգի Ավետիսի Անտոնյան	«Նովոռոսիսկէլէկտրոն» ԲԲԸ գլխավոր տնօրեն, տնօրենների խորհրդի անդամ (Նովոռոսիսկ), Կրասնոդարի երկրամասի ծովային գործերով խորհրդի անդամ
8.	Ադաբեկ Գեորգիի Բադալով	«Մակտրեն-Նավթա» ԲԲԸ գլխավոր տնօրեն (p. Տեմրյուկ)
9.	Կամո Տիգրանի Հայրապետյան	Գործարար
10.	Գրիգորի Արտաշի Սահակյան	Գործարար
11.	Ալեքսանդր Ազատի Սարգսյան	Գործարար

Վոլգոգրադի մարզ

Հայերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների՝ 26.974 մարդ է (բնակչության 1%), ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ 30-35 հազար¹

Վոլգոգրադում ոչ մեծ հայկական համայնք է ձևավորվել 19-րդ դարում: Հայ վաճառականության դիրքերը բավական ամուր էին մինչև հեղափոխությունը, հայ առևտրականության ներկայացուցիչները կարևոր դեր են խաղացել շրջանի բազմաթիվ արդյունաբերական կենտրոնների (քիմիական արդյունաբերության, էներգետիկայի ձեռնարկություններ) կառուցման գործում: Վոլգոգրադում հասկապես հայտնի են եղել և մեծ հարգանք են վայելել Սերեբրյակով (Արծաթագործյան) եղբայրները, որոնք հայ համայնքի այլ նշանավոր ներկայացուցիչների՝ վաճառականների ու արհեստավորների հետ միասին կառուցել են բազմաթիվ գործարաններ և հասարակական նշանակության կառույցներ:

Այսօր էլ հայերը հաջողությամբ զբաղվում են փոքր և միջին բիզնեսով, մասնավորապես՝ փոքրիկ սրճարաններ, խանութներ, կոշիկի վերանորոգման արհեստանոցներ, ավտոծառայություններ, տաքսի ծառայություններ և այլն: Շրջանի փոքր բիզնեսի ձեռնարկատերերի մեծ մասը հայեր են: Միայն 2007-2009թթ. Վոլգոգրադի շրջանում հայերը ստեղծել են մոտ 1000 աշխատատեղ²: Հայտնի հայ գործարարները նշված են *Աղյուսակ 7.2*-ում:

¹ <http://www.yerkramas.org/2010/05/06/armyanskaya-diaspora-volgograd-ochen-aktivna-%E2%80%93-vice-gubernator/>

² <http://www.molodoi-gazeta.ru/article-5734.html>

Աղյուսակ 7.2

Վոլգոգրադի մարզի հայ գործարարները

	Անուն, ազգանուն	Կազմակերպությունը, պաշտոնը
1.	Սերգեյ Հակոբյան	«Վոլգա-Ավիա-Էքսպրես» ընկերության տնօրեն
2.	Սերգո Սարգսյան	«Նոյ» տրանսպորտային ընկերության տնօրեն
3.	Արմեն Մկրտչյան	Խոշոր գործարար, Վոլգոգրադի Հայկական մշակութային կենտրոնի ղեկավար

Ռոստովի մարզ

Հայերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների՝ *109.994 մարդ* է (բնակչության 2.5%), ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ *135 հազար մարդ*¹

Ռոստովի հայ առևտրականները դեռևս 19-րդ դարի կեսերից հայտնի էին իբրև կենդանական ճարպի մշակումն իրականացնող միակ գործարարներ: Հայտնի էր Մելքոնով-Եզոկովի արտադրական-առևտրական հնագույն ֆիրման, որն ուներ բուրդ լվացող գործարաններ: 20-րդ դարի սկզբին Նոր Նախիջևանի (այժմ՝ Դոնի Ռոստով քաղաքի մի մասը) հայ բնակչության 21.327-ից 645-ը առևտրականներ էին: Ներկայիս հայտնի խոշոր գործարարների ցանկը ներկայացված է *Աղյուսակ 7.3*-ում:

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003:

Աղյուսակ 7.3

Ռոստովի մարզի հայ գործարարները

	Անուն, ազգանուն	Կազմակերպությունը, պաշտոնը
1.	Ֆերդինանդ Զուլումաթի Խաչատրյան	«Ռոստովգազոպարատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն, Ռոստովի առևտրաարդյունաբերական պալատի կառավարման խորհրդի անդամ
2.	Սեմյոն Խուրդոն	Հայտնի գործարար, «Ռոստովի սպառողական միության» նախագահ
3.	Բողոս Հակոբյան	Ձեռնարկատեր, «Բողոս» արևածաղկի ձեթի արտադրող
4.	Ստեփան Մկրտչի Շորշորով	Խոշոր գործարար, ՌԴ Պետդումայի 3-րդ, 4-րդ, 5-րդ գումարման պատգամավոր
5.	Հարություն Մուրմայան	«Պարտնյոր» ԲԲԸ գլխավոր տնօրեն, «Սոկոլ» ԲԲԸ գլխավոր տնօրեն, Ռոստովի հայ համայնքի ղեկավար
6.	Գեորգի Սերգեյի Օսիպյան	«ԴոնՍերվիսԱվտո» ՍՊԸ գլխավոր տնօրեն, հայ-ռուսական գործարար ասոցիացիայի անդամ
7.	Մովսես Գրիշայի Միրաբյան	Անհատ ձեռներեց
8.	Աշոտ Գևորգի Խմբիկյան	«Մթերքների կայսրություն» ՍՊԸ գլխավոր տնօրեն
9.	Սերգեյ Միխայիլի Սայադով (Սայադյան)	Գործարար, «Հայազգ» համահայկական մշակութային-լուսավորչական հիմնադրամի նախագահ

Պատմության հարթակից դիտարկելիս կարելի է փաստել, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր հայերը շարունակում են առաջատար և կարևոր տեղ զբաղեցնել Հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքում: Կան ինչպես խոշոր գործարարներ, այնպես էլ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներ: Հայ գործարարներից շատերը մասնակցում են հայ համայնքների կյանքին և իրենց ներդրումն ունենում հայության կազմակերպման գործում: Հաճախ հենց գործարարներն են դառնում տեղի հայ համայնքային կառույցների ղեկավարներն ու ֆինանսավորողները (վերջին երևույթն ունի թե՛ դրական և թե՛ բացասական կողմեր): Հայ գործարարները համարվում են այն հիմնական գործոններից մեկը, որը նպաստում է հայ համայնքների համախմբմանն ու զարգացմանը: Հայության խնդիրներով մտահոգ գործարարներն այն ներուժն են, որոնց և մտավորականության համագործակցության միջոցով կարող է հնարավոր դառնալ ոչ միայն հայկական համայնքների պահպանումը, այլև զարգացումն ու Հայաստանի հետ կապերի ամրապնդումը:

8. ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՆԵՐՈՒԺԸ ՀՌ-ՈՒՄ

ՀՌ-ում Հայության մտավոր ներուժի գնահատումն ունի կարևոր նշանակություն ինչպես հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրների համատեքստում, այնպես էլ ընդհանրապես սփյուռքահայության մտավոր ներուժի, դրա համախմբման, կազմակերպման և ի շահ Հայաստանի ու Հայության կիրառման համար:

Դարեր շարունակ գործելով ՀՌ-ում՝ հայերը տվել են բազմաթիվ անվանի գիտնականներ և մշակույթի գործիչներ: Նրանք ունեցել են կարևոր դերակատարություն ինչպես ՀՌ հայկական համայնքների և ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ համայն Հայության կյանքում:

ՀՌ Հայության մտավոր ներուժը ներկայացնում ենք ըստ գիտության և մշակույթի բնագավառների՝ անդրադառնալով նախկինում և ներկայում հանդես եկող գործիչներին: ՀՌ-ում գործունեություն ծավալած հայ գործիչներին ներկայացնելիս անդրադառնում ենք ոչ միայն ՀՌ տարածքում ծնված և այստեղ գործունեություն ծավալած գործիչներին, այլև ՀՌ-ում ծնված և այլ վայրերում (հիմնականում՝ Ռուսաստանի այլ շրջաններ, մասամբ Հայաստան) գործունեություն ծավալած նշանավոր գործիչներին:

Գիտություն

Ռուսաստանյան գիտության զարգացման գործում ՀՌ հայերն ունեցել են կարևոր դերակատարություն՝ ներկայացված լինելով գրեթե բոլոր գիտական ոլորտներում:

Պատմագիտություն

19-րդ դարում պատմության, արևելագիտության ասպարեզում ահռելի աշխատանք է կատարել նորնախիջևանցի պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը, որը հիմնականում գործել է Պետերբուրգում: Քրիստափոր Փորքեշեյանն ուսումնասիրել է Նոր Նախիջևանի հայերի ժողովրդական բանահյուսությունը, իսկ հնագետ Եվգենի Բայբուրջյանը մասնակցել է հնագիտական մի շարք արշավախմբերի Ռուսաստանում, ապա տեղափոխվել Հայաստան:

Այժմ ՀՌ-ում պատմությամբ են զբաղվում նոր և նորագույն պատմության մասնագետ Ռադմիլա Այրիյանը, Ակսայի ռազմապատմական թանգարանի փոխտնօրեն Պյոտր Ավակովը: Յուրի Սասդովը գլխավորում է Հայ իշխանական և արքունական տոհմերի և ընտանիքների ժառանգների ասոցիացիա գիտահետազոտական միությունը (Պյատիգորսկ): Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գալինա Ասրիյանցը զբաղեցնում է Ստավրոպոլի պետական համալսարանի Մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարգիս Կազարովը զբաղվում է ընդհանուր պատմության ինդիքներով: Սերգեյ Սայադովը գլխավորում է «Հայազգ» հիմնադրամը, որը տարբեր ժամանակների հայ գործիչների մասին հանրագիտարանային տվյալներ տրամադրող համացանցային նախագիծ է իրականացնում (*ru.hayazg.info*): Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Մարիանա Էլոյանը բազմաթիվ պատմափիլիսոփայական հետազոտությունների հեղինակ է, իսկ Վիկտոր Հակոբյանը զբաղվում է Կովկասի ազգագրությամբ: ՀՌ որոշ պատմաբաններ այժմ գործում են

Մոսկվայում (Օլեգ Հայրապետովը՝ Պատմության ֆակուլտետի Ռուսաստանի պատմության (19-րդ դ. սկիզբ - 20-րդ դ.) ամբիոնի դոցենտ) և Սանկտ Պետերբուրգում (ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Յուրի Պետրոսյանը՝ Սանկտ Պետերբուրգի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի մասնաճյուղում: Նա Արևելյան ձեռագրերի և փաստաթղթերի հիմնադրամի վարիչն է, Տոկիոյի Արևելքի պատմության ինստիտուտի պատվավոր տնօրենը, Տոկիոյի «Սոկա» համալսարանի պատվավոր դոկտոր է) և այլն:

Լեզվաբանություն և գրականագիտություն

Լեզվաբանության ասպարեզում առաջին նշանավոր գործիչներից է ծնունդով Աստրախանից հայազետ Նիկիտա Բերոնը, որը Պետերբուրգի համալսարանում հիմնադրել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և պաշտոնավարել որպես վարիչ: Թյուրքական լեզուների մասնագետ Լազար Բուդաղովը նույնպես հիմնականում դասավանդել է Սանկտ Պետերբուրգում, ինչպես նաև Թիֆլիսում: Նորնախիջևանցի լեզվաբան, գրականագետ Աբրահամ Զամինյանը դասավանդել է Էջմիածնի հոգևոր սեմինարիայում: Լեզվաբան Պյոտր Պատկանովը ծավալել է մանկավարժական գործունեություն՝ Աստրախանում, Ստավրոպոլում և Նոր Նախիջևանում՝ աշխատելով որպես հայոց լեզվի ուսուցիչ: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Բուդաղովը եղել է Լենինգրադի պետական համալսարանի Բանասիրության ֆակուլտետի դեկան, ապա Մոսկվայի պետական համալսարանի Բանասիրության ֆակուլտետի Լեզվաբանության ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ:

Այսօր ՀՌ-ում գործող հայ լեզվաբաններից աչքի են ընկնում

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անժելա Բաբայանը, որը Պյատիգորսկի պետական լեզվաբանական համալսարանի Ընտանիքի և ընտանեկան դաստիարակության կենտրոնի տնօրենն է, Ռոստովի պետական մանկավարժական համալսարանի Ռուսաց լեզվի և լեզվի տեսության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վադիմ Մելիքյանը, Տագանրոգի պետական ռադիոտեխնիկական համալսարանի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Սվետլանա Բալույանը, Հարավային դաշնային համալսարանի Համաշխարհային գրականության տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Օլգա Գայբարյանը, Տագանրոգի տեխնիկական համալսարանի դասախոս Մարինա Եսայանը, Տագանրոգի պետական ռադիոտեխնիկական համալսարանում դասավանդող մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իրինա Ծատուրովան, Թամարա Չոզգիյանը, Անդրանիկ Մալխասյանը և ուրիշներ:

Գրականություն

ՀՌ հայությունը տվել է հայ գրականության նշանավոր գործիչներ: Նրանց թվում առաջիններից էր բանաստեղծ, մանկավարժ Սերովբե Պատկանյանը, որը պաշտոնավարել է Աղաբաբյան դպրոցում: Գրող, մանկավարժ, հասարակական գործիչ Հարություն Ալամդարյանն աշխատել է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի դպրոցում: Գրող, մանկավարժ Գաբրիել Պատկանյանը՝ «Արարատ» ամսագրի հրատարակիչ-խմբագիր, թողել է հարուստ գրական ժառանգություն, հեղինակել բազմաթիվ դասագրքեր, կատարել թարգմանություններ և այլն: ՀՌ հայության

ամենանշանավոր զավակներից է գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Միքայել Նալբանդյանը, որը հեղինակ է բազմաթիվ գրական, հրապարակախոսական աշխատությունների: ՀՌ մյուս մեծանուն գործիչը ականավոր բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ Ռաֆայել Պատկանյանն է: Նա Մոսկվայում և Պետերբուրգում գործելուց հետո վերադարձել է Նոր Նախիջևան, կրթական աշխատանքներին զուգահեռ ստեղծագործել է, քարոզել ազատագրական գաղափարներ, 1880թ. Նոր Նախիջևանում հիմնադրել է արհեստագործական դպրոցը: Գրականության ասպարեզում են գործել նաև Կարա Դարվիշը (Հակոբ Գենջյան), Ալեքսանդր Կուսիկովը (Կուսիկյանց), Աշոտ Գառնակերյանը, Թորոս Խարտավաքյանը: Պետրոնի Ամատունին եղել է Ռոստովի շրջանի գրողների կազմակերպության քարտուղարը, ԽՍՀՄ Գրական ֆոնդի Ռոստովի շրջանի լիագործ: Ղևոնդ Խրիստոստունյանը որպես ուսուցիչ դասավանդել է Հյուսիսային Կովկասում, Չալտիրում և այլուր, Չալտիր գյուղում հիմնադրել է Ռ.Պատկանյանի անվան Գրական ստուդիան: Բանաստեղծուհի Սուսաննա Չալխուշյանը հիմնականում գործել է Մոսկվայում, իսկ դոնիռոստովցի Պյոտր Վիզենը եղել է Ինդիանայի համալսարանի պրոֆեսոր: Գրող, հասարակական գործիչ Մարիետա Շահինյանը, որը գործել է Ռուսաստանի տարբեր շրջաններում, դասավանդել է Դոնի Ռոստովի կոնսերվատորիայում:

Այժմ ՀՌ գրականության ասպարեզում գործում են Արա Գևորգյանը, Լեոնիդ Գրիգորյանը (Ռուսաստանի գրողների միության Ռոստովի բաժանմունքի անդամ), Գրիգոր Մազլումյանը (ՌԴ մշակույթի վաստակավոր գործիչ), Ալեքսանդր Մեսրոպյանը և այլք:

Հրատարակչություն, լրագրություն, գրադարանային գործ

Ռուսաստանում հրատարակչության ասպարեզում նշանակալի ավանդ են ունեցել Ռոստովի քաղաքային դումայի խոսնակ Սարաֆիմ Հարությունովը, Իվան Ալեկսանովը (Հովհաննես Ալեքսանյանց), Հ.Տեր-Աբրահամյանը: ՀՌ-ում հրատարակչական ասպարեզում են աշխատել նաև Կ.Շահվերդյանը, Օ.Թորգոմյանը, Ա.Հերթենեցյանը, Ս.Մյասնիկյանը, Ա.Տոմբայանը, Ս.Պապայանը, Գ.Ռեիզյանը, Ռ.Բերբերյանը, Ա.Ապրեսյանը, Հ.Մալխասյանը, Հ.Ղարագյոզյանը, Գ.Անոփյանը, Ս.Վրացյանը և այլք: Լև Շահումյանը եղել է Խորհրդային մեծ հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալը:

ՀՌ-ն ունեցել է և ունի լրագրության ասպարեզում նշանակալի ավանդ ներդրած բազմաթիվ գործիչներ: Լրագրության ասպարեզում ճանաչված գործիչներից էր Մարտին Մերջանովը, որն արժանացել է ՌԽՖՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման: Իսկ լրագրող Արկադի Հայրումյանը եղել է Դոնի Ռոստովի Սուրբ խաչ թանգարանի տնօրենը:

Գրադարանային գործի ասպարեզում ՀՌ հայերից նշանակալի գործունեություն է ծավալել ստավրոպոլցի Շուշանիկ Մանուչարյանցը: Նա պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Պետրոգրադում և Մոսկվայում, 1920թ. դարձել Վ.Ի. Լենինի անձնական գրադարանավարը: Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օհան Չուբարյանը, որը գործել է Մոսկվայում, եղել է Մոսկվայի գրադարանային ինստիտուտի փոխտեկտորը, «Библиотеки СССР» ժողովածուի գլխավոր խմբագիրը, հիմնադրել է Գրադարանային գործի պատմության և տեսության հանձնաժողովը: Նա արժանացել է ՌԽՖՍՀ մշակույթի վաստակավոր գործչի

պատվավոր կոչման:

Այսօր Դոնի Ռոստովում հրատարակչական ասպարեզում է գործում Նիկոլայ Օզանեսովը, որը «Март» մասնավոր հրատարակչության խմբագիրն է: Նկարիչ Վարդան Տեր-Վարդանյանը «Литера-Д» հրատարակչության տնօրենն է: Իրինա Մայիլյանը «Комплекс» հրատարակչական կենտրոնի գլխավոր տնօրենն է: Տիգրան Թավադյանը Կրասնոդարում հրատարակվող «Երկրամաս» ամսաթերթի հիմնադիրն ու խմբագիրն է: Քրիստափոր Մխիթարյանը «Խաչքար» ամսագրի, իսկ Գայանե Քոչարյանը՝ Վոլգոգրադի «Լուսավորիչ» թերթի գլխավոր խմբագիրներն են (ՀՌԺամանակակից մամուլի ամբողջական ցանկը տե՛ս *Աղյուսակ 4.1-ում*):

Լրագրության ասպարեզում է գործում փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Հակոբովը, որը Հարավային դաշնային համալսարանի Բանասիրության և ժուռնալիստիկայի ֆակուլտետի Զանգվածային կոմունիկացիոն միջոցների ամբիոնի պրոֆեսոր է, Ռուսաստանի ժուռնալիստների միության անդամ: Արամ Գաբրելյանովը «Ньюс Медиа» ընկերության գլխավոր տնօրենն է: Ռուսաստանի ժուռնալիստների միության անդամ Աելիտա Արոյանցը գրական լրագրության պատմության մասնագետ է: Իսկ Մարգարիտա Սիմոնյանը «Russia Today» հեռուստաալիքի գլխավոր խմբագիրն է:

Գրադարանային գործում ներկայում հայտնի է Ռոստովի շրջանային գիտական գրադարանի գիտաշխատող Քնարիկ Խարտավաքյանի անունը:

Քաղաքագիտություն

ՀՌ Ժամանակակից նշանավոր հայ քաղաքագետներից են Հս. Կովկասի պետական ծառայության ակադեմիայի Քաղաքագիտության և էթնոքաղաքականության ամբիոնի վարիչի գիտական գծով տեղակալ, քաղաքական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի Ժուռնալիստների միության անդամ Գրիգորի Հակոբովը¹, Հս. Կովկասի պետական ծառայության ակադեմիայի Պլատիգորսկի մասնաճյուղի տնօրենի գիտական գծով տեղակալ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մայա Աստվածատուրովան, Ռուսաստանի պետական առևտրատնտեսական համալսարանի Վոլգոգրադի մասնաճյուղի պրոֆեսոր, քաղաքական գիտությունների դոկտոր Սարգիս Ոսկանյանը:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա և հոգեբանություն

ՀՌ նշանավոր հայ հոգեբաններից էր բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Կորգանովը, որը զբաղեցրել է Ռուստովի պետական բժշկական համալսարանի ռեկտորի պաշտոնը: Հոգեբանության ասպարեզում նշանակալի հաջողությունների է հասել նաև հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իվան Կուկոսյանը, որն արժանացել է Կուրանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Մանկավարժական գիտությունների դոկտոր Բորիս Անանը գործել է Լենինգրադում, եղել Լենինգրադի պետական համալսա-

¹ Գրիգորի Հակոբովը նաև համագործակցում է Կրասնոդարում լույս տեսնող հայկական «Երկրամաս» թերթի հետ:

րանի Հոգեբանության ֆակուլտետի դեկան, ԽՍՀՄ Կրթության ակադեմիայի իսկական անդամ:

Փիլիսոփայության ոլորտի ժամանակակից մասնագետներից Աշխեն Աբովյանը դասավանդում է Հարավային դաշնային համալսարանի Բանասիրության և ժուռնալիստիկայի ֆակուլտետի Զանգվածային կոմունիկացիաների միջոցների ամբիոնում: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լարիսա Մինասյանը Ռոստովի պետական շինարարական համալսարանի պրոֆեսոր է, զբաղվում է փիլիսոփայական-մեթոդական խնդիրներով: Օկսանա Նոր-Արևյանը Հարավային դաշնային համալսարանի Սոցիոլոգիայի և քաղաքագիտության ֆակուլտետի Սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ է, իսկ Անժելիկա Այվազյանը զբաղվում է ինֆորմատիկացիայի ժամանակաշրջանի համացանցի սոցիալ-փիլիսոփայության խնդիրներով:

Իրավագիտություն

ՀՌ հայերը ներդրում ունեն նաև իրավագիտության զարգացման մեջ: Մասնավորապես, Մարաֆիմ Հարությունովը եղել է Ռոստովի քաղաքային դումայի խոսնակ և խմբագրել է «*Приазовский край*» թերթը: Իրավաբան Գրիգոր Զալխուշյանը կարևոր դերակատարություն է ունեցել հայկական գաղթօջախի ինքնակազմակերպման գործընթացում: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Մինասյանը զբաղեցրել է Հարավային դաշնային համալսարանի Իրավաբանության ֆակուլտետի Պետության, իրավունքի պատմության և տեսության ամբիոնի, ապա՝ Պետական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնը:

Այժմ գործող ՀՌ հայ իրավաբանները նույնպես հասել են մեծ

հաջողությունների: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժաննա Հովսեփյանը Հարավային դաշնային համալսարանի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչն է, ՌԴ Արդարադատության նախարարության Հարավային դաշնային օկրուգի Դաշնային ղեկավարման փորձագիտական խորհրդի նախագահի տեղակալը: Սահակ Կարապետյանը, որը եղել է ՌԴ Պետդումայի պատգամավոր, ՌԴ գլխավոր դատախազի ավագ օգնականն է: Իսկ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեոնիդ Հակոբովը Հս. Կովկասի պետական ծառայության ակադեմիայի Վարչական և ծառայողական իրավունքի ամբիոնի վարիչն է:

Տնտեսագիտություն

Տնտեսագիտության բնագավառում նշանակալի ներդրում է ունեցել սոցիալական գիտությունների դոկտոր Վահան Թոթովյանը: Աստրախանցի տնտեսագետն ակտիվ գործունեություն է ծավալել ինչպես Մոսկվայում և Պետերբուրգում, այնպես էլ Հոմում, Սոֆիայում, Պրահայում, Փարիզում և այլուր, եղել միջազգային տարբեր կենտրոնների և միությունների անդամ: Նորնախիջևանցի տնտեսագետ Ռուբեն Բերբերովը 20-րդ դարասկզբին Փարիզում հանդես է եկել միջազգային առևտրին վերաբերող դասախոսություններով, տարբեր պաշտոններ է զբաղեցրել Ռոստովում, ապա Պետերբուրգում: Տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավդեյ Գոզունովը (Ավետիք Գյուզելյան) եղել է Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական գծով պրոռեկտորը, արժանացել ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Եղիազարյանը գործել է Մոսկվայում, եղել Մոսկվայի պետական

համալսարանի Տնտեսական արդյունաբերության ամբիոնի վարիչը:

Այժմ ՀՌ-ում տնտեսագիտության ասպարեզում են գործում տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Սերգեյ Ավակովը, որը Տագանրոգի կառավարման և տնտեսագիտության ինստիտուտի ռեկտորն է, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկացիայի ֆակուլտետի դեկան Իլյա Բուգայանը: Տնտեսական գիտությունների թեկնածու Արարատ Գոմցյանը (ՌԴ Հարավային դաշնային օկրուգի գլխավոր հյուպատոս) Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի իսկական անդամ է: Տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Գրիգորյանը Մոսկվայի պետական սոցիալական համալսարանի Մոչիի մասնաճյուղի Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր է, իսկ տնտեսական գիտությունների թեկնածու Կարինե Կալուցյանը Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի Տնտեսական ինֆորմատիկայի և ավտոմատիկացիայի ամբիոնի դոցենտ է: Գենադի Մելիքյանը եղել է ՌԴ Աշխատանքի նախարար, ՌԴ Պետդումայի պատգամավոր, Աշխատանքի և սոցիալական զարգացման նախարար: 2003-ից վարել է Ռուսաստանի Կենտրոնական բանկի նախագահի տեղակալի պաշտոնը, իսկ 2007-ից Ռուսաստանի Կենտրոնական բանկի նախագահի առաջին տեղակալն է և տնօրենների խորհրդի անդամ, Մոսկվայի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի պրոֆեսոր է, Սոցիալական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Նա արժանացել է ՌԴ վաստակավոր տնտեսագետի պատվավոր կոչման: Տնտեսական գիտությունների թեկնածու Գալինա Նոր-Արևյանն

աշխատում է Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանում: Տնտեսական գիտությունների թեկնածու Հարություն Սուրմայանը Նոր Նախիջևանի հայ համայնքի նախագահն է: ՌԴ Պետդումայի «Միացյալ Ռուսաստան» խմբակցությունից պատգամավոր Ստեփան Շորոշորովը Իրական տնտեսության միջազգային ակադեմիայի իսկական անդամ է, Անվտանգության ինդիքների, պաշտպանության իրավակարգի ակադեմիայի իսկական անդամ:

Գյուղատնտեսություն և արդյունաբերություն

Գյուղատնտեսական գիտությունների զարգացման գործում մեծ ավանդ է ներդրել Գինու տեխնոլոգիայի և քիմիայի մասնագետ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Աղաբալյանցը, որը եղել է Կրասնոդարի սննդի արդյունաբերության ինստիտուտի, ապա Սննդի արդյունաբերության հեռակա համամիութենական ինստիտուտի Գինեգործության տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ: Նա արժանացել է ՌԽՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչման:

Այժմ գյուղատնտեսության ասպարեզում գործում է ծնունդով Գեորգիևսկից կենսաքիմիկոս, գինեգործ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Ավագյանցը, որը հիմնականում գործունեություն է ծավալում Մոսկվայում և արտասահմանում: Նա Մոսկվայի Սննդի արդյունաբերության համամիութենական ինստիտուտի գինեգործության ամբիոնի վարիչն է, Խաղողագործության և գինեգործության իտալական ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի գյուղատնտեսական ակադեմիայի թղթակից անդամ:

ՀՌ-ում հայերը նաև նշանակալի ավանդ են ներդրել արդյունաբերության տարբեր ճյուղերին առնչվող գիտության բնագավառների զարգացման ասպարեզում: ՀՌ-ում արդյունաբերական գործունեություն ծավալած Միմեոն Աբամելիք-Լազարևը հեղինակ է լեռնային արդյունաբերությանը վերաբերող տնտեսագիտական աշխատանքների: Ավիացիոն արդյունաբերության մասնագետ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լև Եվանգուլովը, որը հիմնականում գործել է Մոսկվայում, եղել է Ավիացիոն ինստիտուտի դասախոս, Ավիացիոն արդյունաբերության ժողովուրդ N25 գործարանի գլխավոր կոնստրուկտոր, տնօրենի տեղակալ:

Հայերն էական ներդրում ունեն նաև նավթարդյունաբերության զարգացման բնագավառում: Նավթագործ մասնագետ, երկրաբան Ալեքսանդր Ծատուրյանն աշխատել է Գրոզնիում, արժանացել ԽՍՀՄ վաստակավոր նավթագործի կոչման: Տեխնիկական գիտությունների թեկնածու Կոստանդին Գասպարյանցը գործել է Մոսկվայում, ինչպես նաև Ռուսաստանի այլ շրջաններում:

Այժմ նավթարդյունահանման ասպարեզում գործում են «Татнефть»-ի գլխավոր տնօրենի տեղակալ Էդուարդ Հակոբջանովը, ՌԴ Նավթի և գազի արդյունաբերության վաստակավոր աշխատող, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Գարուշևը՝ «РосНИПИтермнефть» ԲԲԸ գլխավոր տնօրեն, Կուբանի պետական տեխնոլոգիական համալսարանի մասնաճյուղի ամբիոնի վարիչ: Երկրաբան Միխայիլ Զագրաբյանցն աշխատում է «Роснефть-Краснодарнефтегаз» ԲԲԸ տնօրենի երկրաբանության գծով տեղակալ: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Սերգեյ Սիմոնյանցը Ռուսաս-

տանի նավթի և գազի պետական համալսարանի պրոֆեսոր է, Ջիվան Չելոյանցը «Лукойл» նավթային ընկերության փոխնախագահներից է:

Մաթեմատիկա

Մաթեմատիկայի ասպարեզում ՀՌ-ում գործում են ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հարավային դաշնային համալսարանի Առաձգականության տեսության ամբիոնի վարիչ Ալեքսանդր Վատույանը, Հարավային դաշնային համալսարանի դոցենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Միխայիլ Աբրամյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Կարապետյանցը, որը Հարավային դաշնային համալսարանի Դիֆերենցիալ և ինտեգրալային հավասարումների ամբիոնի վարիչն է: Ֆիզմաթ գիտությունների թեկնածու Յուլիա Նալբանդյանը Հարավային դաշնային համալսարանի Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի Մաթեմատիկական անալիզի ամբիոնի դոցենտ է, իսկ ֆիզմաթ գիտությունների թեկնածու Վիտալի Պորկշեյանը՝ Դոնի պետական տեխնիկական համալսարանի Ավտոնոմիզացիայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դոցենտ: Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մեժլում Սումբատյանը Հարավային դաշնային համալսարանի Մեխանիկական մաթեմատիկայի տեսական հիդրոաերոմեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր է: Ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ալեքսեյ Կարապետյանցը Հարավային դաշնային համալսարանի ինֆորմատիզացիայի գծով պրոռեկտորն է: Իսկ ծրագրավորող, գործարար Անդրեյ Հակոբյանցը բազմաթիվ ծրագրերի ու նախագծերի ղեկավարն է և իրագործողը:

Ֆիզիկա

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գառնակերյանը եղել է Տագանրոգի պետական ռադիոտեխնիկական համալսարանի Կոնստրուկտորական հատուկ բյուրոյի գլխավոր կոնստրուկտորը: Այժմ ՀՌ-ում ֆիզիկայի ուղղտում գործում է ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մերգեյ Ասլանովը, որը «*Физика аэродисперсных систем*» գիտական պարբերականի պատասխանատու խմբագրի տեղակալն է, իսկ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրայր Արզումանյանը Հարավային դաշնային համալսարանի Տեխնոլոգիական ինստիտուտի դոցենտ է: ՀՌ մի քանի ֆիզիկոսներ այժմ գործում են Ռուսաստանի այլ շրջաններում, մասնավորապես՝ Մոսկվայում: Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ պետական մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Մերջանովը զբաղեցնում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Միկրոկլինետիկայի կառուցվածքի նյութագիտության խնդիրների ինստիտուտի գիտական ղեկավարի պաշտոնը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է և խորհրդական: Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Հովհաննիսյանն Ատոմային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ք.Դուբնա) Ատոմային ռեակցիայի լաբորատորիայի տնօրենն է, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, իսկ Վարուժան Ոսկանյանը Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր է:

Քիմիա և կենսաբանություն

Քիմիայի ասպարեզում նշանակալի հաջողությունների է հասել քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոստանդին Բաղդասարովը, որը եղել է Հարավային դաշնային համալսարանի Անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչը:

Այժմ Դոնի Ռոստովում քիմիական արդյունաբերության ինդիքներով է զբաղվում տեխնիկական գիտությունների թեկնածու, Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսոր Վլադիմիր Ադամյանը, որը դասավանդում է Ռոստովի հիմնարար բժշկական քոլեջում:

Կենսաբանության բնագավառում մեծ ավանդ է ներդրել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Հարավային դաշնային համալսարանի Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի կրթության ակադեմիայի թղթակից անդամ Գրիգորի Կուրանը: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լև Սանդախչիևը հիմնականում գործել է Նովոսիբիրսկում:

Այժմ կենսաբանության ասպարեզում են գործում կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հովհաննես Չոբայանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Լև Օգանեսյանցը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրո-

Ֆետր, Մոսկվայի պետական համալսարանի պրոֆետոր, լաբորատորիայի վարիչ Ալեքսանդր Քատումյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու, Հարավային դաշնային համալսարանի Կենսաքիմիայի և միկրոկենսաբանության ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Սահակյանը:

Երկրաբանություն և աշխարհագրություն

Երկրաբանության զարգացման մեջ հիշարժան ներդրում ունի Լենինգրադի լեռնային ինստիտուտի պրոֆետոր Վլադիմիր Լոդոչնիկովը (Վարդան Նավավարյան), որն աշխատել է Լենինգրադի Երկրաբանական կոմիտեում, աշխատանք կատարել նաև Ալթայում, Կովկասում: Երկրաբանահանքային գիտությունների դոկտոր, պրոֆետոր Լևոն Վարդանյանը երկրաբանական գործունեություն է ծավալել ՀՌ և Հս. Կովկասի տարբեր շրջաններում, ինչպես նաև Լենինգրադում, Ուզբեկստանում և Հայաստանում: Իսկ երկրաբանահանքային գիտությունների դոկտոր, պրոֆետոր, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Նիկոլայ Խիտարովը հիմնական գործունեությունը ծավալել է Մոսկվայում: Երկրաբանահանքային գիտությունների դոկտոր Արկադի Ծատուրովն ակտիվ գործունեություն է ծավալել Ադրբեջանում, ապա ՀՌ-ում, զբաղեցրել պատասխանատու պաշտոններ:

Այժմ երկրաբանության ասպարեզում է գործում *ГПР “Роснефть”*, *“НК “Роснефть”* ԲԲԸ Էկոլոգիայի և արտադրական անվտանգության դեպարտամենտի տնօրեն Էդուարդ Վեքիլովը, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Սերգեյ Հարությունովը: ՌԴ Պաշտպանության նախարարության Կենտրոնական գիտահետազոտական

ինստիտուտում է աշխատում աշխարհագրագետ Լյուդվիգ Հարությունովը:

Տեխնիկական գիտություններ, ճարտարագիտություն

ՀՌ բազմաթիվ հայեր գործել և գործում են տեխնիկական գիտությունների ասպարեզում: Հատկապես նշանակալի դերակատարություն են ունեցել տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Այվազյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Սեմյոն Կազարովը, Ալեքսանդր Քեմուրջանյանը, ՌԽՖՍՀ վաստակավոր ինժեներ Ռոման Սումբատովը, ինքնաթիռաշինարար Սուրեն Հարությունովը, Կրասնոդարի *НПК «Сатурн»* հատուկ լաբորատորիայի վարիչ Սեմյոն Կիրիլյանը:

Այժմ տեխնիկական գիտությունների ասպարեզում են գործում «Краснодарнефтегаз»-ի ավագ ինժեներ Նիկիտա Ավետիսյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, “Хоста” ԲԲԸ (Սոչի) գլխավոր տնօրեն Ազատ Ասատուրովը, “Контакт” ԲԲԸ գլխավոր տնօրեն Յուրի Բադայանցը, «Юмагузинское водохранилище» ԲԲԸ գլխավոր տնօրեն Վիկտոր Ասատուրովը, տեխնիկական գիտությունների դոկտոր, Տազանրոզի պետական ռադիոտեխնիկական համալսարանի պրոֆեսոր Գենադի Գալուստովը, Կիզլյարի կոնյակի գործարանի գլխավոր տնօրեն Վլադիմիր Գրիգորյանցը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Կամո Դեմիրճյանը, Եսենտուկի քաղաքային կապի հանգույցի ղեկավար Վիկտոր Լևիանյանը, *НИИ* ԲԲԸ էներգետիկայի էկոլոգիական խնդիրների գլխավոր տնօրեն, Միջազգային ինժեներական ակադեմիայի իսկական

անդամ, Ռուսաստանի ինժեներական ակադեմիայի իսկական անդամ Աշոտ Մադոյանը, Տագանրոգի պետական ռադիոտեխնիկական համալսարանի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Առնոլդ Պետրոսյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եվգենի Սուլթան-Շահր: Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆեոդոր Խաչատուրյանը նաև Ռոստովի շրջանի օրենսդիր ժողովի պատգամավոր է: Տեխնիկական գիտությունների դոկտոր, երկրաբանա-հանքային գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Կոստանդին Շադունցը արժանացել է ՌԴ վաստակավոր շինարարի կոչման: Իսկ տեխնիկական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գենադի Արունյանցը Կալինինգրադի պետական տեխնիկական համալսարանի Տեխնիկայի ղեկավարման և հաշվառման համակարգերի ամբիոնի պրոֆեսոր է:

Բժշկագիտություն

ՀՌ Հայությունը վիրիսարի ներդրում ունի բժշկագիտության և բժշկության զարգացման մեջ: ՀՌ-ում բժշկության ասպարեզում նշանակալի հաջողությունների են հասել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Սերգեյ Աբրամովը, Էմանուիլ Կոստանյանը, Գևորգ Անդրեասյանը, Բոգդան Սահակովը, Գրիգորի Սարկիսովը, Լևոն Ղասաբովը, Կուբանի պետական բժշկական համալսարանի Դեղաբանության ամբիոնի վարիչ Իվան Հակոբովը, բժշկական գիտությունների դոկտոր Սերգեյ Ավեդիսովը, Մովսես Աջեմովը, Գալուստ Բալիևը, ՌԽՖՍՀ

վաստակավոր բժիշկներ Գավրիլ Օդամանյան Ռուբեն Բերբերովը և Ալեքսանդր Խանամիրովը, Պետրոս Ավեդիկյանը, Ռոստովի մանկավարժական ինստիտուտի Ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր Ռուբեն Ղարիբյանը, Ռաֆայել Գրիգորյանը, Դոնի Ռոստովի Առողջապահության քաղաքային բաժանմունքի ղեկավար, ՌԽՖՍՀ վաստակավոր բժիշկ Հովակիմ Զոհրաբյանը, բժշկական գիտությունների դոկտոր Յակով Կալուստովը, բժշկական գիտությունների թեկնածու Եկատերինա Կոստանյանը, Կարապետ Քեչեկը, Կարմիր բանակի կազմում մինչև Բեռլին հասած վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Քրիստափոր Օրդույանը:

ՀՌ մի շարք հայ բժիշկներ գործել են Ռուսաստանի այլ շրջաններում: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Ալեքսանդր Աղաբաբովը գործել է Կազանի համալսարանում, Մերգեյ Դերիժանովը՝ Իվանովոյում, Ալբերտ Ադամյանը՝ Տոմսկում, Արամ Տրդատյանը՝ Ալթայում, Խաչատուր Ղալամբարովը և բժշկական գիտությունների դոկտոր Սիրանուշ Սարիկյանը՝ Մոսկվայում, բժշկական գիտությունների դոկտոր Արմենակ Խրիմյանը՝ Հայաստանում:

Այժմ ՀՌ-ում բժշկության զարգացման մեջ նշանակալի ներդրում ունեն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ, Կուրանի բժշկական համալսարանի հոսպիտալացված վիրաբուժության ամբիոնի վարիչ Վլադիմիր Ավակիմյանը, Արտեմ Աբրամովը, Հյուսիսկովկասյան պետական տեխնիկական համալսարանի ինովացիոն գործունեության գծով փոխտեկտոր Էդուարդ Ավանեսյանցը, Կուրանի բժշկական ակադեմիայի Դեղագործության ֆակուլտետի ղեկան Ռոման Խանփերյանը, Դոնի Ուրոլոգների

ասոցիացիայի փոխնախագահ, ՌԴ վաստակավոր բժիշկ Իգոր Աբոյանը, ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Հս. Օսիա-Ալանիայի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Գեորգի Ավտանդիլովը, Վալենտին Այվազովը, ՌԴ վաստակավոր բժիշկ, Դոնի Ռոստովի Սանիտարա-վարակաբանական կարգավորման կենտրոնի գլխավոր բժիշկ Գենադի Այդինովը, Ռոստովի պետական բժշկական համալսարանի Լուսային դիագնոստիկայի բաժնի ղեկավար Միխայիլ Բաբանը, ՌԴ վաստակավոր բժիշկ, Ռոստովի շրջանային N1 կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժշկի տեղակալ Գրիգորի Բադդասարովը, ՌԴ վաստակավոր բժիշկ Սամսոն Վիրաբովը, Էդուարդ Ղուլյանցը, Ռոստովի պետական բժշկական համալսարանի Պաթոլոգիական անատոմիայի ամբիոնի վարիչ Իրինա Դերիժանովան, Միսաք Կարազյոզյանը, Ռոստովի պետական բժշկական համալսարանի Ներապաթոլոգիայի և ներքոմիքրոբիոլոգիայի ամբիոնի վարիչ Վազգեն Մարտիրոսյանը, Պարտեխ Շորլույանը, Աբգար Խարաբաջախյանը: Բժշկության ասպարեզում են գործում նաև ՌԴ վաստակավոր բժիշկներ Արամ Հայրապետովը, Մինաս Բադդիկովը, Մամվել Գալստյանը, Լազար Մկրտիչևը, Ելիզավետա Տեր-Անանյանցը, Վալերի Գրիգորյանը և Արշակ Բադդասարյանը, Ռոստովի մարզի գլխավոր արյունաբան Կարապետ Ասլանյանը, Կարպ Աթոյանը, Նինա Ավանյանը, Ստավրոպոլի պետական համալսարանի Կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլգա Հախվերդովան, ՌԽՖՍՀ վաստակավոր բժիշկ Բաբկեն Բաբլոյանը, Գեորգի Բադդիկովը, Օլգա Բուխանովսկայան, Գրիգորի Ժամգոցը, Նիկոլայ Կորգանովը, Տարաս Կուրուզյանը, Էլենորա Մանվելյանը, Կրասնոդարի N10 պոլիկլի-

նիկայի գլխավոր բժիշկ Վլադիմիր Մարանյանը, Պյատիգորսկի պետական դեղագործական ակադեմիայի Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, դեղագործական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Հովհաննիսյանը, Արտաշես Սահակովը, Վլադիմիր Սանամյանը, Իգնատիոս Տեր-Ավետիսյանը, ՌԴ առողջապահության վաստակավոր գործիչ Գրիգորի Խաթլամաջյանը, Միքայել Չիբիչյանը և այլք:

ՀՌ մի շարք հայ բժիշկներ գործում են Ռուսաստանի այլ շրջաններում՝ բժշկական գիտությունների դոկտոր Աննա Վիրաբովան գործում է Մոսկվայում, Անդրանիկ Ոսկանյանը՝ Սանկտ Պետերբուրգում, Աշոտ Կասպարովը՝ Իրկուտսկում և այլք: Մասնագիտությամբ բժիշկ, Ռուսաստանի մշակույթի ոլորտի վաստակավոր աշխատող Արտյոմ Օվանեսովն Արմավիր քաղաքի հայ համայնքի նախագահն է:

Ռուբեն Գուլիշամբարովը նշանակալի գործունեություն է ծավալել ռազմական բժշկության ասպարեզում՝ գործելով ՀՌ տարբեր շրջաններում: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Իվան Ալեքսանյանն աշխատում է ռազմական բժիշկների պատրաստման ոլորտում: ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովակիմ Պորկեշյանը երկար տարիներ աշխատում է Լենինգրադի բժիշկների վերապատրաստման ինստիտուտի Դատական բժշկության ամբիոնում: Իսկ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիլ Հակոբովը Ռոստովի պետական բժշկական համալսարանի Դատական բժշկության ամբիոնի վարիչն է:

Մշակույթ

Հարավային Ռուսաստանում ծնունդ առած շատ հայեր իրենց կյանքը նվիրել են արվեստի և մշակույթի տարբեր ճյուղերին: Նրանք մեծ ներդրում են ունեցել և ունեն ինչպես Ռուսաստանի և Հայաստանի, այնպես էլ համաշխարհային մշակույթում:

Ճարտարապետություն և շինարարություն

Հայկական ճարտարապետությունը ՀՌ-ում ունի հարուստ ավանդույթներ: Արսեն Տեր-Հակոբովը Նոր Նախիջևանում հեղինակել է բնակելի և հասարակական շենքեր: Մոսկվայի ճարտարապետների միության անդամ Էմանուել Խոջանն աշխատել է Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, ապա Մոսկվայում: Ծնունդով Նոր Նախիջևանից Դավիթ Չիսլիևի նախագծերով կառուցվել են բազմաթիվ շինություններ Մոսկվայում, ինչպես նաև Թիֆլիսում և Մոսկվայում: Կրասնոդար քաղաքում է ծնվել հայ հռչակավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Նա հեղինակել է Երևանի գլխավոր հատակագիծը, բազմաթիվ այլ ճարտարապետական կոթողներ Հայաստանի տարբեր շրջաններում և Ռուսաստանում: Հարություն Զաքիևը գործել է Դոնի Ռոստովում, ապա տեղափոխվել Երևան և աշխատել Թամանյանի հետ: Քրիստափոր Չալխուշյանը գործել է Դոնի Ռոստովում: Միրոն Մերջանովը (Մերան Մերջանյանց) աշխատել է ՀՌ-ում, ապա Մոսկվայում, եղել է ԽՍՀՄ ճարտարապետների միության առաջին անդամներից մեկը: ՌԽՖՍՀ վաստակավոր ճարտարապետ Գուրգեն Նաջարյանը եղել է Նովոռոսիյսկ քաղաքի, իսկ Նորալդ Ներսեսյանցը՝ Դոնի Ռոստով քաղաքի գլխավոր ճարտարապետը:

ՀՌ նշանավոր հայ ճարտարապետները գործել են նաև Ռուսաստանի այլ շրջաններում և արտասահմանում: Ստավրոպոլցի ճարտարապետ, Վրացական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գաբրիել Տեր-Մելիքովը (Տեր-Մելիքյան) հիմնականում գործունեություն է ծավալել Թբիլիսիում և Բաքվում: Դոնիռոստովցի Մարկ Գրիգորյանը, որը մասնակցել է Դոնի Ռոստովի Սուրբ Խաչ վանքի վերականգնման աշխատանքներին, հիմնականում գործել է Հայաստանում, եղել ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ: Դերբենդցի Շահեն Հայրապետովն ակտիվ ճարտարապետական գործունեություն է ծավալել Մոսկվայում, ստացել ՌԴ վաստակավոր ճարտարապետի կոչում:

Այժմ ՀՌ հայ ճարտարապետներից ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Բորիս Մերջանովը, որը գործել է ՀՌ-ում, աշխատում է Մոսկվայում: Ճարտարապետության ասպարեզում են գործում նաև Գրիգորի Արծաթբանյանը, Հայկ Ղուլյանցը, Նատալյա Զոհրաբյանը և այլք:

Շինարարության ոլորտում նշանակալի հաջողությունների է հասել Վրացական ԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Մեսրոպ Դանդուրովը, որի գլխավորությամբ Հս. Կովկասում կառուցվել և վերակառուցվել են շուրջ 150 կամուրջ և թունել: Տեխնիկական գիտությունների դոկտոր, ՌԴ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Ռաֆայել Մայիլյանը եղել է Ռոստովի պետական շինարարական համալսարանի պրոֆեսոր, Ռուսաստանի ճարտարապետական և շինարարական գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ: Հիդրոշինարար Վարդան Զմշկյանն արժանացել է ՌԽՖՍՀ վաստակավոր

շինարարի կոչման: ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր Գեորգի Հայրապետովը եղել է Ռոստովի պետական շինարարական համալսարանի պրոֆեսոր, Ռուսաստանի ճարտարապետական և շինարարական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Ներկայիս գործիչներից Մոզգոլկի քաղաքապետ Գեորգի Ադամովն արժանացել է ՀՌ պատվավոր շինարարի կոչման, իսկ Ռուսաստանի վաստակավոր շինարարի կոչում ունեցող Ռազմիկ Գևորգյանը նաև Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի շրջանային բաժանմունքի ղեկավարն է:

Նկարչություն և քանդակագործություն

Նոր Նախիջևանում է ծնվել հայ ականավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը: 1919թ. նա դարձել է Նոր Նախիջևանի Հայկական թանգարանի հիմնադիրն ու առաջին տնօրենը: 1920-ականներից հիմնական գործունեությունը ծավալել է Հայաստանում: Մարտիրոս Սարյանը եղել է ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Հայկական ԽՍՀ ԳԱ իսկական անդամ, Հայկական ԽՍՀ նկարիչների միության նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս: Նորնախիջևանցի մեկ այլ նկարիչ Մանուիլ Ալաջանովի աշխատանքները գտնվում են Ռուսաստանի բազմաթիվ թանգարաններում, իսկ Արտեմ Կացյանն ակտիվ գործունեություն է ծավալել Հս. Կովկասում: Գրիգորի Շիլտյանի աշխատանքները գտնվում են Հռոմի, Վատիկանի, Վենետիկի, Միլանի, Ֆլորենցիայի, Փարիզի, Բրյուսելի հանրահայտ թանգարաններում, ինչպես նաև Հայաստանում: Հմայակ Արծաթբանյանը Նրբագեղ

արվեստի Ռոստով-նախիջևանյան միության հիմնադիրներից էր: Կոստանդին Ալաջանովն ակտիվ գործունեություն է ծավալել Դոնի Ռոստովում, ապա անցել ԱՄՆ, որտեղ աշխատել է թերթերում և ամսագրերում՝ որպես նկարիչ, պատկերագարդել գրքեր: Յուրի Բուրջայանը հիմնականում գործել է Մոսկվայում, իսկ Սեյրան Խաթլամաջյանը և Լաերտ Վաղարշյանը՝ Հայաստանում: Վերջինս արժանացել է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչումների:

ՀՌ հայ նկարիչներից այսօր ակտիվ գործունեություն են ծավալում Միխայիլ Վարտանովը, Հրայր Կարապետյանը, Արամ Կուպեցյանը, Իվան Սուքիասյանը, Ռոստովի պետական երաժշտական թատրոնի գլխավոր նկարիչ Ստեփան Զոհրաբյանը, միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների մասնակից Յուրի Բադդասարովը, Հովհաննես Լուսեգենովը, Ալեքսանդր Մարությանը, Քերոբ Սողոմոնյանը: Իսկ լուսանկարիչ, լուսանկարչության պատմաբան Կարպ Փաշինյանը դասավանդում է Ռոստովի նկարչական ուսումնարանում:

ՌԽՖՍՀ վաստակավոր նկարիչ Միքայել Ինտիգարյանը գործել է Մոսկվայում, քանդակագործության ասպարեզում: Քանդակագործ Յուրի Իշխանովն արժանացել է Ռուսաստանի ժողովրդական նկարչի կոչման: Ռաֆայել Հարությունովի աշխատանքները գտնվում են Ռուսաստանի տարբեր քաղաքներում, ինչպես նաև Եվրոպայում՝ մասնավոր հավաքածուներում:

Երաժշտություն

ՀՌ-ում երաժշտության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Եղիա Պապախյանը

(Իլյա Շապոշնիկով), Գեորգի Կապանակովը, դադստանյան ժողովրդական երգերի մասնագետ Սերգեյ Աղաբաբովը, Ակիմ Շորշորովը, երգչուհի Նվարդ Ալիխանյանը: Պավել Ամիրազոն ղեկավարել է Կիսլովոդսկի օպերայի և բալետի թատրոնը:

ՀՌ Բազմաթիվ հայ երաժիշտներ ակտիվ գործունեություն են ծավալել Ռուսաստանի այլ շրջաններում և այլ երկրներում: Նրանց թվում աչքի են ընկնում Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Ավետ Գաբրիելյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Կոստանդին Սարաջևը (Սարաջյան), ՌԽՖՍՀ և ՌԴ վաստակավոր արտիստ Գեորգի Գարանյանը, Թուրքմենական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգորի Առաքելյանը:

Այժմ ՀՌ-ում երաժշտարվեստում հատկապես աչքի են ընկնում ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Արաքս Սաթևոսյանը, ՌԴ վաստակավոր արտիստներ Սուսաննա Արաբկերցևան և Նիկոլայ Իռանիսյանը, Սերգեյ Մանուկյանը, Դոնի հայերի «Անի» անսամբլի ղեկավար, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Գրիգոր Խուրդայանը: Մի շարք գործիչներ էլ իրենց գործունեությունը ծավալել են ՀՌ-ից դուրս: Նրանցից հատկապես հանրահայտ են դարձել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանը, Նադեժդա Սիմոնյանը, Էստոնիայի ֆիլիհարմոնիայի զեղարվեստական ղեկավար, Էստոնական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Բորիս Փարսադանյանը և երգչուհի Եվա Ռիվասը:

Թատրոն և կինո

ՀՌ-ում թատերական, դերասանական արվեստի ասպարեզում նշանակալի ներդրում են ունեցել Միքայել Պատկանյանը, Ստեփան

Եղիազարովր, Հովհաննես Սևունյանը, Նադեժդա Պապայանը, ՌԻՖՏՄԸ ժողովրդական արտիստ Մարտին Լուսինյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Հայկ Դանգասը (Հայկ Բինանյան), Իզաբելա Դանգասը, Գեորգի Բուրջավովը, Վրացական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ֆերդինանդ Բժիկայանը, Նիկիտա Բալինը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Իսահակ Ալիխանյանը: Ծնունդով ՀՌ-ից մի շարք թատերական գործիչներ էլ գործել են ՀՌ-ից դուրս: Նրանց թվում են Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արշակ Բուրջայանը, Ալեքսանդր Աբաջյանը, Եվգենի Վախթանգովը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Բոյաջինը: Կինոարվեստի ասպարեզում ներդրում է ունեցել սցենարիստ Նինա Աղաջանովան:

Ներկայում ՀՌ հայ թատերական գործիչներից աչքի են ընկնում Յուրի Ատարովը, Նիկոլայ Մարգարյանցը, Խաչատուր Խաթլամաջյանը, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ Գենադի Մալխասյանցը:

Կինոարվեստի ասպարեզում են գործում Էդուարդ Վանունցը, Միխայիլ Գալուստյանը, Ռաֆայել Գասպարյանցը, Էդուարդ Քեչեջյանը, Վյաչեսլավ Ամիրխանյանը, Միխայիլ Վարտանովը, Օլեգ Բաղդասարյանը, Էդուարդ Ումուրջատյանը, «Мосфильм» կինոստուդիայի գլխավոր տնօրեն, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, ՌԴ ժողովրդական արտիստ Կարեն Շահնազարովը:

Այսպիսով, Հարավային Ռուսաստանից սերող և այնտեղ կամ ՌԴ այլ շրջաններում գործունեություն ծավալած հայ գիտնականները և մշակութային գործիչները մեծ կշիռ ունեն գիտության և մշակույթի տարբեր ճյուղերի զարգացման մեջ: Հաստատանի հետ և միմյանց միջև կապերի ամրապնդումը կնպաստի ինչպես ՀՌ հայ համայնքի ուժեղացմանը և հայկական մշակութային կյանքի առաջընթացին, այնպես էլ գիտության ու մշակույթի զարգացմանը Հայաստանում: ՀՌ Հայության մտավոր ներուժը, ողջ Հայության մտավոր ներուժի կարևոր բաղկացուցիչ մասը լինելով, դեռևս «պահուստային» ռեսուրսի նշանակություն ունի: Այն ամբողջական բացահայտման և, որ ավելի կարևոր է, լիարժեք դրսևորման հարթակի և առավելագույն ներգրավման մեխանիզմների ձևավորման կարիք ունի:

9. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ

ՀՌ հայության կյանքում կարևոր դերակատարություն են ունեցել հայկական կրթական հաստատությունները: Դարերի ընթացքում ՀՌ-ում բնակվող հայերի բազմաթիվ սերունդներ կրթություն են ստացել հայկական դպրոցներում: Այս կրթական հաստատությունների շնորհիվ աշակերտները ստացել են ոչ միայն գիտելիքներ, այլև հաղորդակցվել են ազգային արժեքներին: Անկասկած, այդ կրթական հաստատություններն ունեցել են անփոխարինելի նշանակություն ՀՌ հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանման համար: Այսօր, գլոբալացվող աշխարհում ևս ՀՌ-ում հայկական կրթական հաստատությունների գործունեությունը կարևոր նշանակություն ունի:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Ռուսաստանում հիմնված հայկական դպրոցների մեծ մասը ծխական էր և պահվում էր եկեղեցու միջոցներով: Հատկապես նշանավոր էին Նոր Նախիջևանի, Աստրախանի, Մտավրոպոլի, Եկատերինոդարի, Արմավիրի, Մոզդոկի, Կիսլովոդսկի, Կիզլյարի հայկական դպրոցները (հայկական դպրոցների և այլ կրթական հաստատություններում հայերի ներգրավվածության մասին որոշ վիճակագրական տվյալներ տե՛ս *Հավելվածի Աղյուսակներ Գ1-Գ9-ում*):

1784թ. հիմնադրվեց Նոր Նախիջևանի Մբ. Խաչ վանքի դպրոցը, որը գործել է տարրական դպրոցի ծրագրով, պատրաստել եկեղեցու սպասավորներ: Այստեղ դասավանդվել են հայոց լեզու, թվաբանություն, վայելչագրություն, կրոն, ձեռքի աշխատանք, գյուղատնտեսությանը վերաբերող առարկաներ: Կից գործել են

տպարան, մատենադարան, թանգարան: 19-րդ դարի 80-ական թթ. կրթություն են ստացել նաև աղջիկները: Դասավանդել են Թ.Մարությանը, Հ.Ալամդարյանը, Խ.Ստեփանեն, Գ.Բեդեյանը և ուրիշներ: Ունեցել է ուսուցման 6-ամյա ժամկետ, 70-100 աշակերտ: Այն գործունեությունը շարունակել է մինչև 1920-ական թթ.:

Աստրախանի Աղաբաբյան դպրոցը (հիմնադրվել է 1810թ.) 1821թ. հանձնվել է կրթության նախարարության տնօրինությանը՝ գավառային ուսումնարանի իրավունքներով: Տարբեր տարիների աշակերտների թիվը եղել է 50-150: 1917թ. այն վերածվել է Աղաբաբյան գիմնազիայի, խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ երկրորդ աստիճանի սովորական դպրոցի: Երկար ժամանակ հայերը կազմել են աշակերտների հիմնական մասը, հայոց լեզու դասավանդվել է մինչև 1930-ական թթ.: Այստեղ դասավանդել են նաև Ս.Պատկանյանը, Հ.Ալամդարյանը և ուրիշ նշանավոր գործիչներ:

Նոր Նախիջևանի թեմական դպրոցը հիմնադրվել է 1875թ., 1881թ. վերածվել է թեմական հոգևոր սեմինարիայի (երկու դասարան և մեկ նախակրթարան՝ 3 բաժանմունքով): Այստեղ դասավանդվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, կրոն, թվաբանություն, բնագիտություն, տիեզերագիտություն և այլն: 1915թ. ունեցել է 275 աշակերտ, 18 ուսուցիչ: Փակվել է 1920թ.:

ՀՌ հայերի կրթական կյանքում կարևոր դերակատարություն է ունեցել նաև Նոր Նախիջևանի արհեստագործական դպրոցը՝ հիմնված 1880թ. Ռ.Պատկանյանի ջանքերով: Այստեղ արհեստագործական առարկաներից (կոշկակարություն, դերձակություն,

հյուսնություն, արծաթագործություն, պղնձագործություն, դարբնություն) բացի դասավանդվել են նաև հանրակրթական առարկաներ՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմություն, թվաբանություն, երկրաչափություն, հաշվապահություն, նկարչություն, երգեցողություն, կրոն և այլն: Նման ուսումնական հաստատությունը նշանակալի երևույթ է հայ իրականության մեջ: Դպրոցը գործել է մինչև 1919թ.:

Բացի այս նշանավոր կրթական օջախներից, ՀՌ Հայության կրթական կյանքում կարևոր դերակատարություն են ունեցել նաև մի շարք այլ կրթական հաստատություններ՝ Դերբենդի հայկական ծխական և Մարիամյան իգական դպրոցները, Կիզյարի հայկական դպրոցը, հոգևոր դպրոցը, Մարիամյան իգական դպրոցը, Մոզդոկի հայկական ծխական դպրոցը, քաղաքային ուսումնարանը, Գրոզնիի հայկական ծխական դպրոցը, Արմավիրի տղաների նախակրթարանը, ծխական դպրոցը և օրիորդաց վարժարանը, Եկատերինոդարի երկու ծխական դպրոցները, երկու հայկական գիմնազիաները, Եյսկի դպրոցը, Տուապսեի հայկական դպրոցները, Ստավրոպոլի հայկական ծխական դպրոցը, Բուդյոնովսկի արական և իգական ծխական ուսումնարանները, Եդեսիա գյուղի վարժարանը և դպրոցը, Պյատիգորսկի հայկական դպրոցները, Աստրախանի հայկական դպրոցը, սեմինարիան, արական ծխական, իգական ծխական, արհեստագործական դպրոցները, Նոր Նախիջևանի հայկական հոգևոր ուսումնարանը, ծխական և գավառային դպրոցները, իգական դպրոցը, Գոգոյան իգական դպրոցը, Մեծ Սալա գյուղի ծխական դպրոցը, Սուլթան Սալա գյուղի ծխական դպրոցը և այլ դպրոցներ:

Խորհրդային իշխանության հաստատման սկզբնական շրջանում

շարունակվեց հայկական դպրոցների կազմակերպման գործը: Կուբան-սևծովյան մարզում 1920թ. գարնանը հայկական դպրոցների թիվը հասնում էր 61-ի: Բացի այդ, գործում էին հայկական 3 մանկատուն, անգրագիտության վերացման 9 բաժանմունք, 2 դպրոց մեծահասակների համար և 2 ընթերցարան: Հետագայում այս դպրոցների թիվը կրճատվեց: Դասավանդում էին նաև զգալի թվով արևմտահայ գաղթականներ¹: Խորհրդային ահագնացող ամբողջատիրական համակարգը, որը պայքարում էր իր տարածքում բնակվող ժողովուրդների և ազգությունների ազգային ինքնագիտակցության դեմ, չէր կարող հանդուրժել հայկական ազգային դպրոցների բնականոն գործունեությունը ՀՌ հայկական համայնքներում, ինչը հանգեցրեց բազմաթիվ հայկական դպրոցների շարունակական փակմանը: Այսպես, Կրասնոդարի երկրամասում 1951թ. գործում էր 140 հայկական դպրոց, 1967-ին՝ 12 դպրոց (այս դպրոցների մասին մանրամասն տե՛ս *Հավելվածի Աղյուսակ ԳԳ-ում*), իսկ 1992-ին երկրամասում առկա էր ընդամենը 3 դպրոց: ՀՌ հայկական դպրոցների հանդեպ խորհրդային իշխանությունների իրականացրած քաղաքականությունը, բնականաբար, մեծ հարված հասցրեց ՀՌ-ում բնակվող հայության ազգային կյանքին: Սրան հակառակ, ԽՍՀՄ փլուզումից հետո հայկական համայնքների առաջնահերթ խնդիրը դարձավ ազգային դպրոցների վերաբացումը: 2005թ. տվյալներով՝ ամբողջ Ռուսաստանում գործում են 19 հայկական պետական հանրակրթական դպրոցներ, որոնցից ամենաշատը Հարավային Ռուսաստանում՝ 6-ական Մոչիում և

¹ Армянские школы в Краснодаре, <http://www.khachkar.ru/encyclopedia/?id=35>

Ռեստովում¹: Բացի այդ, հայաշատ քաղաքներում գործում են բազմաթիվ կիրակնօրյա, էթնոմշակութային դպրոցներ, հայոց լեզվի ուսուցման դասընթացներ, հայկական դասարաններ: Հայկական մեկօրյա դպրոցներ և դասարաններ են գործում Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, մասնավորապես՝ Կրասնոդարում, Սոչիում, Ադլերում, Արմավիրում, Չերեշնյա և Լոռ գյուղերում, Եսենտուկիում, Միներալնիե վոդիում և այլուր: Դրանցում պարտադիր դասավանդվում են հայոց լեզու, գրականություն, հայոց պատմություն և այլ առարկաներ:

Հարավային դաշնային օկրուգ

Կրասնոդարի երկրամաս. 1990-ական թթ. սկզբից Կրասնոդարի երկրամասում գործում են հայկական դպրոցներ (Սերգեյ Պոլե, Մոլդովկա, Ներքին Շիլովկա, Լոռ գյուղերում): Մի շարք վայրերում կազմակերպվել են կիրակնօրյա հայկական դպրոցներ (Կրասնոդարում՝ 3): Սոչիի մանկավարժական ուսումնարանում կազմակերպվել է հատուկ խումբ, որի ուսանողներն ուսումնասիրում են հայոց լեզու և գրականություն, հայ ժողովրդի պատմություն:

Սոչիի «Սևան» հայկական մշակութային կենտրոնը կազմակերպել է շաբաթօրյա և կիրակնօրյա հայկական դպրոցներ:

¹ *Тигран Манасян, Армянские школы в России, <http://www.ia-centr.ru/expert/329/>*

1990-1991 ուսումնական տարում քաղաքի վեց դպրոցներում բացվել են հայկական դասարաններ (ընդամենը 1500 աշակերտ), 19 ռուսական դպրոցներում ուսուցանվում է հայոց լեզու, իսկ մանկավարժական ուսումնարանին կից՝ հայկական դպրոցների տարրական դասարանների համար՝ ուսուցիչների պատրաստման խումբ: Սոչիի համալսարանում բացվել է հայագիտական ֆակուլտետ¹:

Արմավիր քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից բացվել է հայկական դպրոց, որտեղ սովորում է 120 աշակերտ: Արմավիրում գործում է N25 հայկական դպրոցը: Քաղաքի մի քանի դպրոցներում գործում են հայոց լեզվի ուսուցման դասարաններ:

Կրասնոդար քաղաքում գործում է Հայ Առաքելական եկեղեցու «Խաչքար» կիրակնօրյա դպրոցը, որտեղ ուսուցանվում են հայագիտական առարկաներ: Նովոռոսիյսկ քաղաքի հայկական կիրակնօրյա դպրոցում դասավանդվում է լեզու և պատմություն: Կուբանի պետական համալսարանում ավելի քան չորս տարի է, ինչ գործում են հայոց լեզվի դասընթացներ: Մասնավորապես, գործում են հայագիտության և հայոց լեզվի դասընթացներ:

Գործում են նաև նախադպրոցական կրթական հաստատություններ:

Մի քանի տարի առաջ հայկական կիրակնօրյա դպրոցներ են բացվել նաև Կրասնոդարի երկրամասի Կրիմսկ և Գորյաչի Կլուչ քաղաքներում, Չերեշնյա գյուղում:

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 473:

Ռոստովի մարզ. Կարևոր նշանակություն ունեն Ռոստովում գործող հայկական դպրոցները: Ռոստովի մարզը զբաղեցնում է առաջին տեղը Ռուսաստանում հայկական դպրոցների աշակերտների թվով (մոտ 1800 աշակերտ)¹: Հայկական դպրոցներ են գործում ոչ միայն Ռոստովի մարզի քաղաքային, այլև գյուղական որոշ բնակավայրերում: Այդպիսի դպրոցներ կան, օրինակ, Մուլթան Սալայում:

Վոլգոգրադի մարզ. Վոլգոգրադում գործում է հայկական կիրակնօրյա դպրոց:

Աստրախանի մարզ. 1991 թվականից սկսել են գործել հայոց լեզվի ուսուցման դասընթացներ և խմբակներ: Իհարկե, այս խմբակները չեն կարող փոխարինել ամենօրյա դպրոցին, սակայն, այնուամենայնիվ, ունեն կարևոր նշանակություն հայագիտական որոշ առարկաների և, մասնավորապես, հայոց լեզվի դասավանդման առումով:

Հյուսիսկովկասյան դաշնային օկրուգ

Ստավրոպոլի երկրամաս. Բուդյոնովսկ քաղաքի դպրոցներից մեկում մտցվել է հայոց լեզվի և գրականության արտադասարանական ուսուցում:

Գեորգիևսկ քաղաքի երկու դպրոցներում կազմակերպվել են հայոց լեզվի և գրականության ֆակուլտատիվ ժամեր:

¹ *Тигран Манасян, Армянские школы в России, <http://www.ia-centr.ru/expert/329/>*

Ստավրոպոլի երկրամասի Եդեսիա հայկական գյուղում գործում են հայկական 2 միջնակարգ և 1 ութամյա դպրոցներ, պրոֆտեխուսումնարան:

Եսենտուլի քաղաքի երկու դպրոցներում հայ երեխաներին 2-10-րդ դասարաններում ուսուցանվում է հայոց լեզու և գրականություն: Հիմնվել է նաև կիրակնօրյա հայկական դպրոց:

Միներալնիե վոդիում գործում է կիրակնօրյա հայկական դպրոց:

Հյուսիսային Օսիա-Ալանիայի Հանրապետություն. Մանկավարժ Ալեքսանդր Վարդանյանի գլխավորությամբ 1991թ. բացվել է հայկական կիրակնօրյա դպրոց: 1994 թվականից Վլադիկավկազի վեց դպրոցներում գործում են հայկական դասարաններ:

ՀՌ հայկական դպրոցները, ինչպես Հայ սփյուռքի բազմաթիվ այլ համայնքների հայկական դպրոցներ, ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք պետք է գտնվեն համայն Հայության ուշադրության կենտրոնում: Անվիճելի է, որ ՀՌ հայկական դպրոցներն ունեն կարևոր նշանակություն ՀՌ հայկական համայնքներում ազգային կյանքը կազմակերպելու, դրա շարունակականությունն ապահովելու խնդիրներում: Անուրանալի է դրանց աշխատանքը հայկական համայնքների ձուլումը կանխելու գործում:

Կարևոր նշանակություն ունի ՀՌ և Հայաստանի բուհերի, ինչպես նաև այլ կրթական հաստատությունների համագործակցությունը: Մասնավորապես Հարավային դաշնային համալսարանը համագործակցում է Երևանի պետական համալսարանի, իսկ Կուբանի գյուղատնտեսական համալսարանը՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի հետ: Գոյություն ունի

համագործակցություն նաև դպրոցների միջև¹:

Այժմ Հարավային դաշնային համալսարանում բացվում են հայոց լեզվի դասընթացներ: Մասնավորապես ծրագրվում է անցկացնել հայոց լեզվի, գրականության, պատմության, մշակույթի, հայկական ժողովրդական ավանդույթների և սովորությունների դասընթացներ²:

2008թ. Հարավային դաշնային համալսարանում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սոցիալ-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ բացվեց հայագիտական լաբորատորիա: Մա ոչ միայն ՀՌ-ում, այլև ամբողջ Ռուսաստանում առաջին հայագիտական լաբորատորիան է: Այն գլխավորում է Վ.Վ. Կրիվոպուսկովը: Լաբորատորիայի գիտական խնդիրներն են՝ հայագիտության տեսական հայեցակարգումը, հայերի և ռուս-հայկական հարաբերությունների պատմությունը, հայոց ցեղասպանության խնդիրների ուսումնասիրությունը, հայկական համայնքների համալիր ուսումնասիրումը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դերակատարության ուսումնասիրումը, Ռուսաստանի հարավի և Կովկասի էթնոքաղաքական գործընթացներում հայերի մասնակցության մոնիթորինգը և այլն: Ծրագրվում է ստեղծել հայագիտության գծով մասնագիտացում, հիմնել հայոց լեզվի դասընթաց³: Այսօր հայությունը Ռուսաստանում չունի իր մտավոր

¹ Деятельность армянской общины на территории Российской Федерации, <http://www.armkc.ru/diaspora/>

² Курсы армянского языка в КубГУ, <http://www.armkc.ru/news/95/>

³ Դոնի Ռոստովում գործում է Ռուսաստանում առաջին հայագիտական լաբորատորիան, <http://hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2010&month=02&day=10&shownews=7144&LangID=4#7144>

ներուժին համապատասխան հայագիտական կենտրոններ (որպիսիք մասամբ առկա են Արևմուտքի որոշ երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում): Հետևաբար, Դոնի Ռոստովում հայագիտական լաբորատորիայի բացումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ՀՌ, այլև ընդհանրապես Ռուսաստանի հայության համար: Մա Ռուսաստանում հայագիտության զարգացման գործում կարևոր քայլ է և կարող է տարբեր հայագիտական կենտրոններ հիմնելու նախադեպ հանդիսանալ:

ՀՌ հայկական տարբեր կազմակերպություններ նախաձեռնում են նաև կրթական, մշակութային զանազան միջոցառումներ, մրցույթներ և այլն: Այդպիսի մի օրինակ է Կրասնոդարի «Խաչքար» Հայկական մշակութային կենտրոնի կազմակերպած «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հայագիտական ինտելեկտուալ մրցույթը, որին մասնակցեցին ՀՌ տարբեր բնակավայրերի հայկական թիմեր: Նման, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումները կարևոր դերակատարություն ունեն ՀՌ-ում հայկական արժեքների տարածման, հայկական ավանդույթների շարունակման, ազգային ինքնագիտակցության պահպանման համար:

Սակայն ՀՌ-ում և ընդհանրապես Ռուսաստանում գործող հայկական կրթական հաստատությունները չափազանց փոքրաթիվ են և ընդգրկում են գործունեության սահմանափակ ասպարեզ: Անշուշտ, առկա է դրանց քանակական և որակական զարգացման հրամայականը: ՀՌ և ընդհանրապես Ռուսաստանի հայ համայնքն այս ասպարեզում զիջում է շատ ավելի փոքրաթիվ մի շարք համայնքների: Մա, բնականաբար, ունի իր պատմական պատճառները: Այս հարցը պետք է հանդիսանա ոչ միայն ՀՌ և ողջ Ռուսաստանի հայության, այլև Հայաստանի ինդիքը: Այս մասին

իր մտահոգությունն է արտահայտել նաև ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը 2008թ. Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ. «...Ավելի մտահոգիչ է, որ այս հզոր համայնքը չունի համարժեք հայկական դպրոց, արդիական և լայն սպառում ունեցող մամուլ, մշակութային կենտրոններ: Բուհերում և գիտական հաստատություններում դեռևս չունենք այնպիսի հայագիտական կենտրոններ, որոնք կկարողանային մրցակցել Միացյալ Նահանգներում և Եվրոպայում գործող այդպիսի կենտրոնների հետ: Ես վստահ եմ, որ այսօր Մոսկվայի հայկական Սփյուռքը պատրաստ է ունենալու իր նոր «Լազարյան ճեմարանը», որտեղ ուսանելը պատվաբեր կհամարվի ո՛չ միայն հայագգիների համար, և որտեղ ուսանելու կզան հայեր ողջ աշխարհից, այդ թվում և Հայաստանից»¹:

ՀՌ հայկական կրթական հաստատությունների գործունեությունը կարևոր նշանակություն ունի ինչպես ողջ Ռուսաստանի համայնքների հայ ազգային կերպարի պահպանման ու ամրապնդման, այնպես էլ ժամանակակից աշխարհում ողջ Հայության ցանցային զարգացման ռազմավարական նպատակների տեսանկյունից: Այսօր կրթական հարուստ ավանդույթներ ունեցող ՀՌ հայկական համայնքներն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը կարող է պայմանավորվել միայն Հայության տարբեր հաստիքների փոխաջակցությամբ և ՀՀ կառավարության գործուն ջանքերի միջոցով:

¹ <http://www.president.am/events/statements/arm/?year=2008&id=11&pn=3>

10. ՀՌ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Տեղի հայկական կառույցների և Հայաստանի միջև կապերը, որպես կանոն, պաշտոնական բնույթի են, այսինքն՝ սփյուռքյան կառույցները կապ են պահպանում Հայաստանի՝ Սփյուռքի հետ կապերի համար պատասխանատու պաշտոնական կառույցների հետ: Բացառություն են կազմում Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների տեղի կողմնակիցները, որոնք կապ են պահպանում Երևանի համապատասխան կառույցների հետ:

Նշենք, որ Ռուսաստանի հարավի հայկական կառույցների և Հայաստանի կապերի ակտիվացումը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Դոնի Ռոստովում բացվեց Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսությունը:

Ռուսաստանի հարավի շրջանների և Հայաստանի միջև գոյություն ունեն նաև տնտեսական բնույթի կապեր, եղբայրական հարաբերություններ են հաստատված Ռուսաստանի հարավի և Հայաստանի մի շարք քաղաքների միջև: Դրա հետևանք են հանդիսանում Հայաստան՝ Ռուսաստանի հարավի սուբյեկտների և Ռուսաստանի հարավ՝ հայկական պատվիրակությունների պարբերական փոխայցելությունները:

Մշակույթի և կրթության ոլորտում կապերը պահպանվում են Հայաստան՝ «Մեկ ազգ – մեկ մշակույթ» համահայկական փառատոնին Ռուսաստանի հարավի ստեղծագործական կոլեկտիվների, որակավորման բարձրացման դասընթացներին (Կրթության նախարարությանը կից) հայոց լեզվի ուսուցիչների, ինչպես նաև Ռուսաստանի հարավում կազմակերպվող համերգներին Հայաստանի

տանի ստեղծագործական կոլեկտիվների և անհատ կատարողների մասնակցությամբ: Նշենք, որ Ռուսաստանի հարավում համերգային շրջագայության մեկնում են հայկական էստրադայի ամեննին էլ ոչ լավագույն կատարողները, իսկ ժողովրդական համույթների համերգները խիստ հազվադեպ են:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի հարավի ներկայացուցիչների՝ Հայաստանում կազմակերպվող զանազան համահայկական միջոցառումներին մասնակցությանը, ապա պետք է ասել, որ դա գրեթե չի անդրադառնում տեղի հայկական կառույցների կազմակերպվածության և գործունեության վրա, որոնց ներկայացուցիչներն այդ միջոցառումներին մասնակցության հրավերն ավելի շուտ ընկալում են որպես պատմական հայրենիքում գտնվելու հերթական հնարավորություն, այլ ոչ թե տեղի հայկական սփյուռքի համար գործնական կարևորություն ունեցող միջոցառում:

Հայ ձեռներեցների և Հայաստանի համապատասխան կառույցների միջև տնտեսական կապերն այնքան էլ զարգացած չեն, թեև ռուսական կողմից վարչական խոչընդոտներ չկան: Գլխավոր պատճառը, սփյուռքի ձեռնարկատերերի վկայությամբ, տրանսպորտային հիմնախնդիրն է Հայաստանից ապրանքներ ներկրելիս և տրանսպորտային հիմնախնդիր+կոռուպցիան՝ Հայաստանում աշխատել փորձելիս:

Հայաստանի հետ Ռուսաստանի հարավի արտահանման ներմուծման դինամիկայի մասին կարելի է դատել Կրասնոդարի երկրամասի օրինակով: Վերջինիս արտաքին տնտեսական գործունեության դեպարտամենտի տվյալներով՝ Հայաստան

ապրանքների արտահանումը 1995թ. 5 մլն դոլարից նվազել է մինչև 1 մլն-ի 2000 թվականին, 2005թ. վերադարձել է 5 մլն դոլարի նշակետին: Իսկ ներմուծումը Հայաստանից 1995թ. 7 մլն դոլարից նվազել է մինչև 2 մլն դոլարի 2005 թվականին:

**11. ԿՐԱՄՆՈՂԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ,
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ԸՍՏ ՌԴ ՓՈՐՁԱԳԵՏ Մ.ՍԱՎԿԱՅԻ**

Կրասնոդարի երկրամասի ամենամեծ ազգային փոքրամասնության՝ հայկական սփյուռքի ուսումնասիրությունը Ռուսաստանի նորագույն պատմության ողջ ընթացքում ակտուալ գիտական թեմա է Կուրանի էթնոքաղաքական դպրոցի համար: Երկրամասի հայկական համայնքների զարգացման դինամիկայի հարցի ուսումնասիրությունը պահանջում է դիտարկել հետևյալ սյուժեները.

- Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքի քանակական բնութագրերը,
- սփյուռքի կազմավորման պատմությունը,
- հայկական սփյուռքի սոցիոմշակութային միջավայրը, այդ թվում և երկրամասի ոչ հայ բնակչության կողմնորոշումները միջէթնիկ փոխգործակցությունների վերաբերյալ,
- հայկական համայնքի ֆենոմենը և նրա կազմակերպական կառուցվածքը,
- Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների դինամիկայի միտումները:

Մույն հոդվածը պատրաստելիս օգտագործվել են հեղինակի կողմից կամ նրա մասնակցությամբ 1990-ից առայսօր իրականացված հետազոտությունները (քանակական, փորձագիտական հարցախույզներ, թիրախային խմբեր):

Կրասնոդարի երկրամասի հայկական սփյուռքը պատկանում է հայ էթնիկ հանրության տարածաշրջանային ամենամեծաթիվ խմբերին: Ռուսաստանի 2002թ. մարդահամարի տվյալներով՝ երկրամասում ապրում էր 274.566 մարդ, որոնք իրենց հայ են համարել (այդ թվում 141.501-ը՝ տղամարդ և 133.065-ը՝ կին)¹: Նրանցից 211.397-ը տիրապետում էր հայերենին², Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ուներ 6948 մարդ³: 1989-2002թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայերը դարձան Կրասնոդարի երկրամասի թվաքանակով երկրորդ էթնիկ հանրությունը (1989թ. ռուսներից հետո երկրորդն ուկրաինացիներն էին):

Կուրանի հայ բնակչության թվաքանակի մասին տեղեկությունները ներկայումս պետք է էականորեն փոփոխված լինեն, քանի որ, նախ, ութ տարի առաջ անցկացված մարդահամարը փաստացի երկրամասում ապրող ամեննին էլ ոչ ամբողջ բնակչությանն էր հաշվի առել, և երկրորդ՝ 2002 թվականից շարունակվում էր հայ բնակչության միգրացիոն հոսքը: Մինևույն ժամանակ, Ռուսաստանի 2010թ. մարդահամարի արդյունքները դեռ չեն հրապարակվել, ուստի անհրաժեշտ է օգտագործել փորձագիտական գնահատականները:

Ռուսաստանի հայերի միության երկրամասային բաժանմունքի թերթի հրապարակման մեջ տրվում է Կրասնոդարի երկրամասի հայ

¹ Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство, т. 4, Краснодар, 2005, с. 7.

² Նույն տեղում, с. 223.

³ Նույն տեղում, с. 436.

բնակչության թվաքանակի գնահատականը. «Այսօրվա դրությամբ, Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի բաժանմունքի տվյալներով՝ Կուբանում ապրում է ընդհանուր առմամբ (ինչպես օրինական, այնպես էլ անլեգալ հիմունքներով) հայ ազգի մոտ 500 հազար ներկայացուցիչ: Մոտ 70 հազար հայ ապրում է Կրասնոդարում: Սա Կուբանի ամենամեծ համայնքն է և Ռուսաստանի հայերի ամենամեծաթիվ սփյուռքը»¹: Այս գնահատականին համաձայն են կուբանցի շատ փորձագետներ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկրամասի հայ բնակչությունը պատկանում է տարբեր խմբերի՝ ըստ այստեղ ապրելու ժամկետի և ըստ Հայաստան վերադառնալու նպատակադրումների: Ռուսաստանի հայերի միության Կրասնոդարի երկրամասային բաժանմունքի գործերի կառավարիչ Լ.Հովհաննիսյանը 2008թ. ապրիլի իր հարցազրույցում փաստել է. «Պաշտոնական վիճակագրությամբ՝ հայկական սփյուռքի թվաքանակը տարածաշրջանում կազմում է մոտ 300 հազ. մարդ: Բացի այդ, Կուբանում ապրում է 180 հազ. հայ ներգաղթյալ, որոնք կամ դեռ չեն հասցրել Ռուսաստանի քաղաքացիություն ստանալ, կամ այստեղ են աշխատանքային պայմանագրով»²: Այստեղ ժամանակավորապես գտնվող հայաստանցիների թիվը, որոնք չեն պատկանում Կուբանի մշտական բնակիչների թվին, իսկապես բավական մեծ է և ներառում է ինչպես այն անձանց, որոնք մտադիր են Ռուսաստանի քաղաքացիություն

¹ Армяне на Кубани: мигранты или местные жители?//САР. №2 (141). 28.08.2007, с. 1.

² Наша задача – защищать интересы армян//<http://www.mashtots.ru/oficialno/nasha-zadacha-zashhishhat-interesy-armyan>.

ստանալ (բայց ոչ լեզալացված), այնպես էլ նրանց, ովքեր խուսափում են պաշտոնական հաշվառումից. ժամանակավոր աշխատողներ, երկրամասում ապրող հայ ընտանիքներին հյուր եկած անդամներ, Հայաստանի Հանրապետությունում ծառայությունից խուսափող երիտասարդներ: 2010 թվականից Ռուսաստանում օտարերկրյա աշխատողների համար մտցված արտոնագրերը (պատենտները), ինչպես սպասվում է, թույլ կտան կրճատել գրանցումից խուսափողների թիվը և բարձրացնել միգրացիոն հաշվառման որակը:

Կրասնոդարի երկրամասի հայ բնակչությունը պատմականորեն բավական երկար ժամանակում է հաստատվել այստեղ, որն առանձնանում է մի քանի փուլով: Սրա հետ կապված՝ արդի հայ սփյուռքն էապես տարբերվում է սոցիոմշակութային բնութագրերով, մասնավորապես՝ ձուլման մակարդակով: Կարելի է վստահաբար ասել, որ Կրասնոդարի երկրամասի հայ սփյուռքի խոր «բազմաշերտությունը» նրա գլխավոր որակական բնութագիրն է: Այդ բնութագիրն, իր հերթին, զգալիորեն որոշում է այս տարածքի հայկական համայնքների առանձնահատկությունները:

Կուրանի տարածքում ժամանակագրական առումով հայերի առաջին խումբը չերքեզահայերն են. «Այսպես կոչված չերքեզահայերի (չերքեզցի կամ լեռնցի հայեր) առավել հին խումբն (Հյուսիսային Կովկասում հայտնվելու ժամանակով պայմանավորված) ապրում էր արևմտյան ադիգների մեջ»¹: Հյուսիսային Կովկասում այս խմբի ի հայտ գալու ժամանակի մասին գոյություն

¹ Тер-Саркисянц А., Армяне. История и этнокультурные традиции, М., 1998, с. 285 – 286.

ունեն տարբեր վարկածներ, ներառյալ՝ ակնհայտորեն առասպելական վարկածը (օրինակ, հայ ռազմիկները Հայաստանից X դարում վերաբնակվել են այստեղ): Առավել հավաստի է թվում Լ.Ա. Պոդոպյանի տեսակետը, որի կարծիքով՝ չերքեզահայերի նախնիներն այստեղ են հայտնվել XV դարում Ղրիմից¹: Կովկասյան պատերազմի սկզբին (1818-1864թթ.) չերքեզահայերը աղիգերենն օգտագործում էին որպես մայրենի (հայերենը պահպանվել էր ներկայիս Կրասնոդարի երկրամասի տարածքից դուրս, Կովկասյան Միներալնիե վոդիի չերքեզահայերի մի փոքր խմբի մոտ), ընդունել էին աղիգական նյութական մշակույթն ու հոգևոր մշակույթի շատ տարրեր: Չերքեզահայերի յուրահատկությունը պահպանվում էր հայ գրիգորյան կրոնի շնորհիվ, ինչն էլ պայմանավորեց հստակ արտահայտված խմբային ինքնության և ինքնագիտակցության առկայությունը: Կովկասյան պատերազմի ընթացքում չերքեզահայերը բնակություն հաստատեցին Կուբանի աջ ափին, որտեղ հիմնեցին Արմավիր քաղաքը: XIX դ. վերջին – XX դարասկզբին տեղի ունեցավ չերքեզահայերի երկրորդ ձուլումը. նրանք անցան ռուսերեն լեզվին և ընդունեցին ռուսական նյութական քաղաքային մշակույթը: Չերքեզահայերի մեջ ներկայումս էթնիկ ինքնագիտակցության մի քանի տարբեր տեսակներ են առանձնանում, ներառյալ հայկականը, ռուսականը և հատուկ էթնիկությունը. չերքեզահայերի առանձին ներկայացուցիչներ 2002թ. մարդահամարի ժամանակ իրենց համարել են հատուկ էթնիկ հանրություն (3 մարդ Կրասնոդարի

¹ *Погосян Л.А., Армянская колония Армавира, Ереван, 1981.*

երկրամասում), այն դեպքում, երբ Արմավիրի հայ բնակչությունը կազմում էր 18.262 մարդ¹:

Ժամանակի առումով Կրասնոդարի երկրամասի հայ բնակչության երկրորդ խումբը համշենահայերն են՝ պատմական Համշեն գավառից, որոնք Սևծովյան մերձափնյակում են հաստատվել Կովկասյան պատերազմի ավարտից հետո՝ XIX դ. երկրորդ կեսին և գլխավորապես դարավերջին: Ինչպես գրում է Ն.Ի. Բոնդարը, «թուրքահպատակ» հայերի վերջին խոշոր ալիքը մինչհեղափոխական շրջանում տեղափոխվեց 1908-1909թթ.: Չնայած 1889-ից Սևծովյան մերձափնյակի պաշտոնական բնակեցումը դադարեցվել էր, հայ ներգաղթյալների հոսքն այս տարածք շարունակվում էր²: Հայերի էթնոգրաֆիական այս խմբի սփռման առանձնահատկությունն այն էր, որ նրանք բնակություն էին հաստատում Սև ծովի ափի երկայնքով մեկ (Սևծովյան նահանգի վարչական սահմաններում, ներկայիս Տուապսեից մինչև Սուխում), որը խորհրդային իշխանության տարիներին բաժանված էր Ռուսաստանի և Աբխազիայի միջև: 1992-1994թթ. վրաց-աբխազական զինված հակամարտության շրջանում Աբխազիայի հայ բնակչության զգալի մասը տեղափոխվեց Կրասնոդարի երկրամասի Սևծովյան ափ: Միգրացիոն այսօրինակ հոսքի ուղղությունը պայմանավորված էր Ռուսաստանի և Աբխազիայի

¹ Итоги Всероссийской переписи населения 2002 года по Краснодарскому краю. Национальный состав и владение языками, гражданство, т. 4, Краснодар, 2005, с. 7.

² *Бондарь Н.И.*, Что мы знаем друг о друге? Этнографический очерк о народах Кубани//Кубанский краевед. Ежегодник, 1990, с. 150.

համշենահայերի ակտիվ (այդ թվում և արյունակցական) կապերով: Ա.Թուրումջյանի գնահատմամբ՝ պատերազմի ընթացքում և դրանից հետո Աբխազիայի 80 հազարանոց հայ բնակչությունը կրճատվեց 50%-ով¹: 2002թ. մարդահամարի տվյալներով՝ Սոչիի հայ բնակչությունը կազմում էր 80.045 մարդ կամ 20,2%, Ադլերի շրջանի Սոչիի (Աբխազիային սահմանակից) հայ բնակչությունը՝ 32.930 կամ 31.1%:

Հայ բնակչության՝ ժամանակի առումով երրորդ ներգաղթը կապված է Առաջին համաշխարհային պատերազմի ողբերգական իրադարձությունների և Թուրքիայում հայերի ցեղասպանության հետ: Գնահատելով այդ իրադարձությունների միգրացիոն հետևանքները՝ կուբանցի ազգագրագետ Ն.Շահնազարյանը գրում է. Հյուսիսկովկասյան երկրամասում (տարածքով զգալիորեն մեծ էր ներկայիս Կրասնոդարի երկրամասից) 30-ական թթ., համամիութենական մարդահամարի համաձայն, ապրում էր 170 հազ. հայ, ընդ որում՝ տասնյակ հազարավոր հայ փախստականներ Արևմտյան Հայաստանից չէին հաշվառվել²:

Հայերի ներգաղթը Կրասնոդարի երկրամաս խորհրդային շրջանում բնութագրվում էր ակտիվության բուռն փայլատակումների բացակայությամբ: Մինևույն ժամանակ, հայկական միգրացիայի ինտենսիվության աճի միտում կար: Այս շրջանի ներգաղթյալների թվում ի հայտ եկավ այնպիսի նոր խումբ, որը

¹ Тулумджян А., Армянские общины на современном этапе: выживание, перспективы/Бюллетень научно-образовательного фонда Нораванк. Материалы научно-практической конференции 19-20 июня 2007г., Ереван.

² Шахназарян Н., Армяне Краснодарского края, Краснодар, Южный региональный ресурсный центр, 2008, с. 9.

կազմված էր բուհերի՝ աշխատանքի ուղեգիր ստացած շրջանավարտներից: Խորհրդային շրջանի հայկական միգրացիայի դինամիկային կարելի է հետևել 1959, 1970, 1979 և 1989թթ. մարդահամարների վիճակագրությամբ: 1959թ. Կրասնոդարի երկրամասում հաշվառված էր (առանց Ադիգեայի Բնքնավար Մարզի) 75.163 հայ, 1970թ.՝ 93.372: 1979թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով՝ Կրասնոդարի երկրամասում ապրում էր 114.438 հայ, 1989թ. համամիութենական մարդահամարի արդյունքներով՝ 171.757 մարդ: Այսպիսով, խորհրդային շրջանին բնորոշ էր հայկական ներգաղթի սահուն աճ, որը սաստկացավ XXդ. 80-ական թթ.:

Անհրաժեշտ է նշել, որ 1925թ. Կուբանում ստեղծվեցին հայ ազգային մի շարք գյուղխորհուրդներ (22 գյուղխորհուրդ Հյուսիսկովկասյան երկրամասի Մայկոպի և Կուբանի տարածքում): 1926թ. Համառուսական Կենտգործկոմի որոշմամբ ստեղծվեց Հայկական շրջանը Մայկոպի օկրուգում, որը ներառում էր 7 գյուղխորհուրդ¹: Այս շրջանը գոյատևեց մոտ 10 տարի և լուծարվեց:

Միգրացիոն ակտիվության հերթական բարձրակետը կապված էր 1988թ. երկրաշարժի և Հարավային Կովկասի տարածքում անցած դարի 90-ականների երկրորդ կեսին տեղի ունեցած հակամարտությունների հետ: Ինչպես փաստում է Ա.Ե. Տեր-Մարգարյանը, «Հայերի թիվը երկրամասում 1993թ. սկզբին, ոչ պաշտոնական տվյալներով, աճեց մոտավորապես մինչև 290 հազ. մարդու՝ նրանց երկրորդ

¹ *Акопян В.З., Национальные районы и их официальный язык (армянские районы Северного Кавказа в 20-е годы)//Армяне Северного Кавказа. Studia Pontocaucasica. Вып. 2, Краснодар, 1995, с. 150.*

տեղը դնելով ռուսներից հետո և առաջինը՝ ազգային փոքրամասնությունների շարքում: Այս փաստը, ինչպես նաև հայերի՝ ձեռնարկատիրական բիզնեսի, էթնիկ շփումներում որոշակի գերազանցության ձգտումը, իսկ երբեմն էլ՝ տեղի սոցիումալ-կուլթային միջավայրին չադապտացվելը, նրանց ավելի բարձր կենսական չափորոշիչն ու ապահովված նյութական բարեկեցությունը համընդհանուր սոցիալ-տնտեսական դժվարությունների ֆոնին նպաստում են նրանց և տեղի սլավոն բնակչության ներկայացուցիչների միջև ազգամիջյան լարվածության խորացմանը¹: Անհրաժեշտ է հասկապես ընդգծել, որ այդ շրջանի միգրացիոն հոսքը դեպի Կուբան սոցիալական առումով համասեռ չէր: Այն մարդկանց կողքին, ովքեր հակամարտության գոտուց դուրս էին բերել իրենց կապիտալները, վերաբնակների մեջ շատ էին նաև հարկադրյալ տեղափոխվածները, որոնք գրկվել էին իրենց ողջ ունեցվածքից և ստիպված էին նորից կյանք սկսել նոր տեղում: Ինչպես Մ.Ա. Աստվածատուրովան, մենք ևս կարող ենք այդ շրջանի հայ միգրացիան անվանել «տարհանման և սթրեսային»²: Միևնույն ժամանակ, ամենևին էլ ոչ բոլոր հայ ներգաղթյալներն ստացան հարկադրյալ տեղափոխվածի պաշտոնական կարգավիճակ: Քանի որ ռազմական գործողությունները չէին վարվում Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա ամենից քիչ թվով

¹ *Тер-Саркисянц А.Е.*, Межнациональные отношения в Краснодарском крае, 1993 г. (основные тенденции развития), М., Институт этнологии и антропологии РАН, 1994, с. 8.

² *Аствацатурова М.А., Савельев В.Ю.*, Диаспоры Ставропольского края в современных этнополитических процессах, Ростов-на-Дону, Пятигорск, 2000, с. 81.

բավարարվեցին հենց Հայաստանից ներգաղթածների՝ հարկադրյալ տեղափոխվածի կարգավիճակ ստանալու միջնորդությունները: Այսպես, Օ.Ա. Օբերեմկոյի և Մ.Մ. Կիրիչենկոյի հաշվարկներով՝ 1995-1998թթ. Հայաստանից հարկադրյալ տեղափոխվածների կարգավիճակ ստանալու համար դիմածների միայն 17,3%-ն ստացավ այդ կարգավիճակը: Վրաստանից տեղափոխվածների մեջ այդ ցուցանիշը կազմում է 89,0%¹:

XXդ. 90-ական թթ. երկրորդ կեսին և XXIդ. առաջին տասնամյակին բնորոշ է հիմնականում հայերի տնտեսական միգրացիան Կրասնոդարի երկրամաս: Ընդ որում, եթե անցյալ դարի միգրացիայի համար բնորոշ էր այն, որ այստեղ էին գալիս հայեր Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի քաղաքներից, ապա վերջին տարիների ընթացքում դիտվում է միգրացիայի ակտիվացում գյուղական վայրերից: Վերջին խմբի ներկայացուցիչների համար բնութագրական է արդիականացման ավելի ցածր մակարդակ և, համապատասխանաբար, նոր կենսապայմաններին հարմարվելու պոտենցիալ: Այս շրջանի միգրացիոն տեղաշարժի քանակական բնութագրերը վերը ներկայացվեցին: Կրասնոդարի երկրամասի հայ բնակչության տարբեր խմբերի՝ տեղական սոցիոմշակութային միջավայրին հարմարվելու տարբեր մակարդակը ընկալման և նրանց միջև փոխգործակցության խնդիրներ է առաջացնում: Այսպես, Գ.Ս. Դենիսովը մեջբերում է կատարում Տուապսեի հայերի ներկայա-

¹ *Оберемко О.А., Кириченко М.М., Вынужденные переселенцы на Кубани: институциональная перспектива управления, Краснодар, 2001, с. 56.*

ցուցչի հետ հարցազրույցից (Ռուստովի պետական մանկավարժական համալսարանի կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի և Տուապսեի մանկավարժական քոլեջի սոցիոլոգիական լաբորատորիայի 2001-2002թթ. համատեղ հետազոտությունը). «Այն հայերը, որոնք հիմա են գալիս, գալիս են միայն փողի հետևից: Իսկ մենք այստեղ էինք գալիս հանգամանքներից ելնելով, նոր կյանքի համար: Հայաստանցի հայերը չեն հարգում ոչ ոքի՝ իրենցից բացի. փորձում են այստեղ հայկական կարգուկանոն հաստատել... երբեմն նույնիսկ գրոտեսկի ձևով: Փորձում են ինձ հետ կամ ուրիշների հետ խոսել միայն մայրենի լեզվով, ընդ որում, անընդհատ նշելով, որ մեր բարբառը գրական չէ, ուրեմն մենք երկրորդ կարգի հայեր ենք: Նրանց պահվածքը հասարակական վայրերում տարբերվում է տեղի բնակիչների վարքագծից, ինչը չի կարող նրանց չվրդովեցնել»¹:

Կրասնոդարի երկրամասի հայ բնակչության տարբեր խմբերն այստեղ են եկել տարբեր ժամանակներում (տարբերությունը երբեմն հարյուրամյակներ է կազմում), բայց նաև տարբեր տեղերից: Այսպես, Ն.Շահնազարյանը գրում է. «Կրասնոդարի երկրամասի միասնական հայ հանրության մասին պատկերացումը ծառայում է ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ տարածաշրջանային իշխանությունների առաջնորդների ինքնության գաղափարին: Սակայն հայերի առօրյա կյանքում ավելի մեծ նշանակություն ունեն կապերն ավելի

¹ Денисова Г.С., Армянская миграция на Юге России в зеркале общественного мнения//Проблемы миграции на Юге России: опыт социологического анализа, Ростов-на-Дону, 2003, с. 43.

սերտ խմբերի հետ, որոնք համերաշխ են տարածաշրջանային ծագման և ենթամշակութային առանձնահատկության սկզբունքներով»¹: Հոդվածիս հեղինակը քանիցս իր գիտական և հետազոտական հրապարակումներում ընդգծել է Կրասնոդարի երկրամասի հայ սփյուռքի այս նշանակալի հատկությունը. «Կուրանի հայերի տարածաշրջանային խումբը ձևավորվել է երկար ժամանակում, երկար դարերի ընթացքում: Այն կազմում են ոչ միայն բուն Հայաստանից եկած հայերը: Այլ նաև աշխարհի ամենատարբեր տարածաշրջաններից եկածները... Այս կապակցությամբ Կրասնոդարի երկրամասի հայ սփյուռքը խիստ տարասեռ է: Հայի ստերեոտիպային կերպարն անխուսափելիորեն ցրվում է Կուրանի հայերի հետ շփվելու ընթացքում, որոնք շատ տարբեր են և բոլորովին նման չեն մեկը մյուսին»²:

Այսպիսով, Կրասնոդարի երկրամաս հայերի միգրացիայի երկարատև գործընթացը հանգեցրեց այն բանին, որ այստեղ ձևավորվեց մեծաթիվ, բայց սոցիոմշակութային առումով ոչ միասեռ սփյուռք: Այս անմիասեռության կարևոր հայտանիշներից մեկը կուրանահայերի արդիականացման տարբեր մակարդակներն են:

Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների ներկա վիճակի, դինամիկայի և հեռանկարների հետազոտությունը պահանջում է ներկայացնել սոցիոմշակութային այն միջավայրը, որում գոյություն ունեն այդ համայնքները:

¹ Шахназарян Н., Армяне Краснодарского края, Краснодар, ЮРПИЦ, 2008, с. 10.

² Савва М.В., Армяне Краснодарского края: лица «кубанской национальности». Предисловие//Армяне Краснодарского края, Краснодар, Южный региональный ресурсный центр, 2008, с. 3.

Կրասնոդարի երկրամասի պետական վիճակագրության դաշնային ծառայության տարածքային մարմնի հաշվարկներով՝ երկրամասի բնակչության թիվը 2009թ. ավելացել է 17.878 մարդով կամ 0,35%-ով (2008թ.՝ 19,8 հազ. մարդով կամ 0,4%-ով) և 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 5159,8 հազ. մարդ: Բնակչության թվի ավելացումը, ինչպես և նախորդ տարիներին, տեղի էր ունենում միաժամանակ երկու գործոնի հաշվին. միգրացիոն աճի և բնակչության մահացության պակասի: Կրասնոդարի երկրամասում, ինչպես և ՌԴ սուբյեկտների մեծամասնությունում, մահացածների թիվը գերազանցում է ծնվածների թիվը: 2009թ. այդ գերազանցումը կազմել է 9,7% (համեմատության համար. 2007թ.՝ 28%): Բնակչության մահացությունը 2009թ. Կրասնոդարի երկրամասում հասավ 5644 մարդու: Բացառություն կազմեցին Անապա, Գորյաչի Կլյուչ, Կրասնոդար, Մոչի քաղաքային օկրուգները, ինչպես նաև Բելորեչենսկի և Թբիլիսյան մունիցիպալ շրջանները, որտեղ ծնվածների թիվը գերազանցում էր մահացածների թիվը:

Երկրամասի բնակչության միգրացիոն աճը 2009թ. հունվար-նոյեմբերին, 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, կրճատվել էր 5214 մարդով (18,1%), ինչը տեղի ունեցավ հիմնականում երկրամաս եկած գրանցված 8451 (15,7%) մարդկանց թվի կրճատման արդյունքում: 2009թ. միգրացիայի դրական սալոդո դիտվել է ԱՊՀ բոլոր մասնակից երկրների բնակչության փոխանակության հաշվին:

ԱՊՀ երկրների մեջ միգրացիոն աճի 26,4%-ը բաժին էր ընկնում Հայաստանին, որը վերջին մի քանի տարիների ընթացքում առաջատարն է այս ցուցանիշով: Ընդ որում, ամեն տարի տեղի է ունենում Հայաստանից հեռացածների թվաքանակի ոչ մեծ ավելացում:

2009թ. շարունակվում էր միգրացիայի բոլոր հիմնական տեսակների (այդ թվում ներքուսական, ինչպես նաև ԱՊՀ երկրների հետ) ակտիվության նվազումը: Օտարերկրացիների ընդունելու քվոտան 2009թ. կազմել է 32 հազ. մարդ (2008-ին՝ 54 հազ. մարդ):

Ակնհայտ է, որ Կրասնոդարի երկրամասի ժողովրդագրական բարեկեցությունը ՌԴ շատ այլ սուբյեկտների համեմատ բացատրվում է երկու գործոնով. միգրացիոն հոսքով, որը կոմպենսացնում է բնակչության բնական անկումը, և բնակչության մահացության նվազմամբ:

Ժողովրդագրական վիճակագրության վերլուծությունից, որը մշտապես անցկացվում է կուրանցի հետազոտողների կողմից, ակնհայտ է դառնում, որ միգրացիոն հոսքը Կրասնոդարի երկրամաս մի ամբողջ կարգով կրճատվել է XXդ. 90-ական թթ. կեսերի համեմատ¹: Նման իրավիճակ է ստեղծվել ընդհանրապես ողջ Ռուսաստանում: Միևնույն ժամանակ, չի նվազել, այլ նույնիսկ որոշ չափով մեծացել է ահաբեկչական սպառնալիքը, շարունակվում է բնակչության բնական անկումը: Դա օրակարգ է մտցնում հետևյալ հարցերը. ինչպիսի՞ն պետք է լինի Կրասնոդարի երկրամասի և Ռուսաստանի միգրացիոն քաղաքականությունը: Համապատասխանո՞ւմ է արդյոք միգրացիայի մեր ընկալումը իրականությանը: Ինչպիսի՞ն են Կուրանի հիմնական ազգային

¹ *Петров В.Н., Ракачев В.Н., Ракачева Я.В., Черный В.И.*, Мигранты в Краснодарском крае: проблемы адаптации и формирования толерантной культуры, Краснодар, 2002; *Савва М.В.*, Миграция в Южном федеральном округе//Этническая ситуация и конфликты в странах СНГ и Балтии. Ежегодный доклад Сети этнологического мониторинга, 2004, с. 61-81.

փոքրամասնությունների դինամիկան և հեռանկարները: Այս հարցերին օգնում են պատասխանել հեղինակի կամ նրա մասնակցությամբ 2004-ից անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները:

Կրասնոդարում սույն թեմայով («Ներգաղթյալները ձեր քաղաքում») վերջին ծավալուն հետազոտությունն անցկացվել է հեղինակի կողմից 2004թ.: Ցավոք, դրանից հետո ներկայանալի որևէ քանակական հետազոտություն (զանգվածային հարցախույզներ) այս թեմայի շուրջ չի իրականացվել: «Ներգաղթյալները ձեր քաղաքում» հետազոտության ընթացքում, Միգրացիայի ուսումնասիրման մոսկովյան կենտրոնի մեթոդիկայով, հարցման են ենթարկվել 100 կրասնոդարցի, կրասնոդարյան բուհերի 119 ուսանող և 148 ներգաղթյալ, որոնք քաղաքում ապրում են մի քանի ամսից մինչև 10 տարի: Հարցման մեթոդիկան պայմանավորված էր այն բանով, որ միգրացիոն իրավիճակը դիտարկվի երկու կողմից. հնաբնակների և իրենց՝ ներգաղթյալների աչքերով: Հաշվի առնելով հանրային կարծիքի մեջ առկա պատկերացումը Կրասնոդարում միգրացիայի այլերնիկ բնույթի մասին պատկերացումը՝ հետազոտության կարևոր ուղղությունը միգրացիոն գործընթացների էթնիկ ասպեկտի ուսումնասիրումն էր:

Քաղաքի բնակիչները ներգաղթյալներին ընկալում են որպես բնակչության մեծաթիվ կատեգորիա: «Ի՞նչ եք կարծում, շա՞տ են ներգաղթյալները ձեր քաղաքում» հարցին 40%-ը պատասխանել է՝ «շատ շատ են», 50%-ը՝ «բավական շատ են»: Ընդամենը 5%-ն է նախընտրել «շատ չեն» և 2%-ը՝ «քիչ են, գրեթե չկան» պատասխանը: Անհրաժեշտ է նշել ներգաղթյալների թվի մասին պատկերացումների ակտուալությունը Կրասնոդարի բնակիչների

համար. ընդամենը 3%-ն է դժվարացել պատասխանել այդ հարցին: Այս հարցի պատասխանը չէր ենթադրում ներգաղթյալների որևէ քանակական գնահատական: Մեր կարծիքով, ներգաղթյալների մեծաթվության մեջ համոզվածների 90%-ը նշանակում է, նախ, հարցվածների սուր հուզական վերաբերմունքը հիմնախնդրի հանդեպ, և երկրորդ՝ քաղաքի բնակիչների փաստացի համակարծիքությունն այս հարցում:

Առաջին երկու ընտրությունը կանխատեսելի էին. հանրային կարծիքը վերջին տարիներին միգրացիան տարածաշրջանում ընկալում է հիմնականում որպես տնտեսական: Կյանքին սպառնացող վտանգի հետ կապված պատճառներն առաջին տեղում էին XXդ. 80-ական թթ. վերջին-90-ականների սկզբին, ներկայումս դրանք այնքան էլ զգալի տեղ չեն զբաղեցնում միգրացիայի պատճառների ընդհանուր թվում: Ուշագրավ է այն, որ բարձր է այն հարցվողների տոկոսը (բոլոր հարցվողների ավելի քան մեկ երրորդը), որոնք համոզված են միգրացիոն հոսքերի «քրեական կողմնորոշման» մեջ:

Այն տարածքների մեջ, որտեղից եկել են ներգաղթյալները, մեծ տարբերությամբ առջևում է Հայաստանը՝ 48% (որին կարելի է ավելացնել նաև Լեռնային Ղարաբաղի 1%-ը), երկրորդ տեղում է Ուկրաինան՝ 18%, երրորդում՝ Վրաստանը՝ 16% և չորրորդում՝ Ադրբեջանը՝ 14%: Հատկանշական է, որ հարցման ենթարկվածները խիստ հազվադեպ էին նշում Ռուսաստանի տարածքները՝ որպես ներգաղթյալների ելման տարածքներ (ընդամենը 6%): Այսպիսով, կրասնոդարցիները միգրացիան ընկալում են որպես ընդհանրապես Ռուսաստանին չվերաբերող և գերազանցապես անդրկովկասյան երևույթ:

Հարցման ենթարկված կրասնողարցիներին առաջարկվում էր ինքնուրույն նշել, թե որ ազգի ներգաղթյալներն են գերակշռում քաղաքում: Գնահատման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 11.1-ում:

Աղյուսակ 11.1

Կարծիք տարբեր ազգերի ներգաղթյալների գերակշռության մասին (հարցման ենթարկվածները %-ով)

№№	Ներգաղթյալների ազգությունը	Վալիդ տոկոսը
1.	Հայեր	77,9
2.	Վրացիներ	39,1
3.	Տաջիկներ	33,3
4.	Կովկասցիներ	30,8
5.	Ադրբեջանցիներ	30,8
6.	Թուրք-մեսխեթցիներ	23,1
7.	Չեչեններ	5,9
8.	Գնչուներ	4,4
9.	Ռուսներ	4,2
10.	Դժվարանում եմ պատասխանել	27

Ակնհայտ է Կրասնոդար միգրացիայի հարցում հայերի գերակշռության ընկալումը: Հետաքրքիր է, որ հարցման ենթարկվածների ընդամենը 4,2%-ն է ռուսներին առանձնացրել որպես ներգաղթյալների գերակշռող խումբ: Միևնույն ժամանակ, վերջին 15 տարիներին հաշվառված միգրացիոն հոսքերում Կուբան տեղափոխված ռուսների տոկոսը բավական կայուն է և կազմել է 80-85, այսինքն՝ համապատասխանել է երկրամասի ընդհանուր բնակչության ռուսների թվին: Կրասնոդարի հնաբնակների այս կարծիքը թույլ է տալիս սույն հարցման հիման վրա անել հետևություններ հայ սփյուռքի հանդեպ վերաբերմունքի տարբեր ասպեկտների մասին:

Ներգաղթյալների նյութական վիճակը հետազոտության ընթացքում գնահատվել է տեղաբնակների (հնաբնակների) առնչությամբ: Հարցվածների 25%-ը կարծում է, որ ներգաղթյալների նյութական վիճակը զգալիորեն ավելի լավ է, քան տեղաբնակներինը, 20%-ի կարծիքով՝ նրանց վիճակը մի փոքր ավելի լավ է, 17%-ի կարծիքով՝ նույնն է, ինչ և տեղաբնակներինը, 16%-ը կարծում է, որ նրանց վիճակը մի փոքր ավելի վատ է, 8%-ը՝ զգալիորեն վատ է, քան տեղաբնակներինը: Միայն 3%-ն է հայտարարել, որ ներգաղթյալների նյութական վիճակը «բոլորի մոտ տարբեր է», 11%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին: Ընդհանրացնելով վերը բերված տվյալները՝ կարելի է ասել, որ քաղաքի բնակիչների 45%-ը կարծում է, որ ներգաղթյալների նյութական վիճակն ընդհանուր առմամբ ավելի բարձր է, և միայն 24%-ն է կարծում, որ այն ավելի վատ է:

Կրասնոդարի հնաբնակները հիմնականում բացասաբար են վերաբերվում ներգաղթյալներին: Այսպես, հարցման

ենթարկվածների 19%-ը հայտարարել է, որ «կարեկցում է ներգաղթյալներին, պատրաստ է օգնել նրանց հարմարվելու գործում»: Իր անտարբերության մասին հայտարարել է հարցվածների 14%-ը, բացասական վերաբերմունքի մասին՝ 41%-ը: Իր վերաբերմունքի մասին կարծիք չի ունեցել հարցվածների 21%-ը: Եվս 1%-ը կարեկցանքով է վերաբերվում միայն ռուս ներգաղթյալներին, 4%-ը՝ «բոլորի հանդեպ՝ տարբեր կերպ»: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ներգաղթյալների (ինչպես և ցանկացած այլ հանրույթի) հանդեպ բացահայտ բացասական հուզական վերաբերմունքն ընկալվում է որպես առճակատման դրսևորում և, հետևաբար, հնարավորինս թաքցվում է որոշ հարցվողների կողմից: Ուստի, ներգաղթյալների հանդեպ վերաբերմունքի հարցում կարևոր ճշտումներն օգնում են դասակարգել «Ներգաղթյալների ներկայությունից ինչ-որ դրական բան տեսնո՞ւմ եք ձեր քաղաքի համար, անձամբ ձեզ համար» հարցի պատասխանները: Հարցի ձևակերպումն իսկ ենթադրում է հիմնախնդրի հանդեպ հարցվողի վերաբերմունքի մի ինչ-որ ռացիոնալացում և, այսպիսով, պատասխանը դարձնում ավելի անկեղծ: Այս հարցին «ոչ» է պատասխանել 67%-ը, «այո»՝ ընդամենը 14%-ը, 19%-ը դժվարացել է պատասխանել: Ակնհայտ է, որ գերակշռում են միզրացիայի հետևանքների բացասական գնահատականները:

Հարցվածների մեծ մասը մեր հետազոտության ընթացքում հայտարարել է այն մասին, որ ինչ-որ անհարմարություններ է զգացել ներգաղթյալների հետ կապված: Այս հարցին «այո, երբեմն» է պատասխանել հարցվողների 50%-ը, «այո, մշտապես»՝ 15%-ը, «ոչ, երբեք»՝ 29%-ը: Հարցին դժվարացել է պատասխանել ընդամենը 6%-ը: Կրասնոդարի բնակիչների 65%-ն ինչ-որ

Ժամանակ դժգոհ է եղել ներգաղթյալներից, ինչն էլ պայմանավորել է նրանց վերաբերմունքը ներկայումս:

Եթե նախորդ հարցն ուղղված էր ներգաղթյալների հետ շփման անձնական փորձի մասին պատկերացումները պարզելուն, ապա «Եղե՞լ են արդյոք խոշոր կոնֆլիկտներ ներգաղթյալների և ձեր բնակավայրի բուն բնակչության միջև» հարցը հնարավորություն է տալիս դատել միգրացիայի կոնֆլիկտային ներուժի վերաբերյալ պատկերացումների մասին: Հարցի պատասխանները դասակարգվել են հետևյալ կերպ.

1. այո, եղել են - 45%,
2. ոչ, մեզ մոտ երբեք կոնֆլիկտներ չեն եղել - 26%,
3. դժվարանում եմ պատասխանել - 29%:

Ուշագրավ է պատասխանել դժվարացողների մեծ թիվը: Կարելի է ենթադրել, որ մարդիկ, որոնք չկարողացան հիշել որևէ (առավել ևս՝ հեշտ հիշվող խոշոր) կոնֆլիկտային իրավիճակ, միևնույն ժամանակ չկարողացան դիմակայել ներգաղթյալների հետ բարձր կոնֆլիկտայնության կարծրատիպին:

Սույն հոդվածի հեղինակը կատարել է Կրասնոդարի երկրամասի էթնոկոնֆլիկտաբանական քարտեզագրում 1989-2005թթ. ժամանակաշրջանի համար՝ մամուլի այն նյութերի հիման վրա, որոնք պատմում էին տարբերի էթնիկական հանրությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ներգաղթյալների և հնաբնակների մասնակցությամբ կոնֆլիկտների մասին: Այդ ժամանակաշրջանում ի հայտ է բերվել 28 կոնֆլիկտային իրավիճակ՝ բռնության կիրառմամբ, որոնց մասնակիցները բաժանված են եղել ըստ ազգային հատկանիշի: Մամուլում նկարագրված այդ դեպքերից 11-ում

հակամարտող կողմերից մեկի կազմում հայեր են եղել¹: Այս թվային տվյալները՝ ավելի համոզիչ մեկնաբանվելու համար, կարիք ունեն, որպեսզի որոշվի, թե բռնության և վանդալիզմի դրսևորումների որ քանակական մակարդակը կարելի է բարձր անվանել: Ներկայումս մենք չունենք նման «փորձարկված» գնահատականներ: Սակայն դժվար չէ հասկանալ, որ հարցման ընթացքում ի հայտ բերված հանրային կարծիքը զգալիորեն բարձրացնում էր Կրասնոդարի երկրամասի վերաբերյալ մամուլում արձանագրված միջէթնիկ կոնֆլիկտայնության մակարդակը:

Այսպիսով, հանրային կարծիքի մեջ կայուն կերպով պահպանվում է ներգաղթյալների և հնաբնակների փոխհարաբերությունների բարձր կոնֆլիկտային ներուժի մասին պատկերացումը:

Հարցմանը մասնակցած կրասնոդարցիները գրեթե միակարծիք էին, որ հասարակությունում գոյություն ունեն ծայրահեղական ազգայնական տարբեր կազմակերպություններ: 84%-ը հայտարարել է, որ նման կազմակերպությունների հանդեպ խիստ բացասական վերաբերմունք ունի և որ նման կազմակերպությունների գործունեությունը պետք է հետապնդվի քրեորեն, 3%-ն անտարբեր է նման կազմակերպություններին, 8%-ը կարծում է, որ ժողովրդավարական հասարակությունում ամեն ոք ազատ է դավանելու իր տեսակետներին, 4%-ը դժվարացել է պատասխանել: Միևնույն ժամանակ, պետք է նշել այս հարցի պատասխանների վերլուծության դժվարությունների մասին. գոյություն ունեն հասարակությունում գերիշխող

¹ *Савва М.В.*, Новые диаспоры Краснодарского края (права, интересы, динамика интеграции и восприятие местным сообществом), Краснодар, 2006, с. 11-22.

մեծամասնության ծայրահեղական և էթնիկ փոքրամասնությունների նույնատիպ կազմակերպություններ: Հայտարարելով էթնիկ արմատականների հանդեպ իրենց բացասական վերաբերմունքի մասին՝ մարդիկ կարող էին նկատի ունենալ միայն մեծամասնության կազմակերպությունները կամ էլ միայն էթնիկ փոքրամասնությունների կազմակերպությունները (վերջինները հանրային գիտակցության մեջ սերտորեն կապված են ահաբեկչության հետ):

Հետաքրքրական է, որ Կրասնոդարի բուհերի ուսանողներն այնքան էլ ծայրահեղ չեն իրենց դատողություններում՝ քաղաքացիների ընդհանուր զանգվածի համեմատ: Նրանք ավելի քիչ են կարեկցում, զգալիորեն քիչ է «բացասական վերաբերմունքը» և ավելի մեծ է անտարբերությունը ներգաղթյալների հանդեպ: Ընդհանուր առմամբ, ուսանողների համար այս հիմնախնդիրն այնքան էլ կարևոր չէ:

Հեղինակի կարծիքով, միջէթնիկ հարաբերությունների զարգացման միտումներն ավելի հեշտ է պարզել երիտասարդների կողմնորոշումները հետազոտելով: 2008թ. Հարավային տարածաշրջանային ռեսուրսային կենտրոնի պատվերով անցկացվեց քանակական հետազոտություն՝ «Միջէթնիկ հարաբերությունները Կրասնոդարի երկրամասի երիտասարդների շրջանում» թեմայի շուրջ հարցման ձևով: Արդյունքում արվեց հետևյալ եզրահանգումը. «Միջէթնիկ հարաբերությունները երիտասարդների շրջանում ներկա պահին ընկալվում են որպես կայուն: Միևնույն ժամանակ, երկու «ցավոտ կետ» կա. ոչ միանշանակ վերաբերմունքը օտարերկրյա աշխատողների նկատմամբ և բիզնես-միզբանտների խմբի ի հայտ գալը: Վերջին խմբի ինտեգրման դժվարություններին հավելվում է առճակատումը սոցիալական բնութագրիչների, «հարուստներ-աղքատներ» առանցքի շուրջ... Ընդ որում, հաճախ «նոր միզբանտները» չեն փորձում

ինտեգրվել տեղի հանրություն՝ պարփակվելով, մի կողմից, իրենց էթնիկության շրջանակում, մյուս կողմից՝ «միջին դասին» պատկանելության շրջանակում, որը բնակչության հիմնական զանգվածին զգալիորեն գերազանցում է իր նյութական հնարավորություններով: Սա զայրացնում է բնակչությանը, հատկապես գյուղական վայրերում, որտեղ ամեն մարդ «աչքի առջև» է: Դա ընկալվում է որպես մեծամտություն, հարգանքի բացակայություն «տեղացիների» հանդեպ և ստեղծում է սոցիալական լարվածության բարձր մակարդակ¹:

Ի՞նչ են մտածում Կրասնոդարում իրենց վիճակի մասին իրենք՝ ներգաղթյալները: Բնութագրելով առայսօր չլուծված մնացած հիմնախնդիրները՝ հարցման ենթարկված ներգաղթյալների զգալի մասը հայտարարել է, որ նման հիմնախնդիրներ չկան (43%): Միևնույն ժամանակ, 19%-ը կարծում է, որ հիմնախնդիր են մնում բնակապայմանները, 17%-ը՝ գրանցումը, 10%-ը՝ աշխատանքը: Կարելի է ենթադրել, որ ներգաղթյալների «խնդիրներ չունենալու» ներկայիս բարձր մակարդակը կապված է այն բանի հետ, թե ինչն է խնդիր համարվում: Գալով նոր բնակության վայր՝ Կրասնոդարում ներգաղթյալները բախվում են շատ մեծ դժվարությունների: Մի քանի տարի անց միայն մի շարք հիմնախնդիրների լուծումը կարող է ընկալվել որպես նորմալ (ընդունելի) կենսամակարդակի վերականգնում:

¹ Результаты социологического исследования «Межэтнические отношения в молодежной среде Краснодарского края»//Конфликтный потенциал молодежи Краснодарского края. Методики снижения. Краснодар, Южный региональный ресурсный центр, 2008, с. 79.

Կրասնոդարում ներգաղթյալների եկամուտների աղբյուրների կառուցվածքը սկզբունքորեն չի տարբերվում տեղի հնաբնականների եկամուտների կառուցվածքից. 51%-ի համար ընտանիքի եկամուտների հիմնական աղբյուրը վարձու աշխատանքն է, 11%-ի համար՝ մասնավոր ձեռներեցությունը (ունի սեփական ֆիրմա, սրճարան, կրպակ, արհեստանոց և այլն), 23%-ի համար՝ ինքնուրույն աշխատանքը (ապրանքի ատևտուր, բնակարանների նորոգում և այլն), 11%-ի համար՝ թոշակը կամ նպաստները, 4%-ի համար՝ հարազատների օգնությունը, 4%-ի համար՝ անձնական օժանդակ տնտեսությունը:

Ներգաղթյալների համար կարևոր բնութագիր է սոցիալական ծառայությունների հասանելիությունը: Երեխա ունեցող և բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող ներգաղթյալները (38,7%) հայտարարել են դրան խոչընդոտող հանգամանքների առկայության մասին: Բարձրագույն կրթություն ստանալուն խանգարող գլխավոր խնդիրը հարցման ենթարկվածների մեծամասնությունը համարել է նյութական դժվարությունները՝ 91,7%: Միայն 8,3%-ն է նշել այնպիսի խոչընդոտներ, ինչպիսին է անձնագիր, գրանցում, քաղաքացիություն չունենալը:

Բժշկական օգնություն ստանալու հարցում դժվարությունների է հանդիպել ներգաղթյալների 13%-ը, 55%-ը նման դժվարություն չի ունեցել, 32%-ի համար դա ակտուալ չէ:

Թոշակը ձևակերպելու դժվարություն է ունեցել հարցվածների 10%-ը, 25%-ը նման դժվարություն չի ունեցել, 65%-ի համար դա ակտուալ չէ: Դժվարությունների մասին նշողներն առանձնացրել են հետևյալ խնդիրները.

1. դժվարություններ փաստաթղթերի վերականգնման հետ կապված - 70%,
2. ամեն ինչ շատ խճճված է - 10%,
3. գրանցման բացակայությունը - 10%,
4. քաղաքացիության բացակայությունը - 10%:

Մեր հետազոտության ընթացքում հարցման ենթարկված ներգաղթյալների 21%-ը հայտարարել է, որ իր նկատմամբ ազգային խտրականություն է զգացել, 79%-ը նման խտրականություն չի զգացել:

Որպես Կրասնոդարում ներգաղթյալների ինտեգրման ներկա մակարդակի արտացոլում կարելի է դիտարկել «Եթե ստիպված լինեիք վերստին սկսել, նորից այստե՞ղ կգայիք» հարցի պատասխանների դասակարգումը:

Աղյուսակ 11.2

Վերստին սկսելու դեպքում Կրասնոդար տեղափոխվելու հնարավորության գնահատականը (հարցվածները %-ով)

№№	Պատասխանների տարբերակները	%
1.	Կրկին այստեղ կտեղափոխվեի	67,0
2.	Ոչ, կմնայի նախկին բնակության վայրում	25,0
3.	Այլ երկիր կգնայի	1,0
4.	Դժվարանում եմ պատասխանել	7,0

Այսպիսով, հարցվածների մեծամասնությունը գոհ է Կրասնոդարում իր վիճակից կամ այդ վիճակն ավելի լավ է համարում այլ վայրեր ներգաղթածների վիճակի

համեմատությամբ: Ընդ որում՝ յուրաքանչյուր չորրորդ ներգաղթյալ սխալ է համարում նախկին բնակության վայրից տեղափոխվելը:

Կրասնոդարում անցկացված հետազոտության գլխավոր եզրահանգումներից մեկն այն է, որ պատկերացումները միգրացիայի մասին խիստ առասպելականացված են և էապես «հետ են մնացել» իրական վիճակից:

Հանրային կարծիքում առկա պատկերացումները երկրամասի սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակի վրա միգրացիայի ազդեցության մասին կարելի է համարել գլխավոր տարածաշրջանային առասպելներից մեկը: «Ռուսաստանի հարավը՝ ազգային համաձայնության և խաղաղության տարածաշրջան» նախագծի շրջանակներում Մ.Վ. Սավայի մեթոդիկայով անցկացված հետազոտության (2001թ.) ընթացքում Կրասնոդարում թիրախային խմբերի մասնակիցները հայտարարում էին. «Երկրամասում խիստ շատ են փախստականները, որոնք, բնականաբար, ավելացնում են տեղի բնակչության խնդիրները: Տեղացիներն ապրում են էն հին տներում, իսկ ահա փախստականները, որպես կանոն, որոնք այնտեղից մորեմերկ են եկել, մեկ-մեկուկես տարի հետո, այնպես է ստացվում, որ արդեն նորմալ տներում են ապրում», «Հինգ տարի հետո նրանք այստեղ ամեն ինչ կգրավեն...»¹: Ադիգեայի Հանրապետության, Կրասնոդարի և

¹ Отчет о проведении фокус-группового исследования «Диагностика состояния межнациональных отношений в городе Краснодаре»//Межнациональные отношения и становление гражданского общества на Юге России. Южный региональный ресурсный центр, Краснодар, 2002, с. 44.ресурсный центр, 2008, с. 79.

Ստավրոպոլի երկրամասերի, Ռոստովի մարզի բնակչության՝ նույն նախագծի շրջանակներում անցկացված զանգվածային սոցիոլոգիական հարցման ընթացքում հանրային կարծիքում գրանցվել է միգրացիոն և էթնիկ թեմատիկաների բավական սերտ փոխկապվածություն. պատասխանելով ազգամիջյան հարաբերությունների խնդիրների լուծման միջոցների մասին հարցին՝ հարցման ենթարկվածների 15,2%-ը (հաճախությամբ չորրորդ ընտրությունը) նման միջոց է համարել միգրացիայի սահմանափակումը¹: Կրասնոդարի երկրամասում հարցման ենթարկվածների մեջ այդ տոկոսն ավելի բարձր է եղել՝ 20,6%²:

2004թ. անցկացված «Միգրացիան Հարավային դաշնային օկրուգում» փորձագիտական հարցման ընթացքում (հարցվել է 308 փորձագետ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից, ներգաղթյալների ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներից, գիտնականներից, այդ թվում՝ 23 փորձագետ Կրասնոդարի երկրամասից) հաստատվել է, որ միգրացիան դեռ շարունակում է ընկալվել որպես սուր սոցիալական խնդիր, որն անդրադառնում է տարածաշրջանի բնակչության զգալի մասի վրա:

Այսպիսով, կարելի է փաստել երկրամասի բնակչության զանգվածային գիտակցության մեջ այնպիսի կայուն պատկերացումների առկայությունը, ինչպիսին են միգրացիայի վտանգա-

¹ Результаты социологического исследования состояния межэтнических отношений в регионе//Межнациональные отношения и становление гражданского общества на Юге России. ЮРПИ, Краснодар, 2002, с. 23.

² Նույն տեղում, с. 24.

վորությունը և միգրացիայի մեծ դերը բնակչության էթնիկական կազմի փոփոխության հարցում:

Այս երևույթի էությունը հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել միգրացիայի վերաբերյալ կարծրատիպերի ձևավորման մեխանիզմները: Դրանցից կարևորագույնը ԶԼՄ-ում միգրացիայի թեմայով նյութերի ներկայացումն է: Մենք, սկսած 1989թ., այս թեմատիկայով իրականացրել ենք Կուրանի թերթերի հրատարակումների վերլուծություն, որի որոշ հետևություններ ներկայացված են ստորև:

Միգրացիայի թեման 1989-ից ամենահրատապներից է երկրամասի տպագիր մամուլի համար: Ընդ որում՝ շեշտը դրվում է այլէթնիկ (ոչ սլավոնական) միգրացիայի, առաջին հերթին՝ Անդրկովկասի պետություններից ներգաղթյալների վրա: Տպագիր նյութերի տազնաապայնության բարձր մակարդակի մասին վկայում են դրանց վերնագրերը. «Անհրաժեշտ են անհապաղ և գործուն միջոցներ՝ միջէթնիկ հավասարակշռությունը պահպանելու համար»¹, «Նախարարը գնաց, իսկ թուրքերը մնացի՞ն... առայժմ»², «Հիմնավորվել են քրդերը Ելենովկայում...»³, «Մեսիսեթական հիմնախնդրի Տրոյական ձին»⁴, «Տրոյական ձին և ո՞վ է նրան ներս թողնում»⁵, «Չուկն ավելի խոր, ներգաղթյալն՝ ավելի լավ տեղ է

¹ Необходимы безотлагательные и действенные меры, чтобы сохранить меж-этнический баланс//Кубань сегодня, 18.08.2000.

² Министр уехал, а турки остались... пока?//Кубанские новости, 21.03.2001.

³ Застолбились курды в Еленовке//Кубань сегодня, 28.10.2000.

⁴ «Троянский конь» месхетинской проблемы//Кубань сегодня, 1.02.2002.

⁵ Троянский конь и кто его впускает//Вольная Кубань, 13.03.2002.

փնտրում»¹, «Թանկարժեք հյուրեր»², «Կուրանցիները չպետք է տառապեն ներգաղթյալների անվերահսկելի հոսքից»³, «Պատնեշներ միգրացիայի համար»⁴: Այս ֆոնին անհրաժեշտ է նշել, որ ի հայտ եկան առաջին հրապարակումները լուրջ և մինչ այդ գրեթե չշոշափված տնտեսական միգրացիայի մասին⁵:

Շատ փորձագետների կարծիքով՝ հարկադրյալ տեղափոխվածների ինտեգրման հիմնախնդիրը տարածաշրջանի սոցիալ-քաղաքական անվտանգության ամենակարևոր տարրերից մեկն է⁶: Իսկապես, վերջին տարիներին երկրամասում բնակություն հաստատած մարդկանց զգալի մասը Կուրանը համարում է իր մշտական բնակավայրը: Այս մարդկանց հանդեպ միգրացիայի կրճատմանն ուղղված միջոցառումներն այլևս գործել չեն կարող, և իսելամիտ կլիներ աջակցել նրանց ինտեգրմանը տեղի հանրությանը՝ կոնֆլիկտների ծագման ռիսկը նվազեցնելու նպատակով: Միևնույն ժամանակ, Կրասնոդարի երկրամասի թերթերում սույն խնդիրը փաստորեն չի լուսաբանվում: Միակ հրապարակումը՝ նվիրված ներգաղթյալների ինտեգրմանը, ռեպորտաժն է Կրասնոդարում, Հարավային դաշնային օկրուգում նախագահի ներկայացուցչի աշխատակազմի գլխավոր

¹ Рыба ищет, где глубже, а мигрант – где лучше//Краснодар, №33. 2000.

² Абрамцева В., «Дорогие» гости//Вольная Кубань, 03.10.2002.

³ Харченко И., Кубанцы не должны страдать от неконтролируемого наплыва мигрантов//Кубанские новости, 18.04.2001.

⁴ Барьеры для миграции//Краснодарские известия, 08.12.2000.

⁵ Экономическая миграция//Вольная Кубань, 17.05.2001.

⁶ Жириков А.А., Этнические факторы политической стабильности, М., 1995; Крицкий Е., Савва М., Краснодарский край: модель этнологического мониторинга, М., 1998.

դաշնային տեսչի մոտ անցկացված խորհրդակցությունից¹: Արժեքնդճեղ, որ, չնայած հրապարակման վերնագրում կիրառված «ադապտացում» տերմինին, տեղեկատվությունը հանգեցվում է միգրացիայի կրճատմանն ուղղված միջոցառումների քննարկմանը: Գլխավոր դաշնային տեսուչը դաշնային իշխանության ներկայացուցիչն է, ուստի կարելի է փաստել այն մասին, որ երկրամասի մամուլում վերջին տարիներին չկան այնպիսի հրապարակումներ, որոնք նախաձեռնված լինեն երկրամասի իշխանության կողմից և նվիրված լինեն տեղի հանրությանը ներգաղթյալների ադապտացման և ինտեգրման հարցերին: Այդօրինակ հրապարակումներ եղել են միայն այն ԶԼՄ-ում, որոնք չեն ֆինանսավորվում երկրամասային բյուջեից, մասնավորապես՝ Կրասնոդարի «Հարավային տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն» տարածաշրջանային հասարակական կազմակերպության «Новая реальность»² («Նոր իրականություն») թերթում և «ՄԿ-Կուրան-Նովոռոսիյսկ-Սոչի» թերթի տարածաշրջանային հավելվածում, կամ նվիրված են եղել ռուսների հայրենադարձության «Հայրենակիցներ» («Соотечественники») դաշնային ծրագրի քննարկմանը³: Հարկավոր է նշել, որ հինգ տարի առաջ Ռուսաստանում Դաշնության սուբյեկտների ղեկավարների ընտրության եղանակը փոխելուց հետո (ընտրության համաժողովը-

¹ Миграция: адаптация и экономическая выгода//Кубань сегодня, 20.02.2002.

² Савва М.В., Без интеграции нет гарантий безопасности//Новая реальность. №7. Июль 2002; Резолюция «круглого стола» общественных организаций Краснодарского края, занимающихся решением проблемы интеграции вынужденных мигрантов//Новая реальность, №7. Июль 2002.

³ Семья в зеркале государственных проблем//МК-Кубань-Новороссийск-Сочи, 27 июня-4 июля 2002.

դական քվեարկությունից անցում կատարվեց սուբյեկտի օրենսդրական մարմնի ընտրության Ռուսաստանի նախագահի ներկայացմամբ) նահանգապետերի հռետորաբանության մեջ էապես նվազեց տարածաշրջանի ընտրողների կարծրատիպերին հետևելու կարիքը: Հետևաբար, էապես նվազեց բարձրաստիճան պաշտոնյաների՝ հականերգադրային ուղղվածություն ունեցող ելույթների, ինչպես նաև իշխանությունների կողմից վերահսկվող ՋԼՄ նմանատիպ հրապարակումների թիվը:

Ներտարածաշրջանային միգրացիայի հիմնախնդրի նկատմամբ անուշադրությունը, որն արտահայտվում է այս թեմայով հրապարակումների սակավաթվությամբ, ի ցույց է դնում Կուբանի իշխանությունների և մամուլի դաշինքի այնպիսի առանձնահատկությունը, ինչպիսին է կոնսերվատիվությունն իրավիճակը գնահատելիս: Նոր ծագած հիմնախնդիրները բավական երկար ժամանակ անտեսվում են և չեն դառնում տեղեկատվական ազդեցության առարկա: Միևնույն ժամանակ, երկրամասի իշխանության գործողությունների՝ մի քանի տարի առաջ ձևավորված ռազմավարությունն ուժի մեջ է մնում նույնիսկ այն ստեղծած իրական պայմանների փոփոխությունից հետո: XXդ. 90-ականների առաջին կեսին Կուբանում միգրացիայի սահմանափակմանն ուղղված միջոցներն իրենց դերը խաղացին և ներկայումս իրենց նախկին տեսքով սպառվել են: Մի շարք գործոնների ազդեցության արդյունքում (մասնավորապես՝ տեղի հանրության և տեղի իշխանությունների ներկայացուցիչների զգուշավոր վերաբերմունքի, մամուլում ոչ օբյեկտիվ հրապարակումների) էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ներգաղթյալների խմբերում կարող է իջնել տեղի հանրությանն ինտեգրվելու պատրաստակամության մակարդակը: Դա հանգեցնում է մի

երևույթի, որը հաճախ անվանում են խմբի պատիճավորում: «Օտար» կամ նույնիսկ թշնամական միջավայրի պայմաններում խումբը պարփակվում է իր մեջ, դառնում ամուր թաղանթ ունեցող պատիճի նման, որը կտրված է շրջապատից: Փոխհարաբերությունները տեղի հնաբնակների հետ հասցվում են նվազագույնի, այդ հարաբերություններում գերիշխում են զգուշավորությունն ու թշնամական գործողությունների սպասումը: Մեր տարածաշրջանում պատիճավորման առավել տխուր և հատկանշական օրինակներից մեկը Կրասնոդարի երկրամասի թուրք մեսխեթցիներն են (2004-2007թթ. Կուբանի թուրք մեսխեթցիների զգալի մասը հատուկ ծրագրով տեղափոխվեց ԱՄՆ): Նման դեպքերը հատուկ ուշադրություն են պահանջում: «Պատիճը» պատռելը միշտ համապատասխանում է ինչպես ներգաղթյալների, այնպես էլ տեղի բնակչության շահերին՝ բարձրացնելով թե՛ մեկի, թե՛ մյուսի անվտանգությունը: Կրասնոդարի երկրամասում սոցիալական նախագծերի իրականացման գործունեությունը, մասնավորապես, Հարավային տարածաշրջանային ռեսուրսային կենտրոնի կողմից, վկայում է տեղի հանրությանը թուրք մեսխեթցիների խմբերի ադապտացման ու դրան հաջորդող ինտեգրման ուղղությամբ առաջընթացի հնարավորության մասին¹: Սոցիալական նախագծերի իրագործումն այդ հետազոտությունների տրամաբանական շարունակությունն է և արդի փուլում, ինտեգրման պատրաստի սոցիալական տեխնոլոգիաների բացակայության պայմաններում, հաշվի առնելով տեղի հանրությունների

¹ *Савва М.В.*, Интеграция вынужденных переселенцев в местное сообщество на юге России//Интеграция беженцев и вынужденных переселенцев на юге России: первые итоги. Краснодар, 2001, с. 5-10.

առանձնահատկությունը, գործողությունների միակ արդարացված ռազմավարությունն է:

Տպագիր լրատվամիջոցների հրապարակումների և երկրամասի իշխանության ներկայացուցիչների հայտարարությունների վերլուծությունը հաստատում է, որ Կուբանի քաղաքական էլիտայի որոշ մասը դեռ հին պատկերացումներ ունի միգրացիայի մասին, որոնք ծագել են 15-20 տարի առաջ, ԽՍՀՄ փլուզման և հենց Ռուսաստանի ներսում հասարակական անհամաձայնության պայմաններում, միգրացիոն ալիքի գագաթնակետին: Միգրացիայի կործանարարության գաղափարը, որն օրինաչափորեն ծագել էր այդ դժվարին ժամանակաշրջանում, հասցրեց դառնալ կարծրատիպ՝ կայուն սխեմայացված պատկերացում: Միննույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ էթնիկությունն ավելի ու ավելի հազվադեպ է իշխանության ներկայացուցիչների կողմից օգտագործվում որպես քաղաքական նպատակներին հասնելու գործիք:

Ինչպես վերն ասվեց, Կրասնոդարի երկրամասի հնաբնակների և ԶԼՄ զգալի մասի հիմնական մոտեցումները ներգաղթյալների հանդեպ ձևավորվել են հայերի՝ որպես Կուբանի թվաքանակով գլխավոր սփյուռքյան խմբի, մասին պատկերացումների հիման վրա: Ինչպե՞ս են իրենք՝ Կրասնոդարի երկրամասի հայերը գնահատում իրենց խմբի սոցիալական ինքնազգացողությունը, տեղի հանրությունում ինտեգրման մակարդակը, ի՞նչ խնդիրներ են լուծում:

Տեղի սոցիալական միջավայրում հայ բնակչության ինտեգրման մակարդակը բավական բարձր է. «Ինտեգրման աստիճանով հայերը զբաղեցնում են երկրորդ տեղն ուկրաինացիներից հետո,- ասում է Մհեր Սիմոնյանը (պատմական գիտությունների

թեկնածու, Կրասնոդարում ՀՀ հյուպատոսի հասարակական օգնական)»¹: Իսկապես, հայերի զգալի մասը երկրամասում ապրում է շատ երկար ժամանակ, իսկ այնպիսի խմբեր, ինչպիսիք են չերքեզահայերն ու համշենահայերը, այստեղ հաստատվել են ավելի վաղ (չերքեզահայերը), քան ռուսները կամ նրանց հետ միաժամանակ (համշենահայերը): Միևնույն ժամանակ, վերջին տարիների հայ ներգաղթյալները (հայ բնակչության մյուս խմբերից տարբերելու համար «երևանյան հայեր» կոչվածները), հատկապես Հայաստանի գյուղական վայրերից եկածները մինչև հիմա էլ տեղի հասարակությանն ինտեգրվելու դժվարություններ են կրում: Կրասնոդարի երկրամասի հայերն ընդհանուր առմամբ հակված են էթնիկ ինքնությունը պահպանելուն՝ առանց օգտագործելու իրենց սոցիալական մոբիլության համար խոչընդոտներ ստեղծող մեթոդները: Այսպես, միայն 1,5 հազ. կուբանցի հայեր դպրոցում հայերենը սովորում են որպես մայրենի լեզու (Սոչի քաղաքում)²: Միևնույն ժամանակ, օգտագործվում են ինքնությունը պահելու տարբեր եղանակներ (շփումներ հայկական եկեղեցիներում ժամերգությունների ժամանակ, ազգագրական կոլեկտիվների աշխատանքի կազմակերպում, հայերենի արտադասարանային ուսուցանում և այլն), այդ թվում և այնպիսի ցուցադրական եղանակ, ինչպիսին է պատմական ակումբի նիստը, որը վարում է Երևանից հրավիրված դասախոսը. «Ամիսը երկու անգամ ՌՀՄ Պաշկովսկի գյուղի բաժանմունքում հավաքվում է պատմական

¹ Армяне на Кубани: мигранты или местное население?//САР, №2 (141), 28.02.2007.

² В Сочи прошла олимпиада по армянскому языку//САР, №2 (141), 28.02.2007, с. 7.

ակումբը: Պարապմունքները վարում է ԵՊՀ դոցենտ Ա.Եղիազարյանը¹: Բացատրելով մայր էթնոսի հետ սփյուռքի փոխգործակցության շարժառիթները՝ Մ.Ա. Աստվածատուրովան և Վ.Յու. Սավելևը գրում են. «Ակնհայտ է, որ յուրաքանչյուր սփյուռք իր շարժառիթներն ունի, որոնք նրանց մղում են շփվել մայր էթնոսի հետ: Ընդհանուր են թվում «արյան կանչը», նույնիսկ մի փոքր ժամանակով հարազատ միջավայրին ձուլվելու ցանկությունը, «յուրայինների մեջ յուրային» լինելու զգացողությունը: Սրանում է, հավանաբար, արտահայտվում իռացիոնալ սկիզբը, որը տարբեր չափով բնորոշ է յուրաքանչյուր էթնիկ խմբի և նրա անդամներին: Մինևույն ժամանակ, գոյություն ունեն գործնական պատճառներ, որոնք հայրենակցական միություններին դրդում են տնտեսական, սոցիալական բնույթ ունեցող շփումներ հաստատել ՌԴ ներսում առկա համապատասխան սուբյեկտների կամ արտասահմանյան երկրների հետ»²:

Հատուկ դիտարկում է պահանջում «հայկական համայնք» բազմանշանակ հասկացությունը: Այս տերմինը, ինչպես վկայում են փորձագիտական գնահատականները, կիրառվում է մի քանի նշանակությամբ. տարածքի հայկական սփյուռքն ընդհանրապես; էթնիկ հայերի այն խումբը, որոնք անձամբ ճանաչում են միմյանց և մասնակցում են համատեղ գործունեության; էթնիկ հայերի խումբ, որն ապրում է նույն բնակավայրում, բայց բոլոր դեպքերում

¹ *Гюльназарян М.*, Чувство Родины – в нем величие нашего народа//САР, №2 (141), 28.02.2007, с. 4.

² *Аствацатурова М.А., Савельев В.Ю.*, Диаспоры Ставропольского края в современных этнополитических процессах. Ростов-на-Дону, Пятигорск, 2000, с. 158.

չէ, որ նրա անդամները ծանոթ են մեկմեկու: Մփյուռքի ներկայացուցիչները սովորաբար «հայկական համայնք» տերմինը (սկսել է ակտիվորեն կիրառվել Լեռնային Ղարաբաղում պատերազմն սկսվելուց հետո միայն) կիրառում են առաջին՝ ավելի լայն նշանակությամբ: Հեղինակի կարծիքով՝ համայնքի հասկացությունն ավելի կոնկրետ է և ենթադրում է մարդկանց ընդհանրություն, որոնք պարբերաբար միավորվում են համատեղ գործունեության համար: Էթնիկ համայնքի առնչությամբ անհրաժեշտ է առանձնացնել նաև ևս մեկ կարևոր հատկանիշ՝ էթնիկ ինքնագիտակցությունը: Երկրամասում ապրող՝ հայկական ազգանուններ ունեցող մարդկանց բավական մեծ տոկոսը հայկական ինքնագիտակցություն չունի և սփյուռքին հատուկ կենսակերպ չի վարում: Այսպիսով, հայկական համայնք ասելով մենք կհասկանանք մարդկանց այն ընդհանրությունը, որն ապրում է ընդհանուր տարածքում, ունի հայկական ինքնագիտակցություն և պարբերաբար միավորվում է համատեղ գործունեության համար:

Էթնիկ համայնքը ենթադրում է կազմակերպական միջուկի առկայություն: Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների համար դեպքերի մեծամասնությունում նման միջուկ է Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) տեղի բաժանմունքը կամ մեկ այլ հայկական ոչ առևտրային կազմակերպություն: ՌՀՄ-ն Կրասնոդարի երկրամասում 43 բաժանմունք ունի, ներառյալ կազմակերպության քաղաքային և օկրուգային բաժանմունքները Կրասնոդարում (4 օկրուգ) և քաղաքային ու շրջանային բաժանմունքները Մոչիում (4 շրջան): ՌՀՄ բաժանմունքների կայացման գործընթացը Կրասնոդարի երկրամասում սկսվել է

2000 թվականից: Մինչ այդ երկրամասի տարածքում գործում էր մոտ 20 ոչ առևտրային հայկական կազմակերպություն: Հետագայում դրանց մեծ մասը մտավ ՌՀՄ կազմի մեջ, ընդ որում՝ դրանց մի մասը գործում է նախկին անվամբ, բայց միևնույն ժամանակ ունի Ռուսաստանի հայերի միության բաժանմունքի կարգավիճակ (կազմակերպություններ Անապայում, Նովոռոսիյսկում): Առանձին հայկական կազմակերպություններ կազմակերպական առումով չեն մտել ՌՀՄ կազմի մեջ, սակայն փոխգործակցում են նրա երկրամասային բաժանմունքի հետ (օրինակ՝ Կուբանի Սլավյանսկ քաղաքում): ՌՀՄ անդամներ են սփյուռքի ամեննին էլ ոչ բոլոր ներկայացուցիչները:

ՌՀՄ քաղաքային կամ շրջանային բաժանմունքի ակտիվը կազմում են բաժանմունքի խորհրդի անդամները (10-20 մարդ): Խորհուրդների կազմում ընդգրկվում են համայնքի սոցիալապես ակտիվ ներկայացուցիչները, որոնց թվում, որպես կանոն, կան տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների պատգամավորներ, ձեռներեցներ: Հենց այդ մարդիկ են կազմում հայկական համայնքի կազմակերպական կորիզը: Կրասնոդարի երկրամասի Օրենսդիր ժողովի հայ պատգամավորները (ԿԵՕԺ 70 անդամից 3-ը) պաշտոնապես չեն մտնում ՌՀՄ որևէ բաժանմունքի մեջ: Միևնույն ժամանակ, նրանք ակտիվորեն համագործակցում են հայկական համայնքների հետ իրենց ընտրատարածքներում (բնակչության վայրերում):

ՌՀՄ երկրամասային կազմակերպությունը և նրա ստորաբաժանումներն ինքնակառավարման մարմիններում գործունեություն են իրականացնում հիմնականում երկու ուղղությամբ.

1. Հայերենի ուսուցման կազմակերպում տարբեր ձևերով (ֆակուլտատիվներ գործող դպրոցներում, եկեղեցիներին կից հայկական դպրոցներ, մասնավոր դասեր):
2. Մշակույթի պահպանում ստեղծագործական կուլեկտիվներին աջակցելու միջոցով (թատերական ներկայացումներ հայերենով, ազգային պարեր և այլն):

Հայկական համայնքի անդամներին միավորող գլխավոր իրադարձությունը Յեղասպանության զոհերի հիշատակի օրն է՝ ապրիլի 24-ը: Այդ օրն անցկացվող միջոցառումներին մասնակցում են սփյուռքի բազմաթիվ ներկայացուցիչներ: Համայնքի անդամների շփման նշանակալի վայր են հանդիսանում հայ կատարողների համերգները:

ՌՀՄ երկրամասային բաժանմունքը հրատարակում է երկրամասային հասարակական-քաղաքական ամենամյա «Ռուսաստանի միության հայեր» (ՌՀՄ) թերթը՝ 4000 օրինակ տպաքանակով, աջակցում է «Կուբանի «Մաշտոց» գիտատեղեկատվական հայկական *mashtots.ru* պորտալին: Նկատի ունենալով իշխանության մարմիններից տնտեսական կախվածության բացակայությունը՝ Կրասնոդարի երկրամասի հայկական թերթը կարող է վստահաբար պատկանել մամուլի այն մասին, որը բավական ազատ է խմբագրական քաղաքականության մեջ և հաշվի է առնում միայն Ռուսաստանի հայերի միության և նրա երկրամասային բաժանմունքի ղեկավարության դիրքորոշումը: Ասվածի հավաստումն է, օրինակ, մի շարք «հայկական կազմակերպությունների և օն-լայն հանրության» հայտարարության հրապարակումը «Հայկական հասարակայնությունը հորդորում է Ռուսաստանի հայերին սթափ նայել ճշմարտության

աչքերին» վերնագրով, որը չափազանց կոշտ երանգավորում ունի. «...ցավոք, այս երկրում դուք դարձել եք օտար և անցանկալի տարր: Տարբեր ոլորտներում բարգավաճման առանձին օրինակները ոչ ոքի չպետք է մոլորության մեջ գցեն»¹:

Կրասնոդարում 1996-ից հրատարակվում է նաև «Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթը»: Հիմնադիրն է էթնոքաղաքագիտական հետազոտությունների կենտրոնը, տպաքանակը 17.000 օրինակ է: Թերթը նաև սեփական կայք ունի:

Այսպիսով, Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների գործունեության տեղեկատվական աջակցությունը ներկայումս բավականաչափ ապահովված է: Տպագիր պարբերականները և հատուկ կայքերը տեղեկատվական միջավայր են ապահովում այնպիսի մեծ թիրախային խմբի օպերատիվ և զանգվածային հաղորդակցության համար, ինչպիսին են Կուբանի հայկական համայնքների անդամները, ապահովում են նաև նրանց փոխգործակցությունն ավելի լայն լսարանի հետ երկրամասի սահմաններից դուրս:

Ինչպես ցույց է տալիս իրականությունը, այլ սոցիոմշակութային միջավայրին ինտեգրումն անխուսափելիորեն ենթադրում է էթնիկ փոքրամասնության մի ինչ-որ մասի ձուլում: Չուլմանը Կուբանում ապրող որոշ հայ ինտելեկտուալների արձագանքը լինում է հուզական առումով խիստ լարված. «Մի թե մարդկության համար այդքան գրավիչ է անցեղ ու անտոհմ կոսմոպոլիտների

¹ Армянская общественность призывает армян России трезво взглянуть правде в глаза//САР, №7 (133), с. 3.

միասեռ զանգվածի վերածվելու հեռանկարը: Ո՞վ, բացի մեզնից՝ ծնողներից, պետք է զգուշորեն պահպանի և երեխաներին փոխանցի լավագույնն իր ժողովրդի ավանդույթներում և մշակույթում»: Ինչո՞վ է այդ դեպքում ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը տարբերվում մեր՝ որպես ազգի, բարոյական, աստիճանական, ընդ որում՝ կամավոր վերացումից եղբայրական երկրների բարենպաստ և բարեկամական միջավայրում: Արտասահմանում հայտնված հայերի արդեն երրորդ սերունդը չի խոսում, չի հասկանում իր մայրենի լեզուն»¹: Սոցիալական մոբիլության և հայկական ինքնության միջև հակասությունների ծագման պարագայում (իսկ նման դեպքերը ներկայումս հազվադեպ չեն) մարդն ինքնուրույն ընտրություն է կատարում՝ պայմանավորված մի քանի գործոնով:

Միջլեթնիկ հարաբերությունների վիճակը Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների բարեկեցության կարևոր գործոն է: Հասկանալի է Կուրանում միջլեթնիկական հարաբերությունների ոլորտում գլխավոր ձեռքբերման ամրագրումը ՌՀՄ երկրամասային բաժանմունքի նախկին նախագահ (մինչև 2007թ. ապրիլ) Ն.Հովհաննիսյանի կողմից. «Գլխավորը, ինչը կարելի է ներկա պահին համարձակորեն ամրագրել. ազգամիջյան իրադրությունը Կուրանում կայուն է: Եվ դա, թերևս, երկրամասի վարչակազմի և Ռուսաստանի հայերի միության տարածաշրջանային բաժանմունքի աշխատանքի ամենամեծ և կարևոր

¹ *Маркарян В.*, Армянская диаспора Краснодарского края имеет многовековую историю//http://analitika.at.ua/news/varvara_markarjan_armjanskaja_diaspora_krasnodarskogo_kraja_imeet_mnogovekovuju_istoriju/2010-06-02-27472.

արդյունքն է այս ամբողջ տարիներին... Հարցին, թե ինչու է հարկավոր Ռուսաստանի հայերի միությունը Կրասնոդարի երկրամասում, կարելի է ամենայն պատասխանատվությամբ պատասխանել. առաջին հերթին՝ թույլ չտալու համար ազգամիջյան երկպառակության, նացիոնալիզմի և ֆաշիզմի զարգացումը»¹:

Կրասնոդարի երկրամասի հայերի ճնշող մեծամասնությունն ավանդական քրիստոնեություն է դավանում: Ինչպես նշում է Ն.Շահնազարյանը, մինչև այժմ հայկական եկեղեցական համայնքներ են գրանցված Կրասնոդարի երկրամասի ոչ ավելի, քան 10 քաղաքում: Կրասնոդարում, Նովոռոսիյսկում, Սոչիում և Ադլերում նոր եկեղեցիներ են կառուցվում²: Մինևույն ժամանակ, երկրամասի հայ բնակչության որոշ մասը պատկանում է ֆրանգների (հայ կաթոլիկների) ենթամշակութային ազգային դավանաբանական հանրությին: Կրասնոդարի երկրամասում ապրում են նաև հայալեզու հեմշիլներ՝ մոտավորապես 150 ընտանիք: Հեմշիլների համար հատկանշական է մի քանի ինքնության միաժամանակյա առկայությունը. մուսուլմանական, թուրքական (հավանաբար՝ կապված իսլամականի հետ) և սեփական՝ հեմշիլյան:

Սփյուռքում տեղի ունեցող և հետագա ուսումնասիրություն պահանջող հետաքրքիր գործընթաց է էթնիկ հայերի որոշ

¹ Владимир Путин готов встретиться с представителями всех российских партий для того, чтобы обсудить проблемы экстремизма//САР. №12 (138), 30.11.2006г., с. 1.

² Шахназарян Н., Армяне Краснодарского края. Краснодар. ЮРПИ, 2008, с. 6.

թվաքանակի անցումը բողոքականության. «Վիփանիա» եկեղեցին Կրասնոդարում գործում է ավելի քան 30 տարի: Արդեն 10 տարի այստեղ ամիսը երկու անգամ հայերեն ժամերգություններ են կատարվում»¹: Այս գործընթացը սկզբնավորվել է դեռ Հայաստանի տարածքում, դժվարին 1990-ականներին, հայ փախստականների միջավայրում: Այնուհետև, Կուբան ներգաղթելուց հետո հայ բողոքականները մտել են այստեղ արդեն գոյություն ունեցող բողոքական համայնքների մեջ և շարունակել միսիոներական գործունեությունը:

Ինչպիսի՞ն են Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների հեռանկարները; Հեղինակի կարծիքով՝ անհրաժեշտ է դիտարկել ինչպես Կուբանի մնացյալ բնակչության հետ հայկական համայնքների փոխգործակցության հեռանկարները, այնպես էլ հենց համայնքների դինամիկայի ուղղությունները: Հայերի գաղթը Կրասնոդարի երկրամաս շարունակվում է: Դրա քանակական բնութագրիչներն զգալիորեն ցածր են, քան մեկ տասնամյակ առաջ: Միևնույն ժամանակ, փոխվել են հայկական միգրացիայի որակական բնութագրիչները: Այսօր դրա զգալի մասը կազմում են գյուղական վայրերից և փոքր քաղաքներից եկածները, որոնք հաճախ վատ գիտեն ռուսերեն և ավանդապաշտական վարքագիծ ունեն: Կրասնոդարի երկրամասի քաղաքացիական հասարակության (այդ թվում հայկական համայնքների) և իշխանության համար կարևորագույն խնդիր է հնարավոր կոնֆլիկտների կանխումը:

¹ *Гюльназарян М.*, Армянские богослужения в «Вифании»//САР. №9 (135), 31.08.2006, с. 2.

Դրա համար անհրաժեշտ է հասարակությանը ցույց տալ միգրացիայի բոլոր կողմերի օբյեկտիվ պատկերը՝ դրական, բացասական, գլխավոր և երկրորդական: Մինչև ներկա պահը միգրացիան և տարբեր ազգային փոքրամասնությունների ներկայությունը Կուբանում, որպես սոցիալական երևույթ, դեռ գլխավորապես ներկայացվում են իբրև սպառնալիք: Իրականում միգրացիան, ինչպես և հասարակական կյանքի ցանկացած երևույթ, բազմակողմ է: Միգրացիան հիմնախնդրից զարգացման ռեսուրսի վերածելու համար հարկավոր է պատկերացում ունենալ բոլոր կողմերի մասին և պարզապես սովորել դրան վերաբերվել այն վստահությամբ, որ դրա ստեղծած հիմնախնդիրները՝ իրական թե առասպելական, կարող են լուծվել հանուն թե՛ միգրանտների, թե՛ նրանց ընդունող հանրության բարեկեցության: Այս նպատակին են ծառայում ոչ առևտրային հասարակական կազմակերպությունների կողմից երկրամասում իրականացվող սոցիալական նախագծերը՝ ուղղված ներգաղթյալների ադապտացման գործունեության մեխանիզմների մշակմանը:

Տեղի հասարակությանը ներգաղթյալների ինտեգրումը մինչև այս պահը չի դարձել Ռուսաստանի միգրացիոն քաղաքականության հիմնական ուղղությունը: Ինտեգրումն ընդհանուր միգրացիոն խնդիրների մի մասն է, և հենց այն մասը, որի ակտուալությունը էլիտայի որոշ խմբերի, օրինակ՝ ներկայիս Ռուսաստանի իշխանության ներկայացուցիչների համար ակնհայտ չէ: Ինտեգրման հրատապությունը պետք է բացատրել ոչ միայն տեղի հանրության ներկայացուցիչներին, այլ նաև պատգամավորներին և գործադիր իշխանության մարմինների աշխատակիցներին: Միգրացիան տարածաշրջանի սոցիալ-

քաղաքական կայունության կարևորագույն գործոն է: Այս գործոնն առանձնապես նշանակալի է դառնում բազմէթնիկ միջավայրում: Ինչպես ցույց է տալիս գիտական վերլուծությունը, Ռուսաստանի բազմամշակութային տարածաշրջանները, այդ թվում Կրասնոդարի երկրամասը, միջխմբային փոխգործակցության տարբեր աստիճանների հավասարակշռությունն ունեցող սոցիալական համակարգեր են: Այն տարածաշրջաններում, որոնք տարբեր էթնիկական մշակույթների գոյակցության երկարամյա պատմություն ունեն, ինտեգրման գործընթացները կգերակշռեն դիֆերենցիացիայի գործընթացների նկատմամբ: Այն տարածաշրջաններում, որոնցում բազմամշակութայնությունը տարբեր էթնիկական խմբերի համեմատաբար ոչ վաղ միգրացիայի արդյունք է, դիֆերենցիացիան ըստ էթնիկ և կրոնական հատկանիշների կգերակշռի ինտեգրման գործընթացների նկատմամբ¹: Այսպիսով, ներգաղթյալների արդյունավետ ինտեգրումը կարևոր է Կրասնոդարի երկրամասի համար ոչ միայն վերաբնակների իրավունքների և շահերի տեսակետից, այլ նաև տարածաշրջանի սոցիալ-քաղաքական կայունության պահպանման նպատակներով: Սակայն ինտեգրման անհրաժեշտությունը և կոնկրետ մեթոդները պետք է գիտակցված լինեն ինչպես ընդունող հանրության, այնպես էլ հայկական համայնքների կողմից:

Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքային կազմակերպությունների գործունեության գլխավոր ուղղությունը

¹ Этническая толерантность в поликультурных регионах России, М., 2002, с. 23.

Էթնիկ և դավանական ինքնության պահպանումն է, ինչի համար ամենատարբեր միջոցներ են կիրառվում: Վերջին տարիներին զգալիորեն բարդացել է այնպիսի կարևոր հարցերի լուծումը, ինչպիսին են համայնքների անդամների սոցիալական աջակցությունը և Հայաստանից ներգաղթյալների համար իրավական կարգավիճակի ձեռքբերմանն օժանդակելը: Սա պայմանավորված է նրանով, որ բոլոր ներգաղթյալները, որոնք կարող էին հաստատվել նոր վայրում, արդեն արել են դա: Չլեզգալացված են մնացել միայն այն ընտանիքները, որոնք փաստաթղթերի հետ կապված շատ լուրջ խնդիրներ ունեն: Այս առնչությամբ աճում է քաղաքացիական հասարակության կառույցների (իրավապաշտպան կազմակերպություններ, իշխանության մարմիններին կից հանրային խորհուրդներ և այլն) հետ հայկական համայնքների համագործակցության հրատապությունը: Հայկական համայնքների ավելի ակտիվ ներգրավումը ոչ էթնիկ հատկանիշով ստեղծված ոչ առևտրային կազմակերպությունների հետ համատեղ գործունեության մեջ այդ համայնքների արտաքին փոխգործակցությունների զարգացման ակնհայտ միտում է հանդիսանում:

Վերջերս Կրասնոդարի երկրամաս եկած հայերի հանդուրժողական ինտեգրմանը կարելի է աջակցել բացատրական գործունեությամբ (Հայաստանից եկածների վերաբերյալ հնաբնականների պատկերացումներում առկա բացասական կարծրատիպերի հաղթահարում կամ մեղմում, ներգաղթյալների իրավական տեղեկացվածության մակարդակի բարձրացում, Կրասնոդարի երկրամասի սոցիոմշակութային առանձնահատկության պարզաբանում, նոր եկածների կոնֆլիկտային վարքագծի

կանխում): Հայկական սփյուռքի տարասեռ մասերի հանդուրժողական ինտեգրումը հատկապես հրատապ է Կրասնոդարի երկրամասում միջէթնիկ հարաբերությունների բարձր կոնֆլիկտային պոտենցիալի հետ կապված, ինչը բացատրվում է հարաբերական դեպրիվացիայի տեսության համատեքստում. Ռուսաստանում կյանքի որակի աճի տեմպերը ներկայումս զգալիորեն հետ են մնում բարելավումների ակնկալիքների աճից: 2008թ. սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամը սրեց դեպրիվացիան և նպաստեց այն բանին, որ մարդատյացության դրսևորումների որոշ ավելացում տեղի ունենա:

Հայկական համայնքների զարգացման ակտուալ միտում է այդ համայնքների կազմակերպական հիմքը կազմող մարդկանց պրոֆեսիոնալացումը մի քանի ուղղություններով. ներգաղթյալների լեզվացում; օրինական իրավունքների և շահերի պաշտպանություն առաջին հերթին պետական և մունիցիպալ ծառայություններ ստանալիս; հասկամարտությունների կանխում: Պրոֆեսիոնալացումը հասկացվում է որպես իրազեկության մակարդակի բարձրացում, նոր գիտությունների և հմտությունների ձեռքբերում: Սա անհրաժեշտ է, քանի որ Ռուսաստանում արագ զարգանում են իրավունքների պաշտպանության նորմատիվ հիմքերը, պետության գործերում և տեղական ինքնակառավարման իրականացման մեջ բարձրանում է քաղաքացիների մասնակցության մակարդակը: Այսպես, ընդունվում են դաշնային նոր օրենքներ, որոնք իրավունքների և շահերի պաշտպանության նոր հնարավորություններ են ստեղծում, ընդունվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների մատուցման վարչական կանոնակարգեր: 2010թ., օրինակ, ուժի մեջ

մտան «Պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման մասին», «Ռուսաստանի Դաշնությունում դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման մասին», «Պետական և մունիցիպալ ծառայությունների տրամադրման կազմակերպման մասին» դաշնային օրենքները: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կառույցները, այդ թվում՝ հայկական համայնքները, վատ գիտեն և ամբողջովին չեն կիրառում նոր նորմատիվային բազան իրավունքների և շահերի պաշտպանության համար:

12. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Ռուսաստանի հարավի շրջաններում հայկական սփյուռքը տարանջատված է սուբէթնիկ հատկանիշներով, սոցիալական կարգավիճակով, մշակութային մենթալությամբ և այլ հատկանիշներով: Ճգնաժամայինին մոտ այս իրավիճակը պայմանավորված է ավանդույթների կորստով, գործունակ և հայության արդի պահանջներին համապատասխանող ազգային կառույցների և Հայաստանի հետ բավարար կապերի բացակայությամբ, կենցաղային և կիսապաշտոնական վարչական ազգայնականության, ոչ տիտղոսակիր ազգային փոքրամասնությունների հանդեպ որոշակի առումով խտրական քաղաքական գործելակերպի առկայությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ անհրաժեշտ է առաջիկա տարիներին փորձել առանձնացնել կենսականորեն կարևոր հիմնախնդիրները, լուծումներ գտնել հայկական հասարակական կառույցների ինքնակազմակերպման հարցում, մշակել մեխանիզմներ, որոնք կխոչընդոտեն շրջանների հայերի հետագա ուժացմանը և այլն:

Աշխատանքն այս ուղղությամբ անհնար է իրականացնել առանց Հայաստանի Հանրապետության պաշտոնական կամ մասնագիտացված կառույցների և Ռուսաստանի հարավի ազգային այն կառույցների միջև սերտ համագործակցության, որոնք մտավոր և գաղափարաբանական բավականաչափ ներուժ ունեն Ռուսաստանի հարավի հայությանը ներկա ոչ այնքան բարվոք վիճակից դուրս բերելու վերաբերյալ համատեղ ծրագրեր

մշակելու համար: Այդ նույն նպատակով պետք է կապեր հաստատվեն նաև համայնքների հայազգի նշանավոր և ազդեցիկ անձանց հետ: Սփյուռքի հայերի, մասնավորապես՝ Ռուսաստանի հարավի հայերի համար կարևոր կազմակերպչական գործոն կդառնա նրանց ներգրավումը զանազան համագգային ծրագրերին (գործունեություն հայրենադարձության ծրագրեր, Հայ դատի ոլորտում, լոբբիստական գործունեություն, Հայաստանին և ԼՂՀ-ին օգնության ծրագրեր և այլն): Ռուսաստանի հարավի հայ բնակչությունն իրեն պետք է համաշխարհային հայության կարևոր մասնիկն զգա և գիտակցի իր ներուժը:

Ըստ մեզ, Ռուսաստանի հարավի հայկական սփյուռքի վիճակը բարելավելու համար և Հայաստանի Հանրապետության հետ նրա կապերի ամրապնդման ծրագրերի ստեղծմամբ պետք է ձևավորվի աշխատանքային վերլուծական խումբ (վերլուծական կենտրոն)՝ Հայաստանի պետական և հետազոտական կառույցների հետ սերտ համագործակցությամբ: Այդ խմբի (կենտրոնի) աշխատանքային գլխավոր ուղղությունները կարող են լինել.

1. Ռուսաստանի հարավի սփյուռքի հայկական կազմակերպությունների և առանձին ներկայացուցիչների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, դասակարգումը և վերլուծությունը: Հանձնարարականների մշակումը ստացված տեղեկատվության հիման վրա:

2. Սփյուռքի և Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ) մշակութային, կրթական, գիտական, մարզական, տնտեսական, հասարակական-քաղաքական և այլ կապերի ցանցային կազմակերպումը: Նման ցանցային հանրության գործունեությունը՝ պայմանավորված Հայաստանի կամ Սփյուռքի նկատմամբ ծագած մարտահրավերներից, անհրաժեշտ է

համապատասխանորեն ուղղորդել:

3. Հայկական կազմակերպությունների և Հայաստանի համապատասխան կառույցների փոխգործակցության կազմակերպումը հայրենադարձության քաղաքականության իրականացման համատեքստում: Հայրենադարձությունը խրախուսող և դրան աջակցող ծրագրերի մշակումը:

4. Սփյուռքյան կառույցների և Ռուսաստանի հարավի շրջաններում դրանց ազդեցության օգտագործման կազմակերպումը Հայաստանի և Ռուսաստանի հարավի տարածաշրջանային ու տեղական իշխանությունների միջև ավելի սերտ համագործակցություն հաստատելու գործում (ինչն այսօր մասամբ իրագործվում է):

5. Սփյուռքի տեղեկատվական ռեսուրսների օգտագործման կազմակերպումը Հայաստանի և Սփյուռքի գրավիչ կերպարի (իմիջի) ձևավորման և մեր ազգային շահերից բխող տեղեկատվական լոբբինգ իրագործելու համար: Գործընկերային հարաբերությունների հաստատում Ռուսաստանի հարավի ոչ հայկական ՁԼՄ-ի հետ՝ վերջիններիս այնպիսի տեղեկատվության ապահովման նպատակով, որը դրական իմիջ կստեղծի Հայաստանի և Սփյուռքի, ու համապատասխան իմիջ՝ Հայության հանդեպ թշնամաբար տրամադրված երկրների մասին: Այդ նպատակով հայկական հասարակական միավորումներին խորհրդատվական, տեղեկատվական և վերլուծական օգնության իրականացում:

6. Ռուսաստանի հարավի հայկական կառույցների և միավորումների աշխատանքի կազմակերպման բարելավում՝ ներգրավելով այդ գործունեությունում երեխաներին և երիտասարդությանը, լայնորեն կիրառելով նաև տեղեկատվական

տեխնոլոգիաները (օրինակ՝ *SMS*, վիրտուալ ցանցեր): Երեխաների և երիտասարդության համար ազգային կրթության և մշակույթի նոր կառույցների ստեղծման և արդեն առկա կառույցների օժանդակման նախագծերի մշակում:

7. Աջակցություն Ռուսաստանի հարավի հայկական ԶԼՄ-ին տարանջատվածության հաղթահարմանը, տեղեկատվության փոխանակմանը, համազգային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ համաձայնեցված տեղեկատվության տարածմանն ուղղված ջանքերը միավորելու գործում: Ինչպես ճանաչողական, այնպես էլ քարոզչական բնույթի պարբերականների և տեսանյութերի պատրաստում ու տարածում:

Հավելված

Ռուսաստանի հայրավի (Հայրավիին գրաշենյալին օկրուգ (ՀՊՕ) և Հյուսիսկովկասյան գրաշենյալին օկրուգ (ՀԿՂՕ) հայկական կառույցները

Աղյուսակ Ա1

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
1.	Կրասնոդար	«Խուչբար» վշափութային կենտրոն <i>armk.ru</i>	Նախագահ՝ Անդրեյ Անտոլ	Հասցե՝ ք. Կրասնոդար, 350000, Գրինազկիեական փող 87/1 շ. Հեռ./ֆաքս՝ 2627815, 2627850 Էլ. փոստ՝ office@khachkar.ru	Հիմնադրման տարեթիվը՝ 2007թ.
2.	Կրասնոդար	«Նարեի» կենտրոն <i>naire-centr.do.am</i>	Նախագահ՝ Ամալյա Մոսիկյան	Հասցե՝ ք. Կրասնոդար, Կրասնոարելսկայա փող. 53 Հեռ. ՝ (+8918) 3581613	Կենտրոնում գործում է պարի համույթ:
3.	Կրասնոդար	«Համշեն» գիտական, տեղեկատվական-վշափութային կենտրոն <i>hamsheh.narod.ru</i>	Նախագահ՝ Արտավազ Թուրունջյան Տնօրեն՝ Տիգրան Թավադյան	Հասցե՝ Կրասնոդարի երկրամաս, ք. Սոչի, 354000, Պլաստունովայա փող. 142 Հեռ. ՝ (+7 8622) 984278	Երկարատև դարարից հետո 2010թ. սկսեց վիճարկվել «Армянский Вестник» թերթի նրատարակությունը: Լույս է տեսնում հայերեն և ռուսերեն լեզուներով:
4.	Սոչի	Հայկական «Սևան» վիճարկում	Նախագահ՝ Հախր Կոչինյան		
5.	Վոլգոգրայ	«Հայկական սփյուռք» հասարակական կազմակերպություն	Նախագահ՝ Գայանե Քոչարյան	Հասցե՝ ք. Վոլգոգրայ, Տոլկաի փող. 14 Հեռ. ՝ (+ 8442) 426420, 473527 Էլ. փոստ՝ kochar77@mail.ru	

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները	Այլ տեղեկություններ
6.	Դոնի Ռոստով	Դոնի Ռոստովի «Դոնի Նոր Նախիջևանի հայ համայնք» ՀԿ <i>nnao.ru</i>	Նախագահ՝ Հարություն Մուրմալյան	Հասցե՝ ք. Դոնի Ռոստով, 344019, 14-րդ գիծ 74/1 Հեռ. ՝ (+863) 2830681 Էլ. փոստ ՝ nnao@mail.ru	2010թ. « <i>Mnagchi</i> » պորտալի ջանքերով բացվեց համայնքի կայքը:
7.	Դոնի Ռոստով	Դոնի Ռոստովի «Ապագա» հասարակական կազմակերպություն	Նախագահ՝ Ֆրիտախա Ղազարյան	Հեռ. ՝ (+7 863) 2648555, (+7 863) 2648555 Էլ. փոստ ՝ apaga.org@gmail.com	
8.	Դոնի Ռոստով	«Հայագ» մշակութային լուսավորչական հիմնադրամ <i>hayazg.org</i>	Նախագահ՝ Սերգեյ Մայարով	Հասցե՝ ք. Դոնի Ռոստով, 344029, Պլուժնայա փող. 16 Հեռ. ՝ (+863) 2831870 Էլ. փոստ ՝ mailbox@hayazg.info	Հիմնադրման տարեթիվը՝ 2007թ.: «Հայագ» հիմնադրամի ղեկավար մարմինն ընդհանուր խորհուրդն է:
9.	Ստավրոպոլ	Հայկական ազգային-մշակութային «ՆԱԻԴԻ» ինքնավարություն	Նախագահ՝ Ալեքսանդր Հայրսպետյան	Հասցե՝ ք. Ստավրոպոլ, Շահումյան փող. 3 Հեռ. ՝ (+7 8652) 941929	Գործում է կիրակնօրյա դպրոց, պարի համույթ: Լույս է տեսնում «Նախիր» ամսաթերթը:
10.	Լերմոնտով	Ստավրոպոլի «Հայկական ազգային միություն» հասարակական կազմակերպություն	Նախագահ՝ Ռազմիկ Արամյան	Հասցե՝ ք. Լերմոնտով, Չերքեզական խճուղի, 12.	
11.	Պյատիգորսկ	Պյատիգորսկի քաղաքային հայկական ազգային-մշակութային ինքնավարություն	Նախագահ՝ Զոն Լազարյան	Հասցե՝ ք. Պյատիգորսկ, Կիրովի պող. 27ա	
12.	Կիսլովոդսկ	Հայկական ազգային-մշակութային «ԿՈՌՆԱ» ինքնավարություն	Նախագահ՝ Վալերի Գալուստով	Հասցե՝ ք. Կիսլովոդսկ, 357700, Կուստուրովի փող. 109 Հեռ. ՝ (+7 87937) 51800	
13.	Բուդյոնովսկ	«Մուրբ Նաչ» հայ համայնք	Նախագահ՝ Պետրոս Մկրտչյան	Հասցե՝ ք. Բուդյոնովսկ, Անգլիսկու փող. 8	

	Քաղաքը	Համայնքային կառույցի անվանումը	Ղեկավարը	Կանոնադրության տվյալները	Այլ տեղեկություններ
14.	Զելենոկրանկ	«Ուրբատո» հայ համայնք	Նախագահ՝ Միխայիլ Մանվելով	Հասցե՝ ք. Զելենոկրանկ, Մելնիչնայա փող. 36 Էլ. փոստ՝ manvelov.76@mail.ru	
15.	Եսենտուկի	«Արարատ» հասարակա-կան կազմակերպություն	Նախագահ՝ Ռոման Այրիև	Հասցե՝ ք. Եսենտուկի, Վոկզալնայա փող. 33	Գործում է կիրակնօրյա դպրոց, պարի խմբակ: Կազմակերպությունն ունի նաև երիտասարդական թև: «Արարատ» կազմակերպության ջանքերով կառուցվել է «Մույր Հոիվախե» եկեղեցին: 2010թ. հունիսին տեղի է ունեցել եկեղեցու ծծման արարողությունը:
16.	ՀՕՀ-Ալանիա ք.Վլադիկավկազ	Ազգային-վշափոքային «Էրեբունի» մլավիքում	Նախագահ՝ Արբերտ Շամիլյանց	Հասցե՝ ք. Վլադիկավկազ, Գ.Բանի փող. 16 Հեռ.՝ (+ 8672) 537899 Էլ. փոստ՝ mail@erby.ru	Հիմնադրման տարեթիվը՝ 1989թ.: «Էրեբունի» միավորման ընդգրկված է հանրապետական միջազգային հասարակական շարժման մեջ:

«Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ) կառույցի մասնաճյուղերը

Երկիրը, քաղաքը	Կառույցի լրիվ անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները
Վոլգոգրադ	ՌՀՄ Վոլգոգրադի մասնաճյուղ <i>armenia34.ru</i>	Արման Մկրտչյան	Հասցե՝ 400012, ք. Վոլգոգրադ, Նևսկայա փող. 14 Հեռ. 8 (8442) 32 14 86 Էլ. փոստ՝ arman-tad@mail.ru
Կրասնոդար	ՌՀՄ Կրասնոդարի մասնաճյուղ	Ռազվիկ Գևորգյան	Հասցե՝ 350000, ք. Կրասնոդար, Կրասնոարմեյսկայա փող., 53 շ. Հեռ. 8 (8612) 53 12 72 Էլ. փոստ՝ alsari@yandex.ru
Պյատիգորսկ	ՌՀՄ Ստավրոպոլի մասնաճյուղ	Արսյոմ Աբգումանյան	Հասցե՝ Պյատիգորսկ 357 500, Մալգիի փող, 24 Հեռ. (88793) 39 20 57 Էլ. փոստ՝ stavrosar2@kmv.ru
Եսենտուկի	ՌՀՄ Ստավրոպոլի մասնաճյուղ		Հասցե՝ ք. Եսենտուկի Ֆրուելեի փող. 13/4ա
Ադիգեայի Հանրապետություն ք. Մայկոպ	ՌՀՄ Ադիգեայի մասնաճյուղ	Ռազվիկ Թեքնաջյան	Հասցե՝ 375008, ք. Մայկոպ, Նաբեբեժնայա 2 փող., 8շ. Հեռ. 8(87722) 4670
Դաղստանի Հանրապետություն ք. Գերբենը	ՌՀՄ Դաղստանի մասնաճյուղ	Վիկտոր Դանիելյան	Հասցե՝ ք. Դերբենը, Կոմունարովի փող.6 շ., բն. 1 Հեռ./Ֆաքս՝ 8(87240) 2-57-42
Հյուսիսային Օսիայի-Ալանիայի Հանրապետություն ք. Մոզդոկ	ՌՀՄ Օսիայի մասնաճյուղ	Ռաֆայել Վարդանով	Հասցե՝ 363750, ք. Մոզդոկ, Անգիևսկու փող. 63շ. Հեռ./Ֆաքս՝ (86736) 41633, 34090

	Երկիրը, քաղաքը	Կառույցի լրիվ անվանումը	Ղեկավարը	Կոնտակտային տվյալները
8.	Կարադղինա -Բալկան- լիսյի Հանրապետու- թյան ք. Նալչիկ	ՌՀՄ Կարադղինա - Բալկանիայի մասնաճյուղ	Ժիրայր Խոնեպան	Հասցե՝ 360017, ք. Նալչիկ, Լեկինի պող. 17, բն. 109 Հեռ.՝ 8 (8662) 42 29 72 Ֆաքս՝ 8 (8662) 42 46 20 Էլ. փոստ՝ jirair@inbox.ru
9.	Կարաչանո-Չերքե- վիայի Հանրապետու- թյան ք. Չերքեզկ	ՌՀՄ Կարաչանո- Չերքեզիայի մասնաճյուղ	Վահագն Գևորգյան	Հասցե՝ ք. Չերքեզկ, Պարոնիզանովսկայա փող. 32. բն. 46 Հեռ.՝ 8(87922) 43198

Հարության մտավոր ներուժը Հարավային դաշնային օկրուգում. տարածքային ցանկ

Ռուստովի մարզ			
1.	Իգոր Աբոյան	1960, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Բժիշկ, Բ.գ.դ., պրոֆեսոր Դոնի Ուրուրդների ատոցիացիայի փոխնախագահ, ՌԴՎ աստատակավոր բժիշկ
2.	Միխայիլ Աբրամյան	1965, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Հաշվադրական տեխնիկայի և կիրառական մաթեմատիկայի մասնագետ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, ՀՂՀ րոգենտ
3.	Կարպ Աթոյան	1920, գ. Չախտիր, Մյասնկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Վիրաբույժ, առողջապահության կազմակերպիչ Մասնակցել է Հայրենական պատերազմին: 1954-ից Ցեխնակի շրջանի կենտրոնական հիվանդանոցի գլխավոր բժիշկ և վիրաբույժ, 1971-ից Դոնի Ռոստովի, Սալսկային հիվանդանոցի գլխավոր բժիշկ: 1988-ից Դոնի Ռոստովի վի գլխավոր ՈՒ հիվանդանոցի Բժշկական հաշվառման և վիճակագրության բաժնի վարիչ
4.	Գենադի Այդինով	1944, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Հիմնականում աշխատել է Դոնի Ռոստովում, կարճ ժամանակ Նալչիկում: 1997ից Դոնի Ռոստովի Մանիստրա-վարակարանական կարգավորման կենտրոնի գլխավոր բժիշկն է: Միաժամանակ դավանարում է Ռոստովի պետական բժշկական ինստիտուտում

5.	Գրիգորի Արծաթբանյան	1953, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Ճարտարապետ	1975-ից աշխատում է որպես Ճարտարապետ: Դոնի Ռոստովի Լենինյան շրջանի գլխավոր ճարտարապետ
6.	Գեորգի Բարդիկով	1971, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Բժիշկ, լրագրող	Աշխատում է Ռոստովի շրջանային N2 հիվանդանոցի նեֆրոուրոլոգիական կենտրոնում, 1999-ից համոլես է գտլիս հրատարակումներով «Ростовская Эпекронт-Ная Газета» թերթում: 2002-ից նույն թերթի Բժշկություն և առողջապահության բաժնի վարիչ, Էկոլոգիայի և մարդու կենսազործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ
7.	Մինաս Բարդիկով	1936, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Բժիշկ, վիրաբույժ, ք.դ.թ., ՈՐԴ վաստակավոր բժիշկ	Ապրում է Դոնի Ռոստովում: 1961-ից աշխատել է Ռոստովի բժշկական համալսարանում, 1988-ից <i>МСЧ АО «РСМ»</i> գլխավոր բժշկի վիրաբուժության գծով տեղակալ: Էկոլոգիայի և մարդու կենսագործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի իսկանական անդամ
8.	Գրիգորի Բոյազլին	1943, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Տնտեսագետ, ինժեոյրնախնային տեխնոլոգիաների մասնագետ	Ռոստատանի բնագիտական ակադեմիայի իսկական անդամ, Ռոստովի պենտական տնտեսագիտական համալսարանի Ինժեոյր-մատիզագիայի ֆակուլտետի ղեկավար

9.	Իլյա Բուզալյան	1943, ք. Ղոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂՕ	Տնտեսագետ, ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետ	Ռուսաստանի բնագիտական ակադեմիայի իսկական անդամ, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկա և համալսարանի ֆակուլտետի ղեկավար
10.	Լևոնիդ Գրիգորյան	1929, ք. Ղոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂՕ	Բանաստեղծ	1954-1989թթ. Ռոստովի բժշկական համալսարանում դասավանդել է լատիներեն, 1991-ից Ռուսական գրողների միության Ռոստովի բաժանմունքի անդամ է
11.	Կամո Ղեմիրճյան	1928, ք. Ղոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂՕ	Էլեկտրատեխնիկ, տեխ.գ.դ.	Հիմնական գործունեությունը ծավալել է Լենինգրադում: 1984-ից ԽՍՀՄ, իսկ 1991-ից Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է
12.	Նատալյա Զոնիբալյան	1955, ք. Բատալյակ, Ռոստովի մարզ, ՀՂՕ	Ճարտարապետ, թատերագետ	10 տարի աշխատել է որպես ճարտարապետ, Ռոստովի բուհերում դասավանդել է Թատրոնի պատմություն, Սցենոգրաֆիայի պատմություն, Արվեստի պատմություն: Հանդես է եկել երաժարակումներով: Աշխատում է «Сельская школа» թեթի խմբագրությունում
13.	Գրիգորի Ժամբուկ	1919, ք. Ղոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂՕ	Բժիշկ, առողջապահության կազմակերպիչ, կենս.գ.թ.	1955-ից բժիշկ, ավագ գիտաշխատող: Ակտիվ գործունեություն է ծավալել Ղոնի Ռոստովում, աշխատել Ռոստովի պետական բժշկական համալսարանում

14.	Նիկոլայ Բրանիպյան	1950, ք.Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Կոմպոզիտոր, Ռուսաստանի վաստակավոր արտիստ	1973-ից Ռոստովի պրվեստի ուսումնարանում էստրադային-ջազային բաժանումում վարում է դաշնամուրային ջութի դասընթացը
15.	Հովհաննես Լուսեճեն	1952, ք.Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Նկարիչ	Աշխատանքները ցուցադրվել են Դանի Ռոստովի, Տազանոբի տարբեր ցուցադրահներում, ինչպես նաև Լոնդոնում, Շոտլանդիայում, Վերմանիայում: Աշխատանքները գտնվում են տարբեր երկրների ցուցադրահներում և անհատական հավաքածուներում
16.	Գրիգորի Խաչթյանացյան	1962, գ. Չալտի, Մյանիկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Բժիշկի, ՌՂ առողջապահության վաստակավոր գործիչ	Հիմնական գործունեությունը ծավալել է Դանի Ռոստովում
17.	Խաչատուր Խաչթյանացյան	1945, գ. Չալտի, Մյանիկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Ռեժիսոր	ՌՂ թատերական գործիչների միության անդամ, Մյանիկյանի ժողովրդական դրամատիկական թատրոնի ռեժիսոր
18.	Ֆեոդոր Խաչատուրյան	1943, ք.Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Իժմենք, պետական գործիչ, տեխ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի դրամիկ ինդիլորների ակադեմիայի թղթակից անդամ	Զբաղեցրել է տարբեր պաշտոններ: Ռոստովի շրջանի օրենսդիր ժողովի պատգամավոր
19.	Աբգար Խաչաբազալիյան	1929, ք.Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀՂԾ	Բժիշկի, հիգիենիստ, Բ.գ.դ., պրոֆեսոր	Աշխատել է Դանի Ռոստովում, Հյուսիսային Կովկասում: Ռոստովի պետական բժշկական հաստատության շիֆինայի սովորույնի պրոֆեսոր

20.	Քնարիկ Նարտավարական	1953, գ. Չալտիր, Սյաննիկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Բանաստեղծուհի, հրավարակախոս, հասարակական գործիչ	Աշխատել է շրջանային դպրոցներում՝ որպես ուսուցչուհի: Ռոստովի շրջանային գիտական գրադարանի գիտաշխատող
21.	Ֆլորա Ներսիսյան	1924, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Բժիշկ, ռենտգենոլոգ, Բ.Գ.Պ.	Գործունեությունը ծավալել է Երևանում
22.	Գրիգոր Նուրդյալան	1947, գ. Չալտիր, Սյաննիկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Երաժիշտ, պրոֆեսոր, ՌԻՂ արվեստի վաստակավոր գործիչ	Ռոստովի ֆիլիարմենիայի «Դոն» ռուսական ժողովրդական գործիչների նվագախմբի գլխավոր դիրիժոր, գեղարվեստական ղեկավար, Դոնի հայերի «Անի» անսամբլի ղեկավար
23.	Սահակ Կարապետյան	1960, Եգորիզկի շրջան, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Իրավաբան, պետական գործիչ, ի.գ.թ.	Աշխատել է Ռոստովում՝ որպես իրավաբան, գրադեցրել շրջանային նշանակության ղեկավար պաշտոն: 1995-1999թթ. ՌԴ Պետդրամայի պատգամավոր: 2000-ից՝ ՌԴ գլխավոր դատախազի ավագ օգնական
24.	Նիկոլայ Կորզանով	1925, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Բժիշկ, Բ.Գ.թ.	1971-ից Ռոստովի պետական բժշկական համալսարանի մասնագիտացված հիվանդությունների դասընթացի (2001-ից՝ ամբիոն) վարիչ
25.	Տարաս Կուրուպան	1921, գ. Մեծ Սալա, Սյաննիկյանի շրջան, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Բժիշկ, գինեկուրոգ	Մասնակցել է Հայրենական պատերազմին, կարճ ժամանակ աշխատել է Մոնտրիլայում, Հարավային Ռուսաստանում, մասնավորապես՝ Տագանրոգում
26.	Անդրեյ Հակոբյանց	1963, ք. Դոնի Ռոստով, Ռոստովի մարզ, ՀԴՕ	Ծրագրավորող, գործարար	Բազմաթիվ ծրագրերի ու նախագծերի ղեկավար և իրագործող

27.	Արամ Հայրապետով	1950, ք. Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Բժիշկ, ատամնաբույժ, ՌԴ վաստակավոր բժիշկ	Աշխատել է Ռոստովի շրջանի տարբեր ինակակալներում
28.	Լյուդվիգ Հարությունով	1925, ք. Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Աշխարհագրագետ	Աշխատել է ձւ. Կորկեպուրմ: 1999-ից աշխատում է ՌԴ ՊՆ Կենտրոնական գլխահետազոտական ինստիտուտում
29.	Յուրի Հովհաննիսյան	1933, ք. Դանի Ռոստով, Ռոստովի մարզ, շՂՕ	Ֆիզիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր	Նախկին ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, Ռուսաստանի ԳԱ իսկական անդամ, Ատոմային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ք. Դուբնա) Ատոմային ռեակցիայի լաբորատորիայի տնօրեն: ԽՍՀՄ պետական մրցանակի և բազմաթիվ այլ մրցանակների դափնեկիր
